Էջմիածին



ՌՆԸ
ԺԶ ՏԱՐԻ

Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1959

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հավերժական Սուրբ էջմիածին	3
ԱՄԵՆՅԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հարավային Ամերիկայի Հայոց նորընտիր Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանին	6
Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պարոն Անաստաս Քոչինյանին	8
Ներին թեմերի ներկայացուցչական ժողովի նախագահության ներկայացուցիչը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի նախագահ պր. Սարգիս Գասպարյանին	9
Քաղվածքներ Գերագույն Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից	10
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	12
Պաշտոնական հաղորդագրություն Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի պեղումների մասին	14
Եկեղեցական Սահմանադրության նախագծի բննարկումը Մայր Աթոռում	15
Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռում	27
Գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյան	31
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ— Ծաղկաբեր Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյան	33
Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ— Հայկական նոտագրության սիստեմների մասին	41
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Նոր Գետկա վանք կամ Գոշավանք	46
Ա. ԵՐԵՄՅԱՆ— Էջեր միջնադարյան հայ նկարչությունից	54
Մի նկարչի երջանիկ ճանապարհը իր Հայրենի երկրին	58
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"
Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան. 1959 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի մայիսի ճամարում տպագրվել է պաշտոնական ճաղորդագրություն այն մասին, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերակառուցման առթիվ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը, Վեճափառ Հայրապետի բարեճաճ առտնությամբ, ճարտարապետ Ալ. Սաճինյանի գլխավորությամբ, պեղումներ կատարեց Ս. Սեղանի բեմի տակ, և ապրիլի 8-ին, տեղում ճրավիրված ճնագետների և ճարտարապետների ճաննաժողովը, ճնելով պեղումների արդյունքները, ճաստատեց, որ ճայտնաբերվել են՝

1. Ե դարում Վաճան Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի խարիսխները, բեմը և վեմ քարերը, որոնք պանպանված են անաղարտ վիճակում:

2. Ե դարի բեմի որոշ սրբատաշ քարերի վրա ճնագույն ոռմանկարների մնացորդներ:

3. Ե դարի Ս. Սեղանի կառուցվածքի ներսում՝ առավել ճնագույն խորանի պատեր, որոնք կարող են լիներ կա՛մ Ս. Գրիգոր Լուսավորչի օրով 301 թվականին կառուցված խորանի, և կա՛մ թերևս առավել ճնագույն շրջանի մի սրբավայրի կրակարանի մնացորդները:

Պեղումների ժամանակ ճայտնաբերվել է նաև ուրարտական ժամանակաշրջանի (Զ—Թ դար Ք. ա.) սրբատաշ բազալտից ճղկված մի մեծ կոթող:

Մայր Տաճարի Սեղանի տակ կատարված պեղումների արդյունքները ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ ԱՌԱՋ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ, ԴԵՌԵՎՍ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Հի՞ն, շատ ճի՞ն է դարերի ընդերքից բարձրացող Ս. Էջմիածնի սրբավայրի և Տաճարի պատմությունը: Տասնյոթ դարերի ճնություն ունեցող Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որպես պատմական ճոյակապ կոթող, Քրիստոնեական Ընդճանուր եկեղեցու առաջին ճուշարձաններից մեկն է ողջ աշխարճում, և իր պատկառելի ճնությամբ, ճրաշապատում սկզբնավորությամբ, ճայկական դասական ճարտարապետությամբ ու ճայ ժողովրդի կյանքում իր կատարած ազգային-եկեղեցական և մշակութային պատմական դերով, ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ է ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԵՆԱՆՎԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԸ: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է բնական և քաղաքական փոթորիկների պատճառած ավերածություններին, սակայն, նորից ու նորից ճայ ժողովրդի ճավատն ու բարեպաշտությունը կյանքի են կոչել այն, և Ս. Էջմիածինը, միշտ, անցյալի մշուշից, դարերի մաշումից, ժամանակների ճողմաճարումից վերանորոգվել է ու վերակենդանացել:

Անա այսօր ևս նա՝ Ս. Էջմիածինը, բազմել է Արարատյան դաշտի կենտրոնում, սպիտակափառ Մասիսների ճայվածքի տակ, ու կմնա կանգուն, քանի այդ պատմական դաշտավայրում կապրի ճայ ժողովուրդը:

Մեր Հայրենի հողը պատմական հուշարձանների, խաչքարերի մի սուրբ աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր կոտր հողի, քարի, ժայռի վրա, հավերժացել է հայ ժողովրդի մտքի, հոգու, սրտի, ձեռքի շնորհների գեղեցկությունն ու խաղցությունը: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը պատմական և սուրբ այդ կոթողներից, նյութական գոհարներից հնագույնն է:

Ըստ Ագաթանգեղոսի վկայության, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցումը տեղի է ունեցել Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն, Տրդատ Գ թագավորի օրով, 301—303 թվականներին. «Հրամայեցաւ նմա (Լուսաւորչի) ի տեսլացոյց հրեշտակէն, եթէ շինեսցիր զՏաճար անուանն Աստուծոյ որ ցուցաւ ի տեղւոջն՝ ուր սիւնն հրեղէն ունէր զոսկի խարիսխն»:

Մայր Տաճարի կառուցումից ութսուն տարի հետո, Դ դարի 80-ական թվականներին, տեղի է ունեցել Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի առաջին վերանորոգումը, Շապուհ Բ-ի Հայաստանում կատարած ավերածություններից հետո, ինչպես վկայում է Փավստոս Բյուզանդը:

480-ական թվականներին, Մայր Տաճարի առաջին վերանորոգումից 100 տարի հետո, Վահան Մամիկոնյանը «եկեալ հասաւէր ի Վաղարշապատ քաղաք... կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն Կաթողիկէի... զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ» (Ղազար Փարպեցի):

1957—1959 թվականներին, Մայր Տաճարի ներսում կատարված պեղումները ցույց տվեցին, որ Մայր Տաճարի այժմյան կառուցվածքի տակ գոյություն ունեն, Տաճարի ներկա հորինվածքից տարբերվող, մեկ այլ, առավել հնագույն հորինվածք ունեցող շենքի մնացորդներ, խարիսխներ:

«Ճարտարապետական-շինարարական այդ նյութերը լիովին հաստատում են Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ ինչպես Ագաթանգեղոսի, այնպես էլ Ղազար Փարպեցու հաղորդած վկայությունների իսկությունը» և «որոշակի լույս են սփռում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հնության, նրա նախնական ձևի և կրած հետագա ձևափոխությունների լուսաբանման վրա» և «մեծագույն նշանակություն ունեն Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական-շինարարական արվեստի մի շարք արմատական հարցերի ճշմարտացի ըմբռնման համար» (Ալ. Սահինյան, «Նոր նյութեր Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ», «Էջմիածին», 1958 թ., № 12, էջ 67), ինչպես նաև Ս. Էջմիածնի սրբավայրի հնության, որպես երեք հազարամյակ հնություն ունեցող աղոթավայրի և որպես մշակութային-կրոնական կենտրոնի վրա: Եվ սա ավելի քան երեք հազար տարիներ, Արարատյան դաշտում, Հայ հողի սրտի վրա, հայ ժողովրդի սուրբ ձեռքերով, քար առ քար, կամար առ կամար բարձրացել է Ս. Էջմիածինը, նախ որպես աղոթքի տուն, սրբավայր հեթանոս հայության, և ապա որպես «ՏԱՃԱՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՏՈՒՆ աղօթից խընդրուածոց ամենայն հաւատացելոց և Աթոռ Քահանայութեան» (Ագաթանգեղոս), Քրիստոնյա հայության համար:

Ս. Էջմիածինը եղել է հայ հոգու, մտքի, սրտի հավերժական խանձարուրը: Ս. Էջմիածինը հայ հոգու բռիչքն է, քարեղեն աղոթք ու մրմունջ հայ հավատավոր հոգու՝ դեպի երկինք, դեպի Աստված իր խոյանքի մեջ արձանացած:

Ո՛չ մի բանով պայմանավոր չի եղել հայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի Ս. Էջմիածինը: Եվ երբե՛ք պատահականություն էլ չէ այն, որ հայ ժողովուրդը, ազգային հպարտության ամենամաքուր զգացմունքներով, աչքի լույսի պես պահել ու պահպանել է Ս. Էջմիածինը որպես նշխարք, որպես նվիրական մասունք, որպես աղբյուր լույսի և հույսի, որպես հավատի ամրոց և հոգեկան կամուրջ, որպես տեսիլք: Հայությունը ամբողջ, ազգովին գլուխ է խոնարհել այդ միակ, համազգային հավիտենական ու հավերժական սուրբ հաստատության վեհության առաջ: Դարեր շարունակ Ս. Էջմիածնի լույսը իր սուրբ խորհրդով հառագայթել է հայության սրտում, հայ ժողովուրդը նրանով է հերշնվել և նրանից է ստացել իր հոգևոր, ազգային սնունդը:

«Սո՛ւրբ և աստուածայի՛ն, քրիստոսակերտ և լուսանկար ամենից Հայոց Աթոռս Էջմիածին... մայր ամենայն եկեղեցեաց,— գրում է Սիմեոն Երևանցին, և ապա հարցնում.

«— Զի՞նչ ելիք տեսանել յերկիրս յայս, ե կամ զի՞նչ կամիք իմանալ զմայրս մեր Ս. Էջմիածին. տո՛ւն իմն մարդկան ձեռագործ:

— Ո՛չ:

— Եւ կամ հասարակ եկեղեցի՞ իմն ի մարդկային հարտարութենէ և ի յերկրային նիւթոյ կազմեցեալ:

— Ո՛չ:

— Եւ կամ զի՞նչ ելիք տեսանել և իմանալ ի դաշտս Վաղարշապատու. զգեղեցիկ իմն շինուած, և կամ զնկարակերտ իմն ազնիւ ըստ մարմնականի և ըստ երևելոյ տեսութեան միայն:

Այլ զի՞նչ եկիք տեսանել և իմանալ զհոգևոր և զաստուածային իմն կերտուած, և

կամ զխորհրդաւոր երկին իմն ի յերկրի ե-
ւեալ:

— Այո, ասեմ ձեզ, առաւել ևս քան զեր-
կին...:

Էջմիածին՝ տաճար փոքրագոյն՝ քան զեր-
կինս մեծագոյն:

Էջմիածին՝ զարդ եկեղեցեաց, պարծանք
Հայաստանեայց, արեգակն պայծառագոյն և
լուսատրող տանս Արամեան:

Էջմիածին՝ ծնող հոգևոր, մայր շնորհա-
սուն, համալսարան իմաստութեան, վարժա-
րան գիտնոց և նիւր քարոզողացն»:

Վեհափառ Հայրապետը, որն անհուն սի-
րով սիրում է Ս. Էջմիածինը, պաշտում է Ս.
Էջմիածնի «քարերու խորհուրդը», Ս. Էջ-
միածնին նվիրված Իր հետևյալ սրտագին
խոսքերի մեջ խտացրել է ողջ հայ ժողովուր-
դի զգացմունքն ու սերը դեպի Մայր Աթոռ
Ս. Էջմիածինը.

«Դարերը, որ եկեր են ու անցեր, ավելի ու
ավելի ամրացուցեր են հիմքերը այս Ս.
Տաճարին: Ինչքա՜ն ճշմարտորեն համա-
ձայն է պատմական իրողության՝ մեծ բա-
նաստեղծին զգացումը՝

«Դարեր եկան, դարեր անցան,
Էջմիածի՛ն.
Քո հիմն անշարժ ու անսասան,
Էջմիածի՛ն»:

Ս. Էջմիածնի Մայր եկեղեցին իրավ վկան
է մեր բազմադարյան պատմության, մեր
սուրբ հավատքի զորության, մեր ժողովրդի
շինարար հանճարին և ապրելու անհկուն
կամքին:

Այս քարերը մեր սուրբ հավատքի վեմը
կնանդիսանան և խարիսխը մեր ժողովուրդի
կյանքին: Այս քարերով հյուսված է մեր
պատմությունը, այս քարերու վրա հաստ-
տված է մեր Ազգը: Լուռ բվացող այս
քարերը կենդանի են և մեզի կխոսին դարե-
ու խորքեն. դում բոլորդ ականջ դրեք ա-
նոնց քար լռության:

Եվ անա այս հազարամյա սրբատաշ քա-
ռերու վրա կանգնած ենք մենք՝ այսօրվան-
ներս: Մենք ենք տերը և պահապանը այս
քարերուն: Կանգնած անոնց վրա, մենք պի-
տի չշարժինք և պիտի չտկարանանք երբեք,
այլ աներկյուղ ու համառձակ, սրբու-
թյամբ պիտի պահենք, պահպանենք մեզի
հանձնված այս սրբազան ավանդը, ուխտե-
լով մեր կյանքի զորձերով հավատարիմ
մնալ անոր պատգամին: Մեր հավատքին.
մեր մտորումներուն, մեր հույզերուն, մեր
երազներուն, մեր կյանքին ստուգությունն
են այս քարերը: Անոնց վրա պիտի հիմնենք
ու պիտի կառուցենք մեր նոր կյանքը ու
պիտի կերտենք մեր պայծառ ապագան:

Էջմիածինը սակայն անցյալ չէ միայն.
ան է նաև ներկա և մեր ապագան: Կենդանի
է ան ու մշտանորոգ: Ս. Էջմիածինը միշտ
կբաշխվի ու չի նվազիր, ինչքան բաշխվի.
այնքան կշատնա, ինչքան լույս սփռե՝ այն-
քան կշողա: Դարերը կուգան, դարերը
կանցնին, ան կբարձրանա, կլուսավորե ու
կներշնչե միշտ, կյանք տալով կապրի...»:

Այսօր էլ կանգուն է Ս. Էջմիածինը ու
կմնա հավիտյան, «որպես միածույլ վեմը
հայության հավատքին, մնացեր է ու կմնա
անսասան, Արարատի պես, ու կպայծառա-
նա հավետ՝ ծոցին մեջ մեր վերածաղկող
Հայրենիքի, հովանիին տակ հայ հարազատ
պետության ու մեծաշնորհ ջանքերովը մեր
առաքելական հայրապետներուն», որոնց ար-
ժանավոր շառավիղ է Նորին Ս. Օծություն
Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապե-
տը, որի կյանքի նպատակն է Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի պայծառացումը:

Հավիտենական, հավերժական է Ս. Էջմիա-
ծինը, ինչպես հայ ժողովուրդն ու Հայրենի
սրբազան հողը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏՅԱՆԻՆ

ՎԱՂԴԷՆ ԵՒՈՒԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՕՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՂԴԱԿԱՆ ԵՒ ԱՌԻՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Կողջունեմ զՁեզ իբրև Հայաստանյայց եկեղեցվո անձնուրաց սպասավոր. որ երկար տարիներե ի վեր ծառայած եք Երուսաղեմա մեր Ս. Աթոռին, Ձեզ հատկանշող եվիրումով, իմաստությամբ ու կորովով:

Կողջունեմ զՁեզ նաև իբրև հարազատ ու հավատարիմ որդի Մայր Աթոռիս, և հույժ երջանիկ եմ, որ Փրկչի Իշխան Ս. Սեղանի առաջ Ձեր ուխտը կատարելով և Մեր ձեռնադրությամբ, արժանացած եպիսկոպոսական բարձր շնորհին, ու այժմ հոգևոր իշխանության լրությամբ, պատրաստ եք Ձեր առաքելությունը շարունակելու Տիրոջ այգիին՝ մեր ժողովուրդի ծոցին մեջ:

Մենք վստահ ենք, թե այժմ առավել ոգեշնչված և հոգևոր իմացական նոր ուժերով զեղուն, պիտի երթաք մխիթարելու և առաջնորդելու հայ հավատացյալ հոգիները, որոնք ծարավի են Ս. Ավետարանի խոսքին, և հուսացյալ սրտով կսպասեն սիրո, միության և խաղաղության պատգամաբերիդ:

Աստիսի սուրբ առաքելությամբ կոչնորհեմ զՁեզ Հարավային Ամերիկա՝ իբրև Ամենայն Հայոց Հայրապետության պատվիրակ, որպեսզի մնալով այնտեղ, հոգևոր սնունդ բաշխեք Մեր բոլոր պանդուխտ զավակներուն, որոնք նապրին ցրված Արժանտինի, Բրազիլիայի և Ուրուգվայի ճեռավոր ափերուն վրա, և գործակցաբար ազգային-եկեղեցական իշխանությանց, առավել շենցրնեք եկեղեցին և առավել ծաղկեցնեք հայ կրթական, մշակութային, երիտասարդական հաստատություններն ու կազմակերպությունները: Վասն որո «ՈՒՆԻՑԻՍ ՕՐԻՆԱԿ ՈՂՋՄՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՑՆ, ԶՈՐՍ ՅԻՆԷՆ ԼՈՒԱՐ, ՀԱՒԱՏՈՎՔ ԵՒ ՍԻՐՈՎ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ: ԶԲԱՐԻՈՔ ԱՒԱՆԴՆ ՊԱՀԵՍՔԻՐ Ի ՁԵՌՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ Ի ՄԵՋ ԲՆԱԿԵԼՈՅ» (Բ Տիմ. Ա 13—14):

Սուրբ իղձերով տոգորված, Մենք կոչ կրենք Հարավային Ամերիկայի երկիրներու հայոց թեմական խորհուրդներուն, հոգևոր դասին, ազգային կազմակերպություններուն, հայ մամուլին և համայն հայ հավատացյալ և սիրելյալ մեր ժողովրդին, որպեսզի բոլորը անխտիր, սիրով միաբան, համախմբվին Զերդ Սրբազնության շուրջ ու զորավիգ կանգնին Զեզ՝ ի շինություն հայ հոգևոր կյանքին ու համրապնդումն և ի պաշտպանություն Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի գերագույն շահերուն:

Պատվեր կուտանք Զեզ, սիրելի՛ Սրբազան, որ իբրև Մեր ներկայացուցիչը, անձանձրույթ հրավեր կարդամ Մեր բոլոր հավատացյալ զավակներուն, որ անոնք ապրին ներքնապես խաղաղ և միաբան, Հայ Եկեղեցվո հովանիին և Ս. Էջմիածնի օրհնության ներքև, հավատարիմ իրենց երկիրներու օրենքներուն՝ իբրև շինարար քաղաքացիներ:

Տարե՛ք նաև Զեզ հետ Մեր ողջույնը և օրհնությունը պետությանց բարեխնամ ու ասպվածասեր ղեկավարներուն և նյութական ազնիվ ժողովուրդներուն, Մեր ամենաջերմ բարեմաղթություններով հանդերձ:

Ջերմ սրտով ու համբերատար հարատևությամբ Ձեր հայրական խոսքը ուղղեցե՛ք միշտ հայ նոր սերունդին, և ոչինչ մի՛ խնայեք՝ որպեսզի վառ մնա անոր մեջ մեր նախնյաց լույս հավատքը, որպեսզի անաղարտ պահվի հայու հոգին ու բարձր հնչե ամենուրեք մեր մայրենի քաղցր լեզուն: Աստվածաշունչ Գիրքը Սուրբ, մեր նահատակ ժողովուրդի պատմության ոգին և մեր վերածնած Մայր Հողի ձայնը թող ըլլան Զեզ ներշնչման աղբյուր և առաջնորդ:

Շնորհավորելով Ձեր նոր և մեծապես պատասխանատու պաշտոնը, կոչնենք զՁեզ ամենասուրբ զգացումներով և կմաղթենք Զեզ լիակատար հաջողություն Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր առաքելության մեջ:

«ԱՃԵՑԷՔ ՇՆՈՐՀՕՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՍՈՒՍՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ» (Բ Պետր. Գ 18):

Հայրական սիրո ողջույն և հայրապետական օրհնություն Ձերդ Սրբազնության և Հարավային Ամերիկայի թեմական իշխանութեանց, հոգևոր դասին, ազգային-եկեղեցական կազմակերպությանց և համայն հայ հավատացյալ ժողովուրդին:

«ՈՂՋՈՅՆ ՏԱՋԻՔ ՄԻՄԵԱՆՑ Ի ՀԱՄԲՈՅՐ ՍՐԲՈՒԹԵԱՆ: ԵԿԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԸՆԴ ԶԵՋ ԱՄԵՆԵՍԻՆ ՈՐ ԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ. ԱՄԷՆ»:

ԳԱՅԻԱՆԷ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-12-ն մայիսի
1959 Փրկչական տարի,
և ի տաւմարիս Հայոց ՌՆԸ.
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ՆՈՐԻՆ Ս. ԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

Ապրիլի 6-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Կառավարական Տան մեջ այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանին:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Սարգիս Գասպարյանը և խորհրդի նախագահի տեղակալ պր. Սուրեն Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանի միջև տեղի ունեցավ զրույց Եկեղեցու գործունեության հետ կապված հարցերի շուրջ:

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, հրաժեշտ առավ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանից:

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԿՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՆ ԺԱՄԱՆԵԼ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ։

ԱՅՍ ԱՌԹԻՎ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՋԵՐՄ ՈՂՋՈՒՅՆՆ ԵՆ ՀՂՈՒՄ ՋԵՋ. ԻԲՐԵՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԵՎ ՀԱՆՔԻՆ ՋԵՋ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ԱՅՆ ԴՅՈՒՐՈՒԹՅԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՐ ԸՆՋԵՌՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋԸ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ՝ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՐՑԵՐԸ։

ՄԵՆՔ ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑՒՆ ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ, ԱՅՍՈՒՀԵՏ ԿՍ ՀԱՎԱՏԱՐՈՒՄ ԿՄՆԱ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐԻՆ, ԱՄԵՆ ՋԱՆՔ ՈՒ ԵՌԱՆԴ Ի ԳՈՐԾ ԴՆԵԼՈՎ ՄԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԾԱՂԿՄԱՆ ՈՒ ՎԵՐԵԼՔԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԻՐՈ ԵՎ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՆՎԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ։

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

13 ապրիլի 1958 թ.
ԷՋՄԻԱՆԻՆ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1959 Թ. ՄԱՐՏԻ 24-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում քննության առնվեց Վեհափառ Հայրապետի կողմից ներկայացված Աստվածաշնչի աշխարհաբար (արևելահայերեն) թարգմանության նախապատրաստական աշխատանքներն սկսելու առաջարկը։

1956 թվականի մարտ ամսում Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովի որոշմամբ, 1965 թվականին նշվելու է Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 300-ամյակը և այդ առթիվ հրատարակվելու է Աստվածաշնչի աշխարհաբար (արևմտահայերեն և արևելահայերեն) պաշտոնական թարգմանությունը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս առթիվ որոշում ընդունեց հանձնարարել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյանին՝ կազմել և Գերագույն Հոգևոր Խորհրդին ներկայացնել Աստվածաշնչի արևելահայերեն լեզվով թարգմանության կենտրոնական հանձնաժողով հրավիրելու նախագիծը։

1959 Թ. ԱՊՐԻԼԻ 8-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր այսօրվա նիստում գոհունակությամբ լսեց Վեհափառ Հայրապետի հաղորդումը Մայր Աթոռի Ավագ Սեղանի տակ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից կատարված հնագիտական պեղումների արդյունքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս առթիվ որոշեց կազմել պաշտոնական հաղորդագրություն պեղումների արդյունքների մասին և Մայր Աթոռի դիվանի կողմից ուղարկել բոլոր թեմերին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում որոշեց ապրիլ ամսի 11—13-ին Մայր Աթոռում հրավիրել ներքին թեմերի ներկայացուցչական համագումար՝ քննարկելու համար Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը։

1959 Թ. ԱՊՐԻԼԻ 17-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում կարևորությամբ քննություն առավ Բրազիլիայի հայոց Կաթողիկոսական պատվիրակի փոխանորդ արժանապատիվ Տ. Եզնիկ ավագ քահանա Վարդանյանի զեկուցագիրը Սան-Պաուլոյի հայ գաղութում

մերձավոր ամուսնություններ մասին, երբ երկու քույրեր կամ քույր ու եղբայր կամենում են իրենց զավակներին ամուսնացնել միմյանց հետ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նման ամուսնությունները համարելով հակաօրինական և ոչ ըստ սրբության, հրահանգեց արժանապատիվ Տ. Եզնիկ եպիսկոպոս Վարդանյանին՝ խստությամբ պահպանել ամուսնության վերաբերյալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ողջամիտ կանոններն ու ավանդությունները և հայրական հորդորներով առաջն առնել նման ոչ բնական երևույթների։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում քննության առավ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի (Գալամդարյանի), Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանի, Ադրբեջանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի եկեղեցական, վարչական և հոգևոր թեմական գործունեությունը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր գոհունակությունը արձանագրելով Արարատյան, Շիրակի և Ադրբեջանի թեմերի առաջնորդական փոխանորդների գոհացուցիչ գործունեության համար և նկատի առնելով այն հանգամանքը, որ առաջնորդական փոխանորդները արդեն իսկ ձեռք են բերել իրենց թեմերի եկեղեցական հոգևոր կյանքի կազմակերպման և ղեկավարման գործում բավարար փորձառություն և փաստորեն կատարում են թեմական առաջնորդի պարտականությունները, և հենվելով թեմական խորհուրդների միջնորդության և հավատացյալների ցանկության վրա, որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հայրապետական կոնդակով հաստատել հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանի և հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի ընտրությունը որպես թեմական առաջնորդների, իսկ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանին, առաջնորդական իրավասություններով, վերահաստատել որպես առաջնորդական փոխանորդի, որովհետև Արարատյան թեմը հայրապետական թեմ է հանդիսանում։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանի ղեկավարությամբ, Զատկի տոնի առթիվ տխտի գնաց Ս. Գեղարդ վանքը։ Դեպի Գեղարդ ճանապարհի վրա ուսանողները այցելեցին նաև Գառնի։

***

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Զատկի արձակուրդներից հետո, դասավանդությունները վերսկսվեցին Հոգևոր Ճեմարանում։

***

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց Հայաստանի կերպարվեստագետների 6-րդ համագումարին մասնակից եղբայրական ռեսպուբլիկաների կերպարվեստագետների մի խումբ, ՍՍՌՄ Կերպարվեստագետների միության առաջին քարտուղար Ս. Վ. Գերասիմովի գլխավորությամբ։

Հարգելի հյուրերը եղան Մայր Տաճարում, թանգարանում և մեկնեցին լավագույն տպավորություններով։

***

ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Կրկնազատիկ» («Նոր կիրակէ»)։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը՝ «Նորոգեցարուք նորոգութեամբ կենացս այսօր յարութեամբն Քրիստոսի, նոր ժողովուրդ» շաբաթի բառերի բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց հոգեհանգիստ, ի «յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմացս»։

***

ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 8-ին, Վեհարանում, միաբանական հավաքույթում քննարկվեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանի կիրակի օրվա քարոզը։

***

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Աւետումն Ս. Աստուածածնի»։ Օրվա տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Աշխարհամատրան» («Կանաչ կիրակէ»)։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Ադրբեջանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը և քարոզեց Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը։

***

ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ս. Էջմիածնի Մայր Տաճար այցելեց Ռումինիայի երիտասարդական պատվիրակությունը, կազմակերպության կենտկոմի քարտուղար Իոն Կիրլեի գլխավորությամբ։

Հյուրերը եղան Մայր Տաճարում։

***

ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին Գ լսարանի՝ սարկավագ ուսանողների 1958—1959 ուսումնական տարվա կուրսային քննությունները, որոնք տևեցին մինչև ապրիլի 24-ը։

Հոգևոր Ճեմարանի Գ լսարանի քննությունները անցան շատ հաջող։ Ուսանողները «գերազանց» և «լավ» գնահատականներ ստացան կուրսային չորս առարկաներից՝ աստվածաբանությունից, Ս. Գրոց մեկնությունից, հայ ժողովրդի պատմությունից և հայոց լեզվից։

Այժմ Գ լսարանի ուսանողները պատրաստվում են հանձնելու ավարտական քննությունները հունիսի 10-ից, հետևյալ չորս առարկաներից. տնական աստվածաբանություն, Հայ եկեղեցվո մատենագրության ներածություն, մեկնություն Ս. Գրոց և հայ ժողովրդի պատմություն։

***

ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ և 13-ԻՆ Մայր Աթոռ այցելեց ամերիկյան «Լայֆ» ամսաթերթի թղթակիր պր. Հաուրրտ Սոլբրեքը։ Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում, Վեհարանում, Հոգևոր Ճեմարանում, խմբագրատանը և մեկնեց լավագույն հուշերով։

***

ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, («Կարմիր Կիրակի»), Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաշիրյանը՝ «Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ ինձ, թէպէտ և մեռանի, կեցցէ» (Յովհ. ԺԱ 25) բնաբանով։

***

ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Հարավային Ամերիկայի հայոց նորընտիր հայրապետական պատվիրակ, հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը։

***

ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետին այցելեցին իրանահայ ուխտավոր էրեք տիկիններ և ստացան Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

***

ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, երեկոյան ժամը 4-ին, բանախոսեց Ճեմարանի դասախոս Գրիգոր Գյուլյանը՝ Դանիել Վարուժանի կյանքի ու գրական ժառանգության թեմայի շուրջ, մեծանուն բանաստեղծի ծննդյան 75-ամյակի առթիվ։

Վերջում վերատեսուչ սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց բովանդակալից դասախոսության համար։

***

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռից մեկնեց իրանահայ նկարիչ Ա. Գուրգենյանը, որը եկել էր Հայրենիք՝ կազմակերպելու իր նկարների ցուցահանդեսը։

***

ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն Երևման Ս. Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց ու քարոզեց հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը՝ «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց ամերիկյան «Լայֆ» ամսաթերթի թղթակիցը։ Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում, Հոգևոր Ճեմարանում, Վեհարանում, խմբագրատանը և մեկնեց լավագույն տպավորություններով։

***

ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճար այցելեցին Խոսրովական ռեսպուբլիկայի Կուլտուրայի մինիստրության մի շարք պատասխանատու աշխատողներ, գլխավորությամբ Ալեքսել Մյադինկի, Հարգելի հյուրերը եղան նաև Թանգարանում և մեկնեցին ջերմ տպավորություններով։

***

ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Զատիկը հին տոմարով տոնելու համար, Թբիլիսի մեկնեց գլխաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանի և բարեշնորհ կուրապետ և Հակոբ սարկավագների։

Նույն նպատակով Բաքու մեկնեց Պետրոս սարկավագը, իսկ Ռոստով՝ Ժիրայր սարկավագը։



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերակառուցման առթիվ, Վեհափառ Հայրապետի սիրալիր համաձայնությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան պեղումներ կատարեց Ս. Սեղանի բեմի տակ, դեկավարությամբ ճարտարապետ Ալ. Սահինյանի:

Սույն թվականի ապրիլի 8-ին երևանից հրավիրված հնագետների և ճարտարապետների հանձնաժողովը, տեղում հնելով պեղումների արդյունքները, հաստատեց հետևյալը.

ա) Այժմյան Ս. Սեղանի տակ, մոտ 1,5 մետր խորության, հայտնաբերվեցին և դուրս վանան Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի խարիսխները, բեմը և բեմ քարերը, որոնք պահպանված են անաղարտ վիճակում:

բ) Ե դարի բեմի որոշ սրբատաշ քարերի վրա պահպանված են հնագույն որմանկարների մնացորդներ:

գ) Ե դարի Սեղանի կառուցվածքի ներսում պահպանված են առավել հնագույն խորանի պատեր, որոնք, ըստ իրենց կառուցվածքի և շինարարական տեխնիկայի, գոյություն են ունեցել մինչև Ե դարը: Այն կարող է լինել Ս. Գրիգոր Լուսավորչի օրով (301 թ.) կառուցված խորանը կամ բերևս պատկանել է առավել հնագույն շրջանի սրբավայրի:

դ) Ե դարի բեմի ներքևի շարվածքի մեջ, հորիզոնական ուղղությամբ, հայտնաբերված է ուրարտական ժամանակաշրջանի (Զ—Թ դար Ք. ա.) սրբատաշ օրձաքարից (բազալտ) հղկված մի մեծ կոթող, որն իր չափերով (3,10×0,73×0,53 մ.) հանդիսանում է ցարդ հայտնի ուրարտական կոթողներից ամենամեծը:

Այդ հազվագյուտ հուշարձանը վկայում է Մայր Տաճարի ստեղծումից ավելի քան մեկ հազարամյակ առաջ, Ս. Էջմիածնի շրջապատում, դեռևս ուրարտական ժամանակաշրջանից գոյություն ունեցող մշակութային կյանքի կենտրոնի առկայությունը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց հնագետ-ճարտարապետների առաջարկությունները, այն է՝

ա) Մայր Տաճարի նոր կառուցվելիք Ավագ Սեղանի մակերեսը պատել երկաթբետոնով, պահպանելով բեմի տակ պեղումների հետևանքով ներկայիս առաջած գետնափոր տարածությունը իր անցքերով և Ս. Սեղանի հետևի կողմից (քանգարանից) հատուկ մուտք բանալ ընդհանուր դիտման համար, որպես սրբավայր և պատմական հուշարձան:

բ) Ուրարտական օրձաքարը՝ կոթողը (ստելան) դուրս հանել իր տեղից և կանգնեցնել Ս. Էջմիածնի բակում մի հարմար տեղ, հատուկ պատվանդանի վրա, իբրև հուշարձան-կոթող:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի հրավերով, 1959 թվականի ապրիլ ամսի 11—13 օրերին, Մայր Աթոռում գումարվեց Հայաստանի և Սովետական Միության ներքին թեմերի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչների խորհրդակցական համագումարը։

Շաբաթ, ապրիլի 11-ին, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի գրադարանի մեծ ընթերցասրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, բացվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սահմանադրության նախագծի քննարկման համար Մայր Աթոռում հրավիրված ներքին թեմերի ներկայացուցիչների խորհրդակցական համագումարը։

Համագումարի առաջին նիստը բացվեց Վեհափառ Հայրապետի արտասանած տեղունական աղոթքով և զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէրս մաղթանքով։

Ապա Վեհափառ Հայրապետը, Իր ողջույնի սրտագին խոսքն ուղղելով պատգամավորներին, բացված է հայտարարում համագումարը։

«Գերաշնորհ սրբազան հայրեր, նոգեշնորհ վարդապետներ և նարգարժան ներկայացուցիչներ։

Մեծ ուրախությամբ կողջունենք ձեր ժամանումը այստեղ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, և բացված կհայտարարենք մեր ներքին թեմերու ներկայացուցիչներու խորհրդակցական այս ժողովը, նվիրված Ընդարկմանը Եկեղեցական Սահմանադրության նախագծի, որ պատրաստված է Մայր Աթոռի մեջ, Գերագույն Հոգևոր խորհրդի կողմե։

Վաղուց է, որ Մայր Աթոռի մեջ չէ գումարված ներքին թեմերու այսպիսի ժողով մը։ Այստեղ գումարված են ազգային-եկեղեցական սրբազան ժողովները, մեր կողքին ունենալով Սփյուռքի մեր թեմերու ներկայացուցիչները։ Այսօր, այստեղ, Սփյուռքի ներկայացուցիչներ չկան մեր շուրջը։

Մենք ճարմար նկատեցինք 1960 թվականի ազգային-եկեղեցական ժողովին առաջ, հրավիրել Մայր Աթոռի մեջ խորհրդակցական բնույթի այս հավաքույթը, միասին ընելու և մեր խոսքը բսելու Սահմանադրության նախագծի մասին, որ, ինչպես գիտենք, 4—5 ամիսներ առաջ տպված է «Էջմիածին» ամսագրի դեկտեմբերի համարին մեջ և կենբարկվի ժողովրդական ընդարկման։

Այս օրերուն մեր Ս. Եկեղեցին, Մեր խորունկ ճամոզումով, կգտնվի վերաշինության, վերակազմության ճանապարհի վրա։ Որոշ երևույթներ քերես իրավունք կուտան ոմանց չճամաձայնելու Մեր այս տեսակետին հետ։ Կակնարկենք Սփյուռքի այն շարք մը անառողջ վիճակներուն և իրադրություններուն, որոնք ծանոր են ձեզ։ Մեր յավատությանը հետ չներդաշնակող այդ երևույթ-

ները, սակայն, արտաքին, խաթուսիկ երևույթներ են, որոնք չեն կապված օրգանապես մեր կյանքի, Սփյուռքի հայ ժողովուրդի կյանքի հետ: Մենք կմնանք Մեր լավատեսության մեջ, այն պայծառ համոզումով, որ Հայ եկեղեցին այսօր ալ կգտնվի իր ուղիղ առաքելության հանապարհին վրա, հայ ժողովուրդի կրոնական-մշակութային, ազգային-եկեղեցական և հայրենասիրական դաստիարակության և ծառայության նվիրական պարտականության դիրքերուն վրա:

Հայ եկեղեցին, իր պատմության ընթացքին, և մանավանդ մեր ժողովուրդի վերջին դարերուն, կատարած է նախախնամական դեր, անբաժանելիորեն կապված հայ ժողովուրդի ճակատագրին հետ, հանատակվելով անոր հետ և ուրախանալով միատեղ: Այսօր ալ Հայ եկեղեցին իր մասնակցությունը կբերե Հայրենիքի վերազարթոնքի և վերաշինության: Մեր ժողովուրդը իր Հայրենի հողի վրա, այսօր վերածնած է և կապրի բարգավաճ ու խաղաղ կյանք, բոլոր բնագավառներուն մեջ: Դուք բոլորդ գիտեք, կտեսնեք այդ և դուք ալ ձեր մասնակցությունը կբերեք հայրենաշեն ձեռնարկներուն: Այս իրողությունը մեր նոր կյանքի խարիսխն է:

Մենք որպես եկեղեցի կզգանք մեր պարտքը մեր վերածնած Հայրենիքի նկատմամբ, և մեր եկեղեցին, Մայր Աթոռ Ս. էջմիածնի գլխավորությամբ, պիտի շարունակե կատարել իր դերը, հայրենասիրության իր առաքելությունը, ներկա պայմաններուն մեջ:

Հայ եկեղեցին միշտ ենոու մնացած է մոլեռանդ, ծայրաեղ երևույթներե և պահած է իր ուղիղ հավատքը ավետարանական նշմարիտ ոգիով: Մեր եկեղեցին եղած է միշտ շափավոր, լայնախոհ և լուսամիտ. Մշակույթ և լույս տարածած է և եղած է ավելի հառաջդիմական շարժումներու հետ քան հետադիմության: Ան դավանաբանական, բյուզանդական վեճեր չէ սիրած, ընթացած է ժողովուրդին հետ և սիրած է մնալ համաժողովրդական մտահոգություններով դեկավարված սուրբ հաստատություն մը: Մեզ՝ հայ հոգևորականներուս հարազատ են եղած նաև մշակութային աշխատանքները: Մենք մեր օրերուն ալ վառ կպահենք այդ ավանդությունը, վերանորոգելով մեր հին վանքերը, որոնք եղած են ու կմնան հայ հարտարապետության չքնաղ կոթողներ, մշակույթի օջախներ և աղոթքի տուներ: Մայր Աթոռ Ս. էջմիածինը կցանկա վերստին դառնալ գիտության կեդրոն, մանավանդ պատմա-բանասիրական, հայագիտության գծով, հայ հին արվեստներու ուսումնասիրության գծով:

Մենք կուզենք շեշտել նաև այն որ, Ս. էջմիածնի, հայ հոգևորականներու համար միշտ հարազատ է եղած ազգային հայրենասիրական գործունեությունը: Ս. էջմիածինը հայրենասիրության օջախ է: Այս պատմական նշմարտությունը մը է: Եվ մեր օրերուն առավել թափ ստացած է Մայր Աթոռի ազգային, հայրենասիրական աշխատանքը: Այսօր, ավելի քան մեկ միլիոն հայ ժողովուրդ ցրված է աշխարհի վրա: Քաղաքական, ընկերային, տնտեսական պատվարներ կան Սփյուռքի և Հայրենիքի հայության միջև: Այս պայմաններուն մեջ Ս. էջմիածինը կոչված է պատմական դեր կատարելու: Սփյուռքի հայերը Ս. էջմիածնի անունով կապված են մեր լույս հավատքին, մեր լեզվին, մեր մշակույթին և մեր Մայր Հողին: Սփյուռքի հայության համար Ս. էջմիածինը հայկականության դրոշակ է: Մեր սրբազան պարտքն է Հայ եկեղեցիի զավակներուն մեջ վառ պահել առողջ հայրենասիրության զգացումը, որպեսզի հայ ժողովուրդը առավ կարենա պահել և պահպանել իր ազգային ինքնությունը, սերն ու զուրգուրանքը դեպի մեր Հայրենիքը:

Ս. էջմիածինը կաղոթե և կգործե նաև աշխարհի խաղաղության ամրապնդման համար: Հանուն խաղաղության պայքարողներու առաջին շարքին մեջ է մեր եկեղեցին, Ռուսական Պրավոսլավ եկեղեցիի կողքին: Խաղաղության հաղթանակի հետ կապված են բոլոր ժողովուրդներու բարօրությունն ու երջանկությունը:

Մենք բազում պատճառներ ունինք լավատես ըլլալու: Անոնցմե գլխավորը այն իրողությունն է, որ մենք որպես ժողովուրդ և եկեղեցի, կգտնվինք խաղաղ, ապահով Հայրենի հողի վրա, վայելելով հայրենի կառավարության ամբողջական բարյացակամությունը:

Մեր Հայրենիքին մեջ, Սովետական Սահմանադրությամբ նշված օրենքի շրջանակներուն մեջ, մենք պիտի շարունակենք մեր գործը, ներդաշնակելով միշտ մեր եկեղեցիի աշխատանքը երկրի ներքին կյանքին և օրենքին հետ: Ինչպես գիտեք, մեր Հայրենիքին մեջ եկեղեցին բաժնված է պետությունեն: Բայց եկեղեցին ունի միաժամանակ հայրենասիրական ազգային պարտականություններ դեպի Հայրենիքը: Մենք պիտի շարունակենք մեր պարտքը պատվով կատարել դեպի մեր եկեղեցին, դեպի մեր ժողովուրդը և դեպի մեր Մայր երկիրը:

Այս առիթով, կոչ կրնենք մեր ներքին թեմերու եկեղեցական և աշխարհական բոլոր

ներկայացուցիչներուն, որ Մեզ լավ և ճիշտ հասկնան և Մեզ գործակցին լրիվ գիտակցությամբ: Ըլլանք ներհնապես միասնական, համերաշխ ու անձնվեր, և ձեռ-ձեռքի տված պարացնենք Ս. Էջմիածինը, որ Հայ Եկեղեցիի ճիմնարարն է և վեմը մեր Ազգի միասնության:

Հարգելի՛ ներկայացուցիչներ, այս ժողովը ունի մեկ օրակարգ միայն, այն է Սահմանադրության նախագծի քննարկումը: Հայ Եկեղեցին վաղուց չէ ունեցած իր ներքին կանոնադրությունը կազմակերպչական իմաստով, որով դեկավարվեին մեր Եկեղեցիի բոլոր Արոռները, բոլոր թեմերը: Մեր Եկեղեցիի վերաշինության այս օրերուն, շատ կարևոր դեր ունի կատարելիք Եկեղեցական Սահմանադրությունը, եթե հաջողենք 1960 թվականի աշնան Ազգային-Եկեղեցական Բարգումար ժողովի գումարումով հաստատել զայն և գործադրության դնել: Անով պիտի ամրապնդենք մեր ներքին միությունը:

Մեր ժողովուրդի կամքն է այս և անոր դրագույն շահերու արտահայտությունը: Մեկ Եկեղեցի, մեկ ժողովուրդ, մեկ Սահմանադրություն, դեկավարման ընդհանուր սկզբունքներ:

Հաջողություն կմաղթենք ժողովիդ: Մեր հայրապետական օրհնությունը բոլորիդ.

պատրաստելու համար 1960 թվականին Ազգային-Եկեղեցական ժողովին ներկայացվելիք Սահմանադրության նախագիծը»:

Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքերը ընդունվեցին սրտագին և ջերմ ծափահարություններով:

Ապա Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի առաջարկությամբ ընտրվում են ժողովի գործադիր մարմիններ հետևյալ անձնավորություններից.

Ատենապետներ

1. Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան (Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ):

2. Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան (վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի):

3. Պրոֆ.-դոկտ. Լևոն Մելիքսեթ-Բեկ (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ):

Քարտուղարություն

1. Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյան (առաջնորդական փոխանորդ Շիրակի թեմի):

2. Հայկ Առաքելյան (դիվանապետ Մայր Աթոռի):

ԽՈՍՈՒՄ Է ՎԵՀՈՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԱՐԽԻՎ

Ժողովի գործադիր մարմինների ընտրությունից հետո, առաջին նիստի ատենապետ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը խոսքը տալիս է Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսին, որը, ի դիմաց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ողջունելով ներկաներին, ասում է.

«Պարտականություն ունեմ ողջույնի և բարի գալստյան խոսք ասելու Արարատյան հայրապետական, Շիրակի, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի թեմերի և Մոսկվայի հովվության եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչներիդ։

Այսօր, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Մայր Աթոռում բացվեց մեր ներքին թեմերի պատգամավորական ժողովը, կամ եկեղեցական մասնակի համագումարը։ Համագումարի օրակարգում կա մի հարց, այն է պաշտոնապես քննության առնել Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից կազմված և «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի դեկտեմբերի համարում համաժողովրդական քննարկման համար հրապարակված Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նոր Սահմանադրության նախագիծը և հանրագումարի բերել այս առթիվ ներքին թեմերի կողմից եղած նոր առաջարկություններն ու դիտողությունները։

Այս օրերին, Սփյուռքի մեր բոլոր թեմերում ևս, համաժողովրդական լայն քննարկման առարկա է դարձել Սահմանադրության նախագիծը։ Ինչպես գիտեք, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, 1958 թվականի հոկտեմբեր ամսի 16—23 օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կումարված եպիսկոպոսական ժողովի օրակարգի կարևոր հարցերից մեկն էր նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագծի քննարկումը։

Եպիսկոպոսական ժողովը իր Գ, Դ, և Ե հաջորդական նիստերի ընթացքում հանգամանորեն և հոդված առ հոդված քննարկեց ներկայացված նախագիծը։

Եպիսկոպոսական ժողովը մի շարք փոփոխություններից և լրացումներից հետո, քննված և վերասրբագրված նախագիծը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին։

Սահմանադրության վերանայված այդ նախագիծը Գերագույն Հոգևոր Խորհրդի 1958 թվականի նոյեմբերի 13-ի նիստում վերստին քննության առնվելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ արդեն իսկ հղված է մեր նվիրապետական բոլոր Աթոռներին ու թեմերին, ի գիտություն և ի քննարկում, որից հետո, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նկատի ունենալով ժողովրդական քննարկման առթիվ եղած նոր առաջարկությունները ու դիտողությունները, կկազմի Սահմանադրության վերջնական նախագիծը, այն ներկայացնելու համար ի հաստատումն 1960 թվականին գումարվելիք Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովին։

Այնուհետև սրբազանը կանգ է առնում Սահմանադրության նախագծի կազմության պատմության վրա և խոսելով ժողովրդական քննարկման ենթարկված նախագծի 135 հոդվածներից բաղկացած 11 գլուխների մասին, եզրափակում է իր զեկուցումը, նշելով.

«Սահմանադրության նախագիծը, իր ընդհանուր գծերի մեջ, եկեղեցական կանոնադրություն է, որն ընդգրկում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետական ամբողջ մարմինը և որտեղ ժողովրդավարական սկզբունքների վրա և միաժամանակ մեր դարավոր եկեղեցու հոգևոր ավանդների, կանոնների լույսի տակ և ազգային ոգու պահպանմամբ, ճշտորոշված են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասության սահմանները, յուրաքանչյուրի տեղը, դիրքը, հեղինակությունը, պարտականությունների շրջանակը։

Սահմանադրության նախագիծը, Ազգային-եկեղեցական ժողովի հաստատումից և վավերացումից հետո, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով պաշտոնապես կհրապարակվի և կմտնի Հայ Եկեղեցու կյանքի մեջ։

Եկեղեցական Սահմանադրության կիրառումը մի նոր ու պայծառ ուղի բաց կանի մեր Ս. Եկեղեցու առաջ կազմակերպչական, վարչական տեսակետից, ազգային-եկեղեցական միասնության լույսի տակ, և կլինի Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի գահակալության հիշատակության արժանի ձեռնարկումներից մեկը։

Հարգելի ներկայացուցիչնե՛ր. Մայր Ա. Թոռում գումարված եկեղեցական այս համագումարի մեջ Եկեղեցական Սահմանադրության նախագիծը քննելու հարցում մեղ՝ Եկեղեցու և ժողովրդի ներկայացուցիչներիս վրա դրվել է լուրջ և պատասխանատու պարտականություն, այն է՝ հոդված առ հոդված, կետ առ կետ քննել ժողովիդ ներկայացված նախագիծը, անել օգտակար լրացումներ կամ թեկադրություններ։

Թույլ տվեք, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, ժողովիդ մաղթել արդյունավորություն իր աշխատանքների ընթացքում։

Թո՛ղ Տերը առաջնորդի մեր ժողովը իր սուրբ կամքի ներքո, դեպի Հայ Եկեղեցու միասնության ամրապնդումն ու ծաղկումը

և դեպի մեր հավատացյալ ժողովրդի հոգևոր կյանքի շինությունը»։

Գերագույն Հոգևոր խորհրդի զեկուցագրի ընթերցումից հետո, ներքին թեմերի ներկայացուցիչների խորհրդակցական ժողովի բացումը ողջունում են Մայր Աթոռի ներկայացուցիչ և Հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը՝ առաջնորդ Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի, հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը՝ առաջնորդական փոխանորդ Արարատյան հայրապետական թեմի, պր. Գևորգ Ավչյանը (Վրաստանի թեմական խորհուրդ), պր. Արսեն Գուլազյանը (Մոսկվայի հովվություն), հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը՝ Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ, պր. Դավիթ Բեգլարյանը (Նոր-Նախիջևանի թեմ), հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը՝ Ադրբեջանի թեմի առաջնորդական տեղապահ, պր. Հայկ Ավագյանը (Նոր-Նախիջևանի թեմ)։

Ներքին թեմերի ներկայացուցիչների այս խորհրդակցական ժողովին հրավիրվել և ներկա են 45 հոգի, ըստ հետևյալ ցանկի.

Ա) ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան.
2. Գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.
3. Գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Ապնավուրյան.
4. Պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյան.
5. Պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյան.
6. Դոցենտ Արտաշես Տիրացյան.
7. Վաստակավոր ուսուցիչ Արամ Ազաջանյան.

Բ) ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան՝ վերատեսուչ Հոգևոր ճեմարանի.
2. Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյան՝ Փոխ-տեսուչ Հոգևոր ճեմարանի.
3. Հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաքիրյան՝ մատակարար Մայր Աթոռի.

Գ) ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄ

1. Հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյան՝ առաջնորդական փոխանորդ.
2. Արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյան.
3. Արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Անդրեասյան.
4. Պր. Պարգև Շահբազյան՝ թեմական խորհրդի անդամ և դասախոս Հոգևոր ճեմարանի.
5. Պր. Գրիգոր Գյուլյան՝ թեմական խորհրդի անդամ և դասախոս Հոգևոր ճեմարանի.

Դ) ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

1. Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյան՝ առաջնորդական տեղապահ.
2. Արժանապատիվ Տ. Արամ քահանա Բոյաճյան.
3. Պր. Գրիգոր Ադիլյան՝ ատամնաբույժ.
4. Պր. Հայկասար Մինասարյան, վաստակավոր դերասան.

Ե) ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄ

1. Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյան՝ առաջնորդական տեղապահ.
2. Արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյան.
3. Պրոֆ.-դոկտ. Լևոն Մելիքսեթ-Բեկ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ.
4. Պր. Սուրեն Ավչյան՝ գրող և թեմական խորհրդի անդամ.
5. Պր. Սամվել Իսախանյան.
6. Պր. Խնդիր Դիլաքյան.

Զ) ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԹԵՄ

1. Հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյան՝ առաջնորդ.
2. Արժանապատիվ Տ. Կարապետ քահանա Հովնանյան.
3. Պր. Հայկ Սարդսի Ավագյան՝ փաստաբան.
4. Պր. Դավիթ Արտյոմի Բեգլարյան՝ դասախոս.

Է) ԱԴՐԲԵՋԱՆԻ ԹԵՄ

1. Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան՝ առաջնորդական տեղապահ.
2. Արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյան.
3. Պր. Արամ Հայրապետի Մելիք-Թանգյան՝ փաստաբան.
4. Պր. Կարապետ Մարտինի Բաղրամյան՝ դասախոս.

Ը) ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ

1. Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյան.
2. Պր. Արսեն Գուլազյան՝ փաստաբան.

Թ) ՎԱՆՈՐԱՅՔ

1. Ս. Գեղարդ՝ հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյան.

2. Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե՝ հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյան.

Ժ) ՀՐԱՎԻՐՅԱԼՆԵՐ ԶԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

1. Պր. Գրիգոր Զուբարյան՝ իրավագետ.

2. Պր. Սուրեն Արեշատյան՝ Երևանի Գեղարվեստական ինստիտուտի ավագ դասախոս՝ իրավագետ.

3. Պր. Հայկ Առաքելյան՝ դիվանապետ Մայր Աթոռի.

4. Պր. Հմայակ Սեդրակյան՝ Մայր Աթոռի իրավախորհրդատու.

5. Պր. Արթուն Հատիտյան՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր.

ԺԱ.) ՀՐԱՎԻՐՅԱԼՆԵՐ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԶԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

1. Պր. Եփրեմ Ալեքսանյան՝ Վերստուգիչ հանձնաժողովի անդամ.

2. Պր. Գրիգոր Բեքմեզյան՝ Վերստուգիչ հանձնաժողովի անդամ.

3. Պր. Սարգիս Կոնսուլյան՝ Հոգևոր Ճեմարանի դասախոս

Ժողովի վերջում միաձայն ընդունվեց ողջույնի հեռագիր Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանին ուղղված։

Մայր Աթոռում հրավիրված ներքին թեմերի ներկայացուցիչների խորհրդակցական ժողովի առաջին նիստը վերջացավ երեկոյան ժամը 6-ին։

Այնուհետև Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, համագումարի մասնակիցները ներկա եղան կիրակամտի ժամերգության։

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Ներքին թեմերի ներկայացուցիչների խորհրդակցական ժողովի երկրորդ նիստը գումարվեց ապրիլի 13-ին, կիրակի օրը, ցերեկվա ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի գրադարանի դահլիճում։

Կիրակի առավոտ, ժամը 11-ին, Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ադըրբեջանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։ Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, իր շուրջն ունենալով պատգամավորներին։ «Հայր մերդ-ից առաջ քարոզեց Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ» (Յովհ. Գ 3) բնաբանով։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ի պատիվ ներքին թեմերի ներկայացուցիչների, ժամը 2-ին կազմակերպել էր ընդունելություն Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում։ Սեղանին նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Ընդունելությունը անցավ ջերմ, սրտագին մթնոլորտում։

Ժամը 4-ին դումարվեց ներկայացուցչական ժողովի երկրորդ նիստը։ Նախագահում էր Վրաստանի հայոց ներկայացուցիչ պրոֆ.-դոկտ. Լևոն Մելիքսեթ-Բեկը։

Երկրորդ նիստում առաջինը հանդես եկավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ-դոկտ. Ա. Ղարիբյանը՝ Սահմանադրության նախագծի շուրջ բովանդակալից ներածական ճառով։

Ապա, նախագահության առաջարկով, միաձայն որոշվեց նախագիծը կարդալ և քննության առնել գլուխ առ գլուխ և հոդված առ հոդված։

Դիվանի կողմից Սահմանադրության նախագծի առաջին գլխի՝ «Հիմնական սկզբունքներ» (1—14 հոդված) ընթերցումից հետո, սկսվեց մտքերի աշխույժ և ակտիվ փոխանակություն, որին մասնակցեցին բոլոր թեմերի ներկայացուցիչները և ժողովականները։

Նախագահ պրոֆ.-դոկտ. Լ. Մելիքսեթ-Բեկը առաջինը խոսք տվեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանին, որը հանուն իր թեմի թեմական ժողովի և հավատացյալների կարդաց հետևյալ բանաձև որոշումը.

«Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհուրդը, ծանոթանալով Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու Սահմանադրության նախագծին, իր խորունկ գոհունակությունն է հայտնում այն աստվածաշնորհ խորիմաստության առթիվ, որով ձևակերպված ու շարադրված են Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու Սահմանադրության ինչպես հիմնական սկզբունքները, այնպես էլ նրա գործադիր մարմինների իրավասություններն ու պարտավորությունները։

Նորքին. Քրիստոսի Ծննդյան հանդեսությունը հայրապետարանում

Մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած քաղաքական ու իրավական դրության փոփոխությունները վաղուց ի վեր անհրաժեշտություն էին ստեղծել մշակելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ընդհանուր ու միասնական Սահմանադրությունը, որի մեջ հստակ և պարզորոշ կերպով ձևակերպվեին մեր Եկեղեցու և՛ հիմնական սկզբունքները և՛ մեր եկեղեցական-ազգային մարմինների իրավասությանց և գործունեության սահմանները։ Հայաստանյայց Եկեղեցու Սահմանադրության ներկա նախագիծը առաջին լուրջ փորձն է այդ հիմնական պակասը լրացնելու ուղղությամբ։

Արարատյան հայրապետական թեմի թեմական խորհուրդը ողջունում է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը և իր խորունկ գոհունակությունն է հայտնում նրա մշակման պատասխանատու Գերագույն Հոգևոր Խորհրդի շնորհակալ աշխատանքի առթիվ։

Սույն բանաձև-որոշումով Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհուրդը իր լիակատար համաձայնությունն է հայտնում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագծին, նկատի ունենալով, որ՝

ա) Նրանում հավատարիմ ոգով և պատշաճ ձևով արձանագրված են այն հիմնական սկզբունքները, որոնք նվիրագործվելով օրենքի ուժ են ստացել մեր ժողովրդի դարավոր գոյության ընթացքում.

բ) Անխախտ պահելով դարերից ի վեր սրբագործված և նվիրագործված ավանդական կարգը՝ ճիշտ է բնորոշված և օրինականացված Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրապետությունը.

գ) Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրապետության մասնավոր Աթոռների փոխադարձ կապն ու իրավունքները ճշտող հոդվածները ձևակերպված են իմաստությամբ, այդ Աթոռների միջև համերաշխ գործակցություն ստեղծելով և դրանով իսկ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնությունը անխախտ պահելու և ամրապնդելու ոգով.

դ) Ազգային-եկեղեցական մարմինների ընտրության և նրանց իրավասությանց վերաբերող հոդվածներում պահպանված են մեր Եկեղեցու ժողովրդավարական սկզբունքները.

ե) Նախանձախնդիր իմաստությամբ և հեռատեսությամբ են ձևակերպված Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբազնասուրբ անձնավորության, նրա բարձր հեղինակության և աստվածատուր իրավասություններին վերաբերող հոդվածները.

զ) Ներքին և արտաքսահմանյան թեմերի իրավասություններին վերաբերող հոդվածները ձևակերպված են ինչպես մեր Եկեղեցու հիմնական սկզբունքների, այնպես էլ տեղական պայմանների հաշվառման հիման վրա։

Վրաստանի հայոց թեմական խորհրդի քարտուղար արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը, հանուն Վրաստանի հայոց թեմական խորհրդի, կարդաց թեմական խորհրդի մարտի 24-ի նիստում ընդունված հետևյալ բանաձև-որոշումը.

«1959 թվականի մարտի 24-ին Վրաստանի հայոց թեմական խորհուրդը, նախագահությամբ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, հանգամանորեն և մանրակրկիտ կերպով ուսումնասիրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը և իր մեծագույն գոհունակությունն ու շնորհակալության խոսքն է ուղղում Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց և Մայր Աթոռի պատվարժան Գերագույն Հոգևոր խորհրդին։ Թեմական խորհուրդը միաձայն վկայեց, որ Հայաստանյայց հինավուրց Եկեղեցու այս վերածնման ու մեծ զարթոնքի օրերին, քրիստոսահիմն մեր Եկեղեցուն օժտելը այնպիսի մի Սահմանադրությամբ, որի նախագիծը հրապարակի վրա է արդեն, ազգային-եկեղեցական մեծագույն նախաձեռնություններից մեկն է, Հայ Եկեղեցու բարոյա-քաղաքական հեղինակության բարձրացումն է այն հաշվ ստարաց և ազգայնոց ըստ ամենայնի։

Ասել, թե հնօրյա ու դարերի շունչը իր վրա կրող Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին չի ունեցել ղեկ, ղեկավարման մի ուրույն ընթացք և կանոնադրություն՝ սխալ կլինի և ոչ ճշմարիտ։ Այսպես, օրինակ, բավական է թերթել հայոց կանոնագրքերը, որպեսզի մեր աչքերի առջև արձանանա Հայոց հինավուրց Եկեղեցին իր առաքելական, տիեզերական սուրբ ժողովների և հայրապետահաստատ սուրբ կանոններով և ազգային-եկեղեցական սրբազումար ժողովների սրբագործված օրենքներով։ Ի դեպ՝ հնադարյան պատմություն ունեցող այս օրենքներն ու կանոնները չեն մշակվել ու պարտադրվել միայն վերևից։ Այդ սրբազան օրենքների և ավանդությունների սահմանմանն ու մշակմանը անմիջականորեն իր մասնակցությունն է հանդես բերել հայ աշխարհիկ տարրը՝ հայոց ազատանին և ինքը հայ ժողովուրդը։ Բավական է ուսումնասիրել այդ կանոններից շատերը կամ մի քանիսը և ակնառու կլինի, որ սրբազան այդ օրենքներից շատ շատերը հիմք ունեն և բխում են ժողովրդական հինավուրց ավանդություններից, բարոյականության և քաղաքակրթության այն վսեմ սկզբ-

բունքներից, որ ըմբռնել է և իր արյան մեջ անցկացրել հայ ժողովուրդը Փրկչի Ս. Ավետարանի իմանալի լույսով։ Երկար ժամանակ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կանոնները ի մի բերելու և մի ընդհանուր օրինագիծ կազմելու և Ազգային-եկեղեցական Սահմանադրություն ստեղծելու բազմաթիվ և բազմատեսակ փորձեր և աշխատանքներ են կատարվել զանազան ժամանակներում, Մայր Աթոռում և Մայր Աթոռից դուրս։

Այդպիսի Սահմանադրություններից մեկը հանդիսացավ «Պոլսոյենիա»-ն արևելահայերի համար 1836 թվականին, «Ազգային Սահմանադրություն»-ը՝ արևմտահայերի համար 1863 թվականին, երկուսն էլ խորթ ու անհարազատ Հայ Եկեղեցու ընդհանուր ոգուն և պարտադրված օտարի կողմից։ Դրանցից առաջինը դադարեց գոյություն ունենալուց ցարական կարգերի տապալումից հետո, իսկ «Ազգային Սահմանադրություն»-ը իր գոյությունը ինչ-ինչ փոփոխություններով և հարմարեցված պահում է Թուրքիայի հայոց համար և մասամբ էլ Երուսաղեմի Պատրիարքության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության սահմաններից ներս։

Այսօր Հայ Եկեղեցու ներկա ղեկավարությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվարժան Գերագույն Հոգևոր Խորհուրդը՝ իրեն գլուխ ունենալով Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի նման հայրենանվեր և բազմարդյուն մի Հայրապետ, հավաքել և ի մի են բերել մեր դարավոր Եկեղեցու բազմադարյան սուրբ ժողովների որոշումները, ու այդ բոլորը մեծագույն իմաստությամբ տարբաղադրելով և միացնելով՝ ստեղծել են «Էջմիածին» ամսագրում տպված Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը, որն իր մեջ համարյա ամբողջովին ընդգրկում է մեր Եկեղեցու վարչական-կազմակերպչական կյանքի համար կենսական նշանակություն ունեցող սահմանումներ և կանոններ՝ բաղկացած 11 գլուխներից և 135 հոդվածներից։

Վրաստանի հայոց թեմական խորհուրդը, հոդված առ հոդված կարդալով և քննելով Սահմանադրության նախագիծը և կրկին անգամ իր միասնական հավանությունը տալուց և շնորհակալությունը հայտնելուց հետո ազգիս Վեհափառ Հայրապետին և պատվարժան Գերագույն Հոգևոր Խորհրդին, թույլ տվեց իրեն անելու մի քանի դիտողություններ ու առաջարկություններ, Սահմանադրության նախագծի մի շարք վիճելի կետերի վերաբերյալ։

Ինչպես Արարատյան, նույնպես և Վրաստանի թեմի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչները, հավաքաբար և անհատաբար արեցին իրենց դիտողություններն ու առաջարկությունները նախագծի մի շարք վիճելի կետերի վերաբերյալ, որոնք մտան ժողովի արձանագրությունների մեջ։

Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, Ադրբեջանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, հանուն իրենց թեմական խորհուրդների, իրենց բանավոր ելույթներում պաշտպանեցին Սահմանադրության նախագիծը ընդհանրապես, միաժամանակ անելով համապատասխան լրացումներ, առաջարկներ՝ Սահմանադրության նախագծի մի շարք կետերի և հոդվածների շուրջ։

Երկրորդ նիստում քննության առնվեցին նախագծի առաջին՝ «Հիմնական սկզբունքներ» (1—14 հոդված), երկրորդ՝ «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Եպիսկոպությունը (15—17 հոդված), երրորդ՝ «Ազգային-եկեղեցական ժողով» (18—46 հոդված) գլուխները։

Երկրորդ նիստում մտքերի փոխանակությանը մասնակցեցին 35 պատգամավորներ, որոնք արեցին մի շարք կարևոր դիտողություններ, առաջարկներ, փոփոխություններ՝ յուրաքանչյուր գլխի առանձին հոդվածների և ենթակետերի մասին, որոնք ընդունվեցին ժողովի կողմից և մտան արձանագրության մեջ, ներկայացվելու համար Գերագույն Հոգևոր Խորհրդին։

Երկրորդ նիստը վերջացավ կիրակի օրը, երեկոյան ժամը 7-ին։

Երեկոյան ժամը 8-ին, բոլոր ներկայացուցիչները ներկա եղան Երևանի օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնում՝ Գունոյի «Ֆաուստ» օպերայի ներկայացմանը։

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Համագումարի երրորդ նիստը գումարվեց երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին։ Նախագահում էր Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

Այս նիստում քննության առնվեցին Սահմանադրության նախագծի չորրորդ գլուխը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս» (47—55 հոդված), հինգերորդ գլուխը՝ «Գերագույն Հոգևոր Խորհուրդ» (56—65 հոդված), վեցերորդ

գլուխը՝ «Եպիսկոպոսական ժողով» (66—70 հոդված), յոթերորդ գլուխը՝ «Մայր Աթոռի միաբանություն» (71—75 հոդված)։

Երրորդ նիստում ևս քննարկման ենթակա Սահմանադրության նախագծի շուրջ կատարվեց մտքերի աշխույժ, առողջ փոխանակություն, որին մասնակցեցին բոլոր ներկայացուցիչները։

Երրորդ նիստը ավարտվեց հետ միջօրեի ժամը 2.30-ին։

Ժամը 3-ին, ի պատիվ պատգամավորների, կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին թեմերի ներկայացուցիչներն ու այլ անձնավորություններ, որոնք հրավիրվել էին մասնակցելու ներկայացուցչական համագումարին։

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Ընդունելությունը անցավ ջերմ, հայրենասիրական մթնոլորտում։ Սրտագին ճառեր արտասանեցին պատգամավորներից շատերը, շեշտելով Սահմանադրության նախագծի հրատարակության և քննարկման պատմական կարևորությունը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու այժմյան կյանքի պայմաններում։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը հանդես եկավ ջերմ, ոգեշունչ և հայրենասիրական ճառով և բաժակ առաջարկեց Հայ Եկեղեցու միասնության, Հայ ժողովրդի և Մայր Հայրենիքի կենաց։

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Ներքին թեմերի ներկայացուցիչների համագումարի չորրորդ և վերջին նիստը գումարվեց ապրիլի 13-ին, երեկոյան ժամը 5-ին։

Նախագահում էր պրոֆ.դոկտ. Լևոն Մելիք-սեթ-Բեկը։

Չորրորդ նիստում քննության առնվեցին Սահմանադրության նախագծի հետևյալ գլուխներն ու հոդվածները. ութերորդ գլուխ՝ «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու episkoպության մասնավոր Աթոռներ».

ա) Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն (76—87 հոդված).

բ) Սուրբ Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն (88—96 հոդված).

գ) Թուրքիայի Հայոց Պատրիարքություն (97—103 հոդված).

դ) Թեմական առաջնորդություններ, եպիսկոպոսական ժողովներ (104—118 հոդված).

ե) Հոգևոր հովվություններ (119—120 հոդված).

զ) Վանորայք (121—123 հոդված)։

Իններորդ գլուխ՝ «Եկեղեցիների եկամուտներ» (124—126 հոդված).

Տասներորդ գլուխ՝ «Ընտրական իրավունք և ընդհանուր տրամադրություններ» (127—133 հոդված).

Տասնմեկերորդ գլուխ՝ «Սահմանադրության վերանայում» (134—135 հոդված)։

Սահմանադրության նախագծի վերջին գլուխներն ու հոդվածները ևս առարկա դարձան լուրջ քննարկման։ Այս գլուխների և հոդվածների քննարկման ժամանակ ևս ընդունվեցին բարեփոխություններ, լրացումներ, նոր առաջարկներ։

Չորրորդ նիստը վերջացավ երեկոյան ժամը 9.30-ին։

Սպառվել էր ժողովի որակարգը։

Բոլոր ժողովականների միաձայն հավանությամբ ընդունվեց և ժողովի արձանագրության մեջ գրանցվեց հետևյալ բանաձև-որոշումը.

«Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի հրավերով, 1959 թվականի ապրիլի 11—13 օրերին, Մայր Աթոռում գումարված ներքին թեմերի ներկայացուցչական համագումարը, իր հաջորդական չորս նիստերի մեջ, հանգամանորեն քննության առավ Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից պատրաստված և ժողովին ներկայացված Սահմանադրության նախագիծը, որը բաղկանում է 11 գլուխներից և 135 հոդվածներից։

Այս առթիվ ներքին թեմերի ներկայացուցչական համագումարը միաձայն ՈՐՈՇՈՒՄ է.

1. Իր որդիական սերն ու հավատարմությունը, շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնել Նորին Ս. Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Սահմանադրության նախագծի պատրաստության և ժողովրդական քննարկման ենթարկելու համար։

2. Հավանություն տալ ներկայացված Սահմանադրության նախագծին։

3. Խնդրել Նորին Ս. Օծությանը՝ նկատի առնել ներքին թեմերի ներկայացուցիչների համագումարի առաջարկություններն ու հավելումները և հրահանգել Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ համապատասխան լրացումներ մտցնել նախագծի վերջնական խմբագրության մեջ»։

Այս բանաձև-որոշումը ընդունվեց հոտնկայս, ջերմ և միահամուռ ծափերով։

Կարճ դադարից հետո, ժողովի նախագահական կազմի կողմից Վեհափառ Հայրա-

պետը հրավիրվեց նիստերի դահլիճը՝ ժողովականներին իր օրհնությունը տալու և ժողովի փակումը կատարելու համար։ Դիշերվա ժամը 10-ին, ժողովի նախագահության առաջնորդությամբ, Վեհափառ Հայրապետը նիստերի դահլիճ մուտք գործեց և ընդունվեց ջերմ ծափերով։

Հանուն ներքին թեմերի ներկայացուցիչների համագումարի, պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, ողջունելով Վեհափառ Հայրապետի դալուստը, ասաց, որ ինքը լիազորված է համագումարի կողմից զեկուցելու նորին Ս. Օծության ժողովի աշխատանքների շատ բարեհաջող արդյունքների և եզրակացությունների մասին։ «Ներքին թեմերի ներկայացուցիչները,— ասաց պրոֆեսորը,— քննության առան Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից ներկայացված Սահմանադրության նախագիծը, թե՛ ներկայացուցչաբար, թե՛ անհատաբար, կատարեցին մտքերի աշխույժ փոխանակություն։ Նախագծի քննարկման աշխատանքները կատարվեցին մեծ սիրով, ջերմությամբ և անկեղծությամբ։ Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, սրտագին պարտականություն ունեմ շնորհակալություն հայտնելու ժողովի նախագահությանը, որն այնքան ձեռնհասորեն վարեց ժողովը, և բոլոր ժողովականներին, որոնք սիրով և ջերմությամբ մասնակցեցին նախագծի քննարկման աշխատանքներին։

Ապա ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Պարտք կզգանք մեր այ շնորհակալության խոսքը ասել այս պատկառելի ժողովին, որուն ներկա են Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության անդամները, ներքին թեմերի ներկայացուցիչները և մասնավոր հրավիրյալներ՝ ինչպիսին են պրոֆ.-դոկտ. Լևոն Մելիքսեթ-Բեկը, ծանոթ իրավագետներ պր. Գրիգոր Զուբարյանը և պր. Սուրեն Արևշատյանը։

Այս պատկառելի ժողովը անգամ մը ևս քննարկեց Սահմանադրության նախագիծը, որ արդեն հասած է որոշ հանգրվանի մը, ժողովիդ քննարկումեն հետո։ Ինչպես այս քանի մը օրերու ընթացքին, այնպես այ ավելի ուշ, շեշտված է բազմիցս այս ակտին կարևորությունը։ Սահմանադրության նախագծի քննարկումը այս օրերուն կկատարվի նաև Սիդնիի մեջ, մեր թեմերուն մեջ։ Արտասահմանյան մամուլի մեջ արդեն ամբողջությամբ հրատարակված է ան, և նույնիսկ թարգմանված օտար լեզուներու։

Մեր փափագն է, որ մեր եկեղեցին, այնքան տարտղնված և ցրված աշխարհագրականորեն ամբողջ երկրագնդի վրա, ունենա կանոնադրություն մը, կազմակերպչական-վարչական ընդհանուր սկզբունքներ ընդգրկող, որուն մեջ մտնեն մեր բոլոր նվիրապետական Աթոռներն ու թեմերը, որպեսզի անով ամրապնդվի մեր եկեղեցին իր միասնության մեջ և կարգապահական վինակ մը իր բարեբար դերը կատարե Հայ եկեղեցվո ծոցին մեջ։ Եկեղեցական անկարգություններ, կանոնական խախտումներ բխած են և կբխին միասնականության գիտակցության մը պակասեն, ազգային-եկեղեցական իմաստով։

Մեր եկեղեցական Սահմանադրությունը, իր վավերացումեն հետո այ, անշուշտ բարոյական ուժ միայն պիտի ունենա։ Մենք կկարծենք, որ Հանի հայ ժողովուրդը Քրիստոնյա կմնա և հավատարիմ իր սուրբ ավանդներուն, սիրով պիտի ուզե ենթարկվի այս հոգևոր-բարոյական օրենքին։ Մեր ամբողջ եկեղեցիի մարմինը, նվիրապետությունը, ներքին կարգն ու կանոնը և ավանդությունը կանգնած են բարոյական հիմքերու վրա։ Մեր եկեղեցին այլ միջոց չունի պարտադրելու իր կանոնները։ Մենք կհավատանք, որ հայ հավատացյալ ժողովուրդը գիտակցությունը պիտի ունենա եկեղեցական նոր Սահմանադրությունը ընդունելու՝ որպես հոգևոր բարոյական պարտադիր կանոն։

Դեռ ենք Մենք և մխիթարված, որ դուք այստեղ Հանի մը օրերու մեջ, նախանձախնդիր կերպով և անձնանվիրաբար, քննարկեցիք Սահմանադրության նախագիծը։ Այս հանգամանքը ցույց կուտա, որ մեր ներքին թեմերը, իրենց թեմական կազմակերպություններով, հավատացյալ ժողովուրդով կապրին մեր Եկեղեցվո կյանքով և եկեղեցական կազմակերպչական հարցերով։ Այս հանգամանքը Մենք կգտնենք շատ ուրախալի և մխիթարական։ Փափագելի է, որ ներքին թեմերու ներկայացուցչական նման համագումարներ հաճախ տեղի ունենան։ Մենք վստահ ենք, որ այս պատկառելի ժողովին այսօր ներկա եղող պատգամավորներեն շատերը մեր կողքին պիտի ըլլան հաջորդ ազգային-եկեղեցական ժողովին։

Շնորհակալության Մեր խոսքը կուղղենք բոլորիդ՝ գերաշնորհ և հոգեշնորհ սրբազան և վարդապետ հայրերուդ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներուդ, ներքին թեմերու եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչներուդ։

Հատուկ շնորհակալության խոսք ունենք, Մեր և Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմեն, այն երեք պատվական մասնագետ անձնավորությանց՝ պրոֆ.-դոկտ. Լևոն Մելիքսեթ-Բեկին, դասախոս պր. Գրիգոր Զուբարյանին և դասախոս պր. Սուրեն Արևշատյանին, որոնք որպես հյուր կմասնակցին այս ժողովին։ Հույսով ենք, որ ասկե հետո այ, նման*

ճարտարու մեջ, մենք կվայելենք ձեր գիտակամ թանկագին օժանդակությունը:

Կփափագենք այս առիթով քանի մը խոսք ասել նաև այն կացության մասին, որ ստեղծված է Սփյուռքի մեջ մեր եկեղեցիի շուրջ: Մենք լավատես ենք և կհաստատենք, թե Հայ եկեղեցվո շահերը, Մայր Աթոռի գերագանությունը երբեք չեն տկարանար և չեն կարող եղծվիլ: Այնուամենայնիվ, չենք կարող անտեսել այն, որ Սփյուռքի մեջ կանգնած ենք շատ մը դժվարություններու առաջ: Ընդհանուր վերլուծություն մը բնել մեր այսօրվա եկեղեցական-ազգային կյանքի և տագնապի մասին՝ երկար պիտի ըլլար և մեզ հեռուներ պիտի տաներ: Քանի մը խոսքով կուզենք նշել ստեղծված կացության լուրջությունը: Որքան լուրջ է կացությունը, այնքան ուրեմն կարևոր է:

Անթիլիասը, որ հոգեյույս Դարեգին Վենի օրով եղբայրական ձեռք մեկնած էր Ս. Էջմիածնին, անկախ քաղաքական ճարտարեն և կացություններեն, այդ նույն Անթիլիասը այսօր իր դիրքը փոխեց և դարձավ քաղաքական գործիք, որով մենք կգտնվինք նոր իրադրության մը առջև, երբ պարտինք պաշտպանել Ս. Էջմիածնի դարավոր հեղինակությունը և իրավունքները և անով՝ մեր ժողովուրդի գերագույն շահերը: Սփյուռքի ժողովուրդի մեծամասնությունը Մայր Աթոռի անունով սրբազան եկեղեցապաշտպան ու հայրենասիրական պայքար կմղի, անհավասար և անհարազատ պայմաններու մեջ: Այնուամենայնիվ, անոնք չեն վնասիր և կգործեն: Այս ճանգամանքներու մեջ հայ հոգևորականությունը, ավելի քան երբեք, ոգեշնչված է Ս. Էջմիածնի և Հայրենիքի գերագույն շահերու պաշտպանության սրբազան ոգիով:

Հայ ժողովուրդը, ինչքան ատեն որ իր մեջ ունի հայկական գիտակցությունը և հավատք, Ս. Լուսավորչի կանթեղի լույսով լուսավորված, երբեք չի կրնար ընթանալ սխալ ուղղությամբ: Միայն բռնի պարտադրանքի տակ, Սփյուռքի մեջ, որոշ տեղեր, կապը խզած են Ս. Էջմիածնեն, ինչ որ է և կմնա իմաստե զուրկ պարզ ձևականություն մը:

Դուք լրիվ կնասկնամ Մեր մտածումները, Մեր զգացումները: Մենք պիտի շարունակենք կատարել Մեր առաքելությունը, Մեր կոչին ունենալով մեր ժողովուրդի շախշախի մեծամասնությունը: Եվ Մենք հավատացած ենք, որ Ս. Էջմիածնի անունը ավելի պիտի փառավորվի ամբողջ աշխարհի հայության մեջ:

Թույլ տվեք այս լավատեսությամբ և ոգևորությամբ ալ ավարտել Մեր խոսքը և փակել թեմերու ներկայացուցիչներու այս հանդիպումը, Մեր և ձեր ազգային, եկեղեցական գործերու լավագույն հաջողության մաղթանքներով: Մեր օրհնությունը և Մեր աղոթքները թող ըլլան Ձեզ հետ:

Տարեք նաև Մեր ողջույնը և օրհնությունը ձեր եկեղեցիներուն, բոլոր հայ հավատացյալներուն, ինչպես նաև մեր եղբայրական ժողովուրդներուն ուր կապրիք, ռուս մեծ ժողովուրդին և վրացի ու ադրբեջանցի ժողովուրդներուն, Մեր ամենաջերմ բարի մաղթանքներով հանդերձ:

Վեհափառ Հայրապետի այս քաջալերիչ, մխիթարական խոսքերը ընդունվեցին երկար, ջերմ ծափահարություններով:

Մայր Աթոռում հրավիրված ներքին թեմերի ներկայացուցչական համագումարը, ավարտելով իր աշխատանքները, փակվեց դիշերվա ժամը 10.30-ին, խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Երեքշաբթի օր, ապրիլի 14-ին, Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 10-ից, Վեհարանում բարեհաճեց առանձին-առանձին ընդունել թեմերի ներկայացուցիչներին՝ թեմական առաջնորդների և առաջնորդական փոխանորդների գլխավորությամբ:

Ժամը 4-ին, ի պատիվ թեմերի ներկայացուցիչների, Վեհարանում տեղի ունեցավ ողջերթի ընդունելություն, որն անցավ շատ ջերմ մթնոլորտում:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

• Մայիսի 10-ին, երկրորդ Յաղկազարդի կիրակի օրը, Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի շնորհաշխությամբ կատարվեց եպիսկոպոսական ձեռնադրություն։ Եպիսկոպոս ձեռնադրվեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության անդամ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը, որը վերջերս նշանակվել էր Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ և ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետի։

Նաբաթի օրը, երեկոյան, կիրակամտի ժամերգությունից հետո, կատարվեց նորընծայի «ուխտադրության ըստ սահմանի Հայոց Եկեղեցւոյ»։

Ընծայալը, ծնրադիր, Իշման Ս. Սեղանի առաջ, ուխտում է հավատարմությամբ, սրբությամբ ծառայել Հայաստանյայց Ս. Եկեղեցուն և հայ հավատացյալ ժողովրդին, չինել երբեք օրինազանց կամ արհամարհող «կարգաց Եկեղեցւոյ», հավատարիմ մնալ Ս. Էջմիածնին և Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը։

Երեկոյան ժամերգությունից հետո նորընծան բարձրացավ Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար, որի զանգերը տոնական օրերի զեղուն ուրախությամբ ղողանջում են։ Մայր Տաճարում սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։ Ներկա են ամբողջ միաբանությունը, ներքին թեմերի առաջնորդները, թեմական ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, վանքի պաշտոնեություններ, ուխտավորներ Թեհրանից, Ամերիկայից և պաշտոնական այլ անձնավորություններ։

Վեհափառ Հայրապետը, Ս. Ստեփանոսի սեղանի առաջ, բաղմած «յաթոռն», առընթերակայությամբ գերաշնորհ Տ. Եղնիկ և Տ. Վարդան սրբազանների, սկսում է ձեռնադրության սուրբ խորհուրդը։ Խարտավիլակի պաշտոնը կատարում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, որը Վեհափառ Հայրապետին «խնդրանք» է ներկայացնում ձեռնադրության համար և հրավիրում հոգևորականության և ժողովրդի ներկայացուցիչներին՝ վկայելու նորընծայի արժանավորության մասին։ Ապա Վեհափառ Հայրապետի Աթոռի առաջ կարդացվում է նորընծայի անձնական վկայության թուղթը և կատարվում նրա ուղղափառ հավատի հրապարակային խոստովանությունը՝ «Հետևի՞ս և աշակերտե՞ս», «Այո՛», խոստովանիմ և հետևիմ»։

Եպիսկոպոսական աստիճանի առաջին նշանի՝ Եմիփորոնի՝ տվչությամբ վերջանում է ձեռնադրության առաջին մասը։ Ապա Իշման Ս. Սեղանի վրա, Ճաշու գրքի ընթերցումից հետո, ըստ Հայ Եկեղեցու կարգի ու կանոնի, շարունակվում է եպիսկոպոսական ձեռնադրության «շքեղաշուք և վայելչագարդ» արարողությունը, հոգևկան վայելք պատճառելով հավատացյալներին։ Ապա Մայր Տաճարում վեհ ու հանդիսավոր հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ» շարականը։

Աստվածաշնչական գրքերի, աղոթքների ընթերցումից հետո, Վեհափառը դնում է իր

Ս. Աջը նորընծայի վրա. «Ես դնեմ ձեռս ի վերայ»: Ապա, «Առաքելոյ աղաւնոյն շարականի երգեցողությամբ, Սրբալույս Մեռոնի հեղումից հետո արծաթյա ափի մեջ, Վեհափառ Հայրապետը օծում է ընծայալի ճակատն ու աջ ձեռքը և օրհնությամբ հանձնում եպիսկոպոսական խույր, Ավետարան, գավազան և մատանի՝ ի նշան եպիսկոպոսական ձեռնադրության լրման և իշխանության:

Այսպիսի հանդիսավոր և խորհրդավոր ձեռնադրությամբ և օրհնությամբ, Բարգեն վարդապետը Ս. Հոգու շնորհներն ստանալով դառնում է Եկեղեցու հոգևոր իշխան, բանին քարոզիչ, տեսուչ Եկեղեցվու Հոգեկան բերքի ուրախ արցունք կա և՝ ձեռնադրողի ու ձեռնադրվողի և՝ բոլոր ներկա հավատացյալների աչքերում: Քարոզի պահն է, ու Վեհափառ Հայրապետը խոսում է իր գեղեցիկ և հուզումնաշատ քարոզներից մեկը.

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Լո՜ւյս, շողակաթ լո՜ւյս կիջնե այս պահուս, սիրելի՜ հավատացյալներ, Ս. Էջմիածնի բարձունքներեն: «Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտիւ եղև ուրախութիւն» (Սաղմ. ՂԶ 11), պիտի երգենք սուրբ սաղմոսերգուի հետ միասին, քանզի այսօր, այս սրբազան պահուն, այդ լույսը կիջնե մեր վրա: Մենք կզգանք անոր զորությունը մեր հոգիներեն ներս: Այդ լույսը կուրախացնե մեր սրտերը, իմաստ կուտա մեր կյանքին և կպայծառացնե մեր ճանապարհը հոգևոր իմաստով:

Մենք կհավատանք այդ լույսին, ան մեր հոգևոր, բարոյական կյանքի արևն է, որ ծագեցավ այս սուրբ հողին վրա հազար վեց հարյուր և ավելի տարիներ առաջ, Փրկչի հրաշալի էջքով: Երկնառաք, շողակաթ այդ լույսը միշտ գո է այստեղ և այս խորհրդավոր պահուն մենք անգամ մը ևս կզգանք անոր հշմարտությունը և կենարար զորությունը, մանավանդ այս օրերուն, երբ բոլորս՝ Եկեղեցի և ժողովուրդ, կգտնվինք Փրկչի Ս. Հարության շնորհներուն ներքև: Քանի մը օր առաջ էր, որ տոնեցինք այս Ս. Սեղանի առջև հիշատակը մեր Տիրոջ Ս. Համբարձման, իսկ առաջիկա կիրակի պիտի փառավորենք Ս. Հոգվո գալուստը՝ աշխարհի և մարդկության վրա:

Ահա, այսպիսի շնորհներով առատ պահու մը, այսօր, այս նույն Ս. Սեղանին առջև, ճամբայն մեր Առաքելական Ս. Եկեղեցվո կարգաց և կանոնաց և ավանդությանց, եպիսկոպոսական ձեռնադրության սուրբ խորհուրդը կատարեցինք Երուսաղեմի Հայոց Ս. Աթոռի միաբան Բարգեն վարդապետ Ապատյանի վրա: Մեր ձեռամբ, Մեր աղոթքներով և Սրբալույս Մեռոնի օծումով, Բարգեն հայր սուրբը կոչվեցավ հոգևոր բարձրագույն աստիճանի և արժանացավ երկնառաք շնորհներու:

Սիրելի՜ ժողովուրդ, քացառիկ առիթ ունենցաք ներկա գլալու այս սրբազան արարողության և տեսնելու ու ճանչնալու նորապսակ եպիսկոպոսը: Վստահ եմ, որ դուք Մեզ հետ միասին խոր հուզում մը ապրեցաք այս սուրբ շնորհաբաշխության առիթով:

Մենք կհավատանք, թե սուրբ ձեռնադրությամբ և օծումով ընծայալը հշմարտապես կընդունի իր հոգվո անոթին մեջ Ս. Հոգվի շնորհները: Դուք գուցե հարց պիտի տայիք, թե ի՞նչ են Ս. Հոգվի շնորհները, որ մենք խորհրդավոր կերպով կընդունինք և կփոխանցենք զանոնք սուրբ ձեռնադրությամբ: Պատասխանը կուտա մեզ Պողոս առաքյալ Տիմոթեոսին ուղղած իր Բ թուղթին մեջ ըսելով. «Զբարւոք աւանդն պահեսցիր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ի մեզ բնակելոյ» (Բ Տիմ. Ա 14):

Առաքյալը, իր խոսքը ուղղելով մեզ բոլորիս, կպատգամե. պահեցե՛ք պահպանեցե՛ք բարի ավանդները, որ Ս. Հոգվո միջոցով կրեակիր մեր մեջ: Ուրեմն, գործնական իմաստով գոնե, Ս. Հոգվո շնորհները ընդունիլ և պահել և արգասավորել կնշանակե պահել պահպանել այն բոլոր սուրբ ավանդությունները, որոնք փոխանցված են մեզ դարերու խորքեն, սուրբ առաքյալներու և հայրապետներու հոգևոր կյանքի փորձով, և մեր Եկեղեցվո և հավատացյալ ժողովուրդի պատմության վկայությամբ:

Բայց որո՞նք են այդ բարի ավանդները, զորս մենք կպահենք սրբությամբ: Նախ՝ մեր ԼՈՒՅՍ ՀԱՎԱՏՔՆ է այդ, մեր քրիստոնեական հավատքը, ըստ մեր Եկեղեցվո ուղղափառ դավանության, հիմնված մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ավետարանին վրա: Երկրորդ մեծ ավանդը՝ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԲԱԺԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ կանոնն է, խարսխված իր միակ գլուխ աստվածակառույց Ս. Էջմիածնի վեմին վրա: Հայաստանյայց Եկեղեցիի գլուխը Ս. Էջմիածինն է՝ երեկ, այսօր և հավիտյան, որով կպայմանավորվի և կնվիրագործվի մեր հավատքի վավերականությունը և ուղղափառ դավանությունը և մեր Եկեղեցվո միասնությունը: Եվ վերջապես երրորդ՝ նույնքան նվիրական ավանդ մը կնկատենք Մենք ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ և գերագույն շահերու գիտակցությունը մեր հավատացյալ ժողովուրդին՝ Հայ Ազգին՝ և իր Հայրենի հողին, ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ:

Մեր Մայր Հայրենիքը մեզի համար լոկ աշխարհագրական ըմբռնում մը չէ, այլ միաժամանակ սրբավայր մը նվիրական, Փրկչի լույսի իշման խորհրդով, մեր ժողովուրդի հոգևոր կյանքի բազմադարյան փորձով և Աս-

տուծո փառքը երգող հոյակերտ սուրբ տաճարներով, որոնք հոչակյալ կոթողներն են հայու հավատքին ծնունդ առած ճարտարապետական հանճարին: Հայրենիք, որ այսօր ապահովության և խաղաղության պայմաններու մեջ կվերաշինվի և կծաղկի նյութական, իմացական և բարոյական իմաստով, շնորհիվ նո՛ւյն մեր ժողովուրդի աշխատանքին և հանճարին:

Անա՛, սիրելի՛ նորապսակ Բարգեն սրբազան, այն մեծ ավանդները, զոր կոչված եք պահելու և պահպանելու և այդ ոգիով հովվելու և առաջնորդելու հայ հավատացյալ ժողովուրդը: Մենք վստահ ենք, թե Դուք այդ գիտակցությամբ և այդ ուխտով եկաք Մայր Աթոռ և ընդունեցիք Մեր ձեռնադրությունը: Այդ մասին կվկայեն Ձեր անձը և Ձեր անցյալ գործունեությունը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության շրջանակներ: Մենք Ձեզ ճանչցանք իբրև

ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՇՈՒՄ Է ԲԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱԿԱՏԸ

հավատավոր, անձնվեր սպասավոր Ս. Նկեզեցվո, իբրև լուսամիտ, իմաստուն և գործունյա հոգևորական, և իբրև հարազատ զավակը մեր Ազգին և Հայրենիքին: Դուք կոչված եք այժմ ստանձնելու առավել պատասխանատու պաշտոն, իբրև Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց, որ կսպասեն Ձեզ այդ հեռավոր ափերուն

վրա ապրող շուրջ վաթսուն հազար Մեր հավատացյալ զավակները: Տարե՛ք անոնց բոլորին անխտիր Մեր ջերմ սիրո ողջույնը և օրհնությունը, Մեր պատգամը խաղաղության, սիրո և միության, Մեր լավագույն բարի մաղթանքներով հանդերձ: Թող ասված իր կենարար հովանին տարածե Հարավային Ամերիկայի մեր բոլոր եկեղեցիներուն և հավատացյալ հայ ժողովուրդին վրա, պահելով զանոնք անսասան, շեն և պայծառ, հոգևոր կյանքի շինության ճանապարհին վրա:

Տարեք նաև Մեր ողջույնն ու օրհնությունը Հարավային Ամերիկայի տեղացի ժողովուրդներուն և բարեխնամ պետական իշխանություններուն, որոնք իրենց ծոցին մեջ ազնվորեն հյուրընկալած են մեր ժողովուրդի զավակները: Թող Տերը պահե պահպանե այդ երկրները բարգավաճության և խաղաղության մեջ:

Սիրելի՛ սրբազան, Մենք վստահ ենք, թե աստվածային շնորհներով զարդարված և Ս. Էջմիածնի լույսով ոգեշնչված, Դուք հաջողությամբ պիտի պսակեք Ձեր առաքելությունը՝ ի մխիթարություն Մեզ և Հարավային Ամերիկայի հավատացյալ ժողովուրդին:

Ձեզ կմաղթենք ի սրտե բաջառողջություն, ուժ և եռանդ և լավատեսություն Ձեր գործունեության ընթացքին, և կսպասենք շուտով բարի լուրեր ստանալ Ձեզմե, Ձեր նոր աշխատանքի վայրեն:

Աշխատեցե՛ք հավատքով, աշխատեցե՛ք ոգևորությամբ և անսահման սիրով դեպի մեր Ս. եկեղեցին և հավատացյալ ժողովուրդ և քայլ առ քայլ բարձրացե՛ք դեպի Մեր և Ձեր սուրբ իդեալներու իրականացումը:

Թող ամենակարողն Աստված ըլլա Ձեզ միշտ օգնական, պահապան և զորավիգ Ձեր եկեղեցաշեն և ազգանվեր գործոց մեջ:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ»:

«Յաւէտ օրհնեալ լերուք ի մէջ: Ամէն»:

Վեհափառ Հայրապետի հոգեշունչ քարոզից հետո, նույն հանդիսավորությամբ շարունակվեց սուրբ պատարագը:

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Մաղկյա դահլիճը, ուր բազմեց Հայրապետական Գահի վրա և ընդունեց շնորհավորություններ: Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, հանուն Մայր Աթոռի միաբանության, սրտագին շնորհավորեց Վեհափառ Հայրապետին՝ այս նոր շնորհաբաշխության առթիվ, երբ Հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության շարքերը ամրապնդվում են նոր ու խոստումնալից ուժերով, կազմակերպվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ շարունակվում է Հայ եկեղեցու վերելքն ու վերազարթոնքը:

Մայր Աթոռում կատարված այսօրվա եպիսկոպոսական ձեռնադրության ուրախ առթիվ ստացվել էին մի շարք շնորհավորական պաշտոնական հեռագրեր: Վեհափառ Հայրապետի հրամանով հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը կարդաց Արգենտինայի հայոց թեմի կենտրոնական վարչության, հոգևոր դասի և թեմի հայ հավատացյալների անունից հոգեշնորհ Տ. Հարությունն ծայրագույն վարդապետ Մուշյանի կողմից տրված հետևյալ շնորհավորական հեռագիրը, որի ընթերցումը ընդունվեց ջերմ ծափերով.

«Հանուն Կենտրոնական վարչության և հավատացյալ ժողովրդյան կշնորհավորենք Ձեր եպիսկոպոսացումը, մաղթելով Աստուծո հովանին»:

Աստուծո ուղղված գոհաբանական աղոթքից հետո, նորապսակ Բարգեն սրբազանը շնորհակալության և երախտագիտության սրտագին խոսք ասաց Վեհափառ Հայրապետին ու խոստացավ Աստուծո օգնությամբ և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ արդարացնել իրեն՝ իր նոր ու պատասխանատու պաշտոնում:

Ժամը 4-ին, ի պատիվ նորապսակ սրբազանի, Վեհարանի սեղանատանը տրվեց ճաշկերույթ, որն անցավ ջերմ, սրտագին մթնոլորտում: Սրբազանին շնորհավորեցին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից պրոֆ.-դոկտ. Ա. Առաքելյանը, Վերստուգիչ հանձնաժողովի անունից պր. Գրիգոր Բեքմեզյանը, Մայր Աթոռի երիտասարդ միաբանների անունից հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը և ուրիշներ: Վերջում շնորհակալության խոսք ասաց Բարգեն սրբազանը և խոստացավ իր եկեղեցանվեր և ժողովրդանվեր ծառայությամբ արդարացնել Վեհափառ Հայրապետի վստահությունը և իր ժողովրդի սերը:

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված «Էջ Միածին ի Հօրէ» շարականով և Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով:

Մայիսի 15-ի առավոտյան, գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոսը հրաժեշտ առավ Մայր Աթոռից և Փարիզի վրայով մեկնեց դեպի Բուենոս-Այրես:

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԲԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՊԱՏՅԱՆ

Նորապսակ Տ. Բարգեն եպիսկոպոսը, ավազանի անունով Հովսեփ, բնիկ անթաբցի ծնողների զավակ, ծնվել է 1918 թվականի դեկտեմբերին, տարագրության ճանապարհի վրա։

1920 թվականին ծնողների հետ հաստատվում է վերջնականապես Հալեպ քաղաքում, և իր նախնական կրթությունը ստանում է Հալեպի անթաբցիների հանրածանոթ կրթասիրաց երկսեռ վարժարանում։

1932 թվականին փայլուն կերպով ավարտում է դպրոցը և նույն տարվա սեպտեմբերին ընդունվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը։

Ուսանողության տարիներին նա աչքի է ընկնում իր ջանասիրությամբ, կարգապահությամբ, և սիրվում բոլոր դասախոսներից, որպես համեստ և աղնիվ ուսանող։

1936 թվականին հաջող կերպով ավարտում է ժառանգավորաց վարժարանի քառամյա դասարանական բաժինը և 11 ընկերների հետ սարկավագ է ձեռնադրվում հոգելույս Տ. Թորգոմ պատրիարքից ու ընդմիշտ իր կյանքն ու գործունեությունը կապում Ս. Երուսաղեմի միաբանության հետ։

Հովսեփ սարկավագը եղել է միշտ իր դասարանի ուսման գերազանցիկներից մեկը և առաջինը իր վարք ու բարքով։

1939 թվականին ավարտելով ընծայարանի եռամյա դասընթացը, հոգելույս Տ. Մեսրոպ պատրիարքից ձեռնադրվում է կուսակրոն քահանա, և Ս. Աթոռից ներս, հակառակ իր շատ երիտասարդ տարիքին, կոչվում է պատասխանատու վարչական-վանական պաշտոնների։

1940—1942 թվականներին նշանակվում է Երուսաղեմի Ս. Աթոռի Ելևմտից տեսուչ։ 1943—1948 թվականներին ձեռնհասորեն վարում է Ցաֆայի հայոց Ս. Նիկողայոս և Ռամլեի հայոց Ս. Գևորգ վանքերի ընդհանուր և երևմտից տեսչությունը, միաժամանակ որպես կրթական տեսուչ ղեկավարելով Յաֆայի հայոց Ս. Գլխադրի վարժարանը, ուր բարձր դասարաններին դասավանդում է դրարար և քրիստոնեական։

1948—1959 թվականներին նշանակվում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Իսրայելում։

Հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետը իր տեսչության տարիներին ծավալում է կրթական, մշակութային, շինարարական բեղուն գործունեություն, մեծապես սիրվում իր ժողովրդի կողմից և բաց արժանվելն գնահատվում վանական իշխանության կողմից։

Տ. Բաբգեն վարդապետ Ապատյանը, իր վարչական ծանր պաշտոնավարության երկար տարիներին, զբաղվում է նաև գիր ու գրականությամբ, ուսուցչական ու թարգմանական աշխատանքներով։ Նա աշխատակցում է «Սիոն» ամսագրին, ուր ստորագրում է բովանդակալից հոդվածներ՝ փիլիսոփայական, կրոնական, մատենագրական հետաքրքիր թեմաների շուրջ։

1958 թվականի հոկտեմբերին Տ. Բաբգեն վարդապետը առաջին անգամ ուխտի է գալիս Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք, ներկա լինելու Վեհափառ Հայրապետի հոբելյանական հանդիսություններին։

1959 թվականի մայիս ամսին նշանակվում է Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի Հայոց։ 1959 թվականի մայիսի 10-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Մայր Տաճարում, ձեռամբ Ազգիս Վեհափառ Հայրապետի։

Նորապսակ Տ. Բաբգեն սրբազանը հայ եկեղեցականության պատրաստված և նվիրյալ հոգևորականներից է, լի եռանդով և հավատով՝ սրտագինս ծառայելու մեզ Ս. Եկեղեցուն, հայ ժողովրդին։ Նա գտնվում է իր ուժերի ծաղկման և գործունեության հասուն շրջանում։

Տ. Բաբգեն սրբազանին սրտանց բարեմաղթում ենք նորանոր հաջողություններ, իր առաջ նոր բացված ազգային-եկեղեցական ընդարձակ ասպարեզում և վստահ ենք, որ նա որպես խոհուն, լուրջ ու հավատավոր հոգևորական, իր բարեմույն բնավորությամբ, քաղցր հոգով, կարդարացնի Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և իր ժողովրդի սերը։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Ճարտարապետական փոխանցումի
Երևանյան բնմի)

ԾԱՂԿԱՐԱՐ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տասնիններորդ դարի Ս. Էջմիածնի զարգացած և բաղմարդյուն միաբանների շարքում իր պատվավոր տեղն է գրավում ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը։ Նա հայտնի է եղել որպես նկարող, ծաղկող. նրան անվանել են Ծաղկարար։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի «Բանբեր»-ում (1956 թ., № 3, էջ 131—139) քիմիագետ Տ. Ղազանչյանը գրել է Ծաղկարարի մասին հետևյալը. «Հայաստանում քիմիայի զարգացման պատմությունն ուսումնասիրելու ժամանակ մեր ուշադրությունը դրավեցին Մատենադարանում պահվող երկու ձեռագիր (№ № 6247 և 9029), որոնք պատկանում են Սահակ Ծաղկարար Տեր-Գրիգորյանի գրչին։

Այս ձեռագրերը լրացնում են այն պատկերացումը, որ մենք ունենք 19-րդ դարի կեսերին քիմիական տնայնագործության և տեխնո-քիմիական գիտելիքների աստիճանի մասին Երևանի նահանգում»[1]։

Տ. Ղազանչյանը իր հոդվածում մանրամասնորեն խոսում է Ծաղկարարի գործունեության մասին քիմիայի բնագավառում։

Իր հոդվածում Ղազանչյանը խոսելով Հայաստանի ԺԹ դարի փոքրիկ գործարանների և տնայնագործական արհեստանոցների՝ կաշվի գործարանների, ոսկերչանոցների, կլայեկչանոցների, ներկատների մասին, օգտագործում է Ծաղկարարի հիշված ձեռագիրը և եզրակացնում. «Թեպետև Մատենադարանում պահվող այդ ձեռագրերը պատկանում են Ծաղկարարի գրչին, բայց նրանց մեջ հավաքված «խրատները» մեկի հեղինակություն չեն, այլ արհեստավորական փորձի ամփոփումներ, որոնք անցել են սերնդից սերունդ և իրենց ուժը պահել են նաև 19-րդ դարում»[2]։

Հայ մեծ գրող Միքայել Նալբանդյանը շատ կարևոր նշանակություն էր տալիս Սահակ եպիսկոպոսի գիտելիքներին, հատկապես որդան կարմրի հավաքման և ներկի պատրաստության գործում։ Նալբանդյանը 1863 թվականի մայիսի 1-ին իր Ղազարոս եղբորը գրած նամակում Սահակ Ծաղկարարի մասին գրում է. «...Անանիայի ուշադրությունն եմ դարձնում «coccinelle» ընտանիքին պատկանող որդների պատմության ուսումնասիրության վրա, թեև, որքան մեզ հայտնի է, այդ որդերը գտնվում են «կակտուս» ընտանիքին պատկանող բույսերի վրա. այնուամենայնիվ, նա (որդան կարմիրը) գտնվում և աճում է Հայաստանում, Արաքսի հովտում։ Առաջին անգամ նրանց հայտնաբերել է 20 կամ 25 տարի առաջ ծաղկարար, եպիսկոպոս

1 «Բանբեր Մատենադարանի», 1956 թ., № 3, էջ 131։

2 Նույն տեղում, էջ 131—132։

Սահակը, որի համար և ռուս կառավարության կողմից արժանացավ ցմահ կենսաթոշակի։ Այս եպիսկոպոսը մեռավ 50-ական թվականներին և նրա հետ գերեզման իջավ (ներկ) պատրաստելու եղանակը։ Մինչդեռ որքան այս վերին աստիճանի թանկարժեք որդերի պատմությունն ու կյանքը լավ ուսումնասիրենք, նաև նրանց աճեցնելու եղանակը, ապա կարելի է Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի փոքրիկ բրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել և ժողովել որդան կարմիրը— իսկ դա կարևոր բան է այնտեղի աղքատ շինականների համար։ Էջմիածնում տակավին կան մի քանի մարդիկ, որոնցից կարելի է իմանալ, թե ինչ տեսակ բույսերի վրա է գտել հանգուցյալը (այդ միջատները), իսկ եթե այդ մարդիկ չկան, կարելի է նրանք (միջատները) որոնել ու գտնել, չէ՞ որ՝ եթե նրանք ապրել են այնտեղ մինչև հիշյալ եպիսկոպոսը, ապա, անպայման, այժմ էլ ապրում են։ Բայց առաջին գործն է՝ լավ ուսումնասիրել այս խնդիրը...»[3]։

Քիմիագետ Ղազանչյանը հիշատակում է Նալբանդյանի կարծիքը Սահակ Ծաղկարարի մասին և այնուհետև ավելացնում է շատ իրավացիորեն. «Միքայել Նալբանդյանի այս գնահատականը Սահակ Ծաղկարարի գիտելիքների մասին ցույց է տալիս, որ մենք Սահակի տետրերը պետք է դիտենք որպես իր ժամանակի համար ակտուալ պրակտիկ դիտելիքների ժողովածուներ...։

Եթե Մ. Նալբանդյանին հայտնի լիներ Ծաղկարարի վերոհիշյալ տետրերի գոյությունը, ապա կարելի է ենթադրել, թե Նալբանդյանը կառաջարկեր, լեզվական խմբագրումից հետո, հրատարակել և Արարատյան դաշտի հայ շինականների մեջ տարածել հենց Սահակի տետրերը. մանավանդ որ Սահակի տետրերը բացի որդան կարմրից ներկ պատրաստելու խրատներից, իրենց մեջ պարունակում են ուրիշ շատ արհեստներին վերաբերող խրատներ ու գիտելիքներ»[4]։

Մատենադարանում, բացի վերոհիշյալ երկու ձեռագրերից (№ № 6247 և 9020), կան նաև երկու այլ ձեռագրեր, որոնք նմանապես պատկանում են Ծաղկարարի գրչին, 6246 և 6243 համարների տակ։

№ 6243 ձեռագիրը պարունակում է մանրանկարչության սնագրություններ, մեծ մասը ասեղնագործության համար արված նմուշներ, որոնք գրավել են մանրանկարչությամբ և ասեղնագործությամբ զբաղվող մասնագետների ուշադրությունը։

ԾԱՂԿԱՐԱՐ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկ № 6246-ի տակ գրանցված ձեռագիրը պարունակում է 321 նկարներ, որոնց մասին առանձին-առանձին բացատրություն է տվել Ծաղկարարը։ Կան նաև ծաղրանկարներ ժամանակի արտառոց երևույթների, ինչպես աշխարհականների և հոգևորականության վերաբերյալ։

Սահակ եպիսկոպոսի մյուս աշխատությունն է Մատենադարանի № 9029 փոքրիկ ձեռագիրը։ Այս ձեռագրի մասին պրոֆեսոր Ե. Տեր-Մինասյանը գրում է հետևյալը. «№ 9029 փոքրիկ ձեռագիրը պարունակում է մի շարք խրատներ, ավելի ճիշտ՝ ռեցեպտներ վարաղ անելու, ոսկեջուր պատրաստելու, գրքի կող վարաղելու, քիչ ոսկով շատ ոսկեջուր անելու, արծաթաջուր պատրաստելու, արծաթաջրելու մասին և այլն։ Վերջում խրատներ, թե ինչպես պետք է պատրաստել զանազան ներկեր։ Գրքույկը գրել է երևանցի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս մահտեսի Տեր-Գրիգորյանը իր հոր տանը Երևանում, 1840 թվականի օգոստոսի 28-ին։ Գրքի մեջտեղում հեղինակը պատմում է իր ժամանակի անցքերի մասին, ինչպես իրեն հանձնարարվել է «որդան կարմիրը» հավաքել, որ նա կատարել է, ինչպես պետությունը նրան տարեկան երկու հարյուր ռուբլի ռոճիկ է նշանակել և այլն»[5]։

3 Միքայել Նալբանդյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 4-րդ, Երևան, 1949 թ., էջ 215։

4 «Բանբեր Մատենադարանի», 1956 թ., № 3, էջ 132։

5 «Էջմիածին» ամսագիր, 1958 թ., № 6Բ, էջ 54։

Մատենադարանի № 6247 ձեռագիրը, որը կրում է «Բազմավէպ» խորագիրը, ինքնակենսագրական բազմաթիվ նյութեր է պարունակում իր մեջ։ Ծաղկաբեր Սահակ եպիսկոպոսը ձեռագիրն սկսում է հետևյալ խոսքերով. «Տեսրս այս ծանուցանէ ձեզ որպիսութիւն իմմէ, թէ որպիսի եղանակաւ եմ յառաջ եկեալ յորովայնէ մօր իմոյ, և թէ յորում ժամանակի եմ եկեալ յԱթոռս այս՝ միաբան, և թէ յորում ժամանակի եմ ելեալ ի դպրանատանէն...» (էջ 1)։

Համաձայն վերոհիշյալ ձեռագրի տվյալների, Սահակ, Իսահակ կամ Սհակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը ծնվել է 1780 թվականին Երևանում, մահտեսի Տ. Գրիգոր քահանայի ընտանիքում։ 17 տարեկան հասակում նա տարվել է Ս. Էջմիածին ուսանելու։ Նրա հայրը՝ մահտեսի Տ. Գրիգոր քահանան, ուխտում է իր որդուն նվիրել Մայր Աթոռին, ինչպես նաև Ս. Գեղարդին սպասավորության։ Ղուկաս կաթողիկոսի օրով, 1797 թվականի հոկտեմբերին, բերում են նրան Ս. Էջմիածին, որտեղ մնում է և ծառայում նա 61 երկար տարիներ, մինչև իր մահը՝ 1858 թվականը։

Սահակ եպիսկոպոսը իր «Բազմավէպ» աշխատության մեջ նկարագրում է իր կես դարյան կյանքը Ս. Էջմիածնում։ Ձեռագիրը արժեքավոր է Մայր Աթոռի ժամանակակից պատմության համար և արժանի հրատարակության։

Սահակ եպիսկոպոսի նկարագրությունից երևում է, որ իր ժամանակի Ս. Էջմիածնի վանական ժառանգավորաց դպրոցը այնքան էլ նախանձելի գրության մեջ չէր, ըստ ուսման մակարդակի։ Ահա այս հանգամանքը ստիպում է Դավիթ կաթողիկոսին՝ ապագա Ծաղկաբերին հանձնելու, որպես ուշիմ աշակերտի, վաղարշապատցի ոսկերիչ և ծաղկաբեր Տ. Հովհան քահանային, «արհեստ և գրագրություն սովորելու», «իսկ ՌՄԵ (1801) թվին հոկտեմբեր ամսոյն, եհան զիս լուսաւորեալ հոգի Դաւիթ հայրն, որ էր անբախտ կաթողիկոսն, Աստուած ողորմի իւր սուրբ հոգւոյն, որ ետ նմա, ի վարժատանէն, և յանձնեաց զիս վաղարշապատեցի ոսկերիչ և ծաղկանկար և քաջ գրագէտ Տէր Յոհանին աշակերտ յաղագս ուսուցանելոյ զայս ծաղկարարութեանս արհեստ և գրականութիւն» (էջ 1բ)։

Դավիթ կաթողիկոսի օրով վանական ժառանգավորաց վարժարանը համարյա կազմալուծվել էր և աշակերտները ուսանելու փոխարեն մոմ էին պատրաստում և այլ աշխատանքներ կատարում վանքում։ Ծաղկաբերը Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանի ուսանողական կյանքի մասին պատմում է հետևյալը. «...Դարձեալ երթամք վարժատանէն պատմեմք ձեզ մեծամեծսն, զոր անցեալ է ընդ գլխով իմով զանազան պատահմունք, որ երբեմն երբեմն անօգնական և անտէրունչ մնալոյս՝ պատահեալ են, որոց առաջինն են՝ կոչնակէն զանազան, թէ սառոյց կրելն, թէ արքատ ժողովելն՝ և թէ՝ այլ և այլ տեսակէն. և ով ոք որ հինքն են գիտեն զամենայն արարողութիւն կոչնակաց. դաս առնուլ ո՛չ զոյր, իրրև զմշակքս հացափոր՝ ծառայէինք մինչև ցերեկոյ...» (էջ 6)։

Այնուհետև իր «Բազմավէպ»-ում նա խոսում է նաև վարժարանի սննդի մասին. «Եւ ի նմին վարժատան ինչ ո՛չ ունէաք, այն ձէթն որ վառելու էին տալիս, փռնատան կրակովն փուափու անելով, մխլոյ էի շինում ուտում։ Ցաւուր միում ճրագի վրայ եփեցինք, որ ձեռքերներս այրուում էր, վեր էինք դնում։ Այսպիսի դառն նեղութեամբ օր անցուցինք անդ։ Ի ամեռային ժամանակին սիրտս դահին մեղր ուզեց· մին փարայի քուսպ առի, 3 փարայի դոշապ, չրով քուսպն տրորեցի և դոշապն խառնեցի եփեցի, որքան կերի, մնացածն գդալն մին փարայի ծախեցի, չորս փարէս հանեցի, և մնացածն մոնթերին բաշխեցի, և շատ անգամ շատ մոնթ միմեանցից հաց փողով էին առնում։ Ստամպօլցի մին տղայ տռնօյ անուանեալ խաչատուր կայր սեղանիցն վարդապետաց առաջին, հացն և կերակուրն փախցնում էր, ու պահում էր՝ մոնթերին փոխ տալով հացնս» (էջ 6)։

Ծաղկաբերի կյանքի օրերը համընկել են Մայր Աթոռի ամենածանր օրերին՝ Դավիթ-Դանիելյան վեճերի շրջանին, ինչպես նաև ռուս-պարսկական պատերազմների տարիներին։ Տեսրակում հանդիպում ենք նաև ժամանակի դասատուների անունների, որոնք դասավանդել են Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանում։

Ղուկաս կաթողիկոսի օրով Էջմիածնի ժառանգավորաց վարժարանի վարժապետն է եղել «կծծի» անվանյալ Մարգար եպիսկոպոսը, ապա «գարի» Եսայի վարդապետը, որը «Սաղմոսն ետ ինձ բերան անել Գ Գ փառք, յետոյ կանոն կանոն, ու յետոյ Գ կանոնն համար առաւ։ Սորա ժամանակին անխելք տիրացու Պետրոս և Մանուկ անուն ոմն պօլսեցի երրորդ խալիֆայ մի կայր...» (էջ 7բ)։

Վերոհիշյալ ուսուցիչներից հետո դպրոցում ուսուցիչ է լինում «ժամասաց Մատթէոս եպիսկոպոսն, որ սորա ժամանակին Դաւիթ սրբազան կաթողիկոսն առաջին բարերարն էր, եհան զիս ի վարժատանէն և ետ աշա-

կերա հանգուցեալ բարեկամեցող վարպետին իմոյ...» (էջ 8)։

Ժառանգավորաց վարժարանից դուրս գալուց հետո, ինչպես տեսանք, Ծաղկարարը գնում է Տ. Հովհանի մոտ սովորելու։ Այս մասին նա գրում է. «... Նորին սուրբ հայրութիւնն անխնայօրէն ուսոյց զիս, որչափ ամանն իմ տարաւ և որչափ որ ունիմ, ի նմանէ եմ ընկալեալ բաղում տառապանօք. խնդրելով ի Տեառնէ զօգնութիւն և պահպանութիւն, որ և գտի· դոր սիրեաց անձն իմ օգուտ մեզ և պարծանք Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի և սորին արժանաւոր և ազգընտիր սրբազնասուրբ փեսայիցն և հոգևոր ծնողացն և բարերար ողորմած տէրանց իմոց սրբազնագունից» (էջ 2)։

Դեռևս փոքրուց Սահակ եպիսկոպոսը մեծ սեր է ունեցել ծաղիկներ աճեցնելու գործում։ Այդ սերը նրան դարձնում է ծաղկարար։ Նա Հովհան քահանայի մոտ սովորում է ազծաղիկսն, զթռչնագիրն, զերկաթագիրն, զձև բասմայ գիրն, զնատր գիրն և զգլխագիրն նորա· եւ ինձ վարպետն իմ զմին թաղայ թուղթ ծաղկելոյ, որ և ծաղկեցի...» (էջ 2բ)։

Այնուհետև Սահակ Ծաղկարարը իր «Բազմավէպ» տետրի մեջ խոսում է ժամանակի միաբանական կյանքի մասին։ Միաբանների կյանքի պայմանները շատ վատ են եղել։ Ժաման միաբանական խուցերի ցրտությունը նա նկարագրում է հետևյալ խոսքերով. «Ժամանակն այն, ձմեռն էր սաստիկ ցուրտ, բոխարի ոչ գոյր, գնացեալ



ԱՐԱՐԱՏ ԼԵՌԸ, ԽՈՐ ՎԻՐԱՊ՝ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԸ
(Մատենադարան՝ Մ 6246 ձեռագրից)

էի դոնապանի քուրսու տակին նստած էի... ոչ օրինաւոր տեղաշոր, ոչ խալի, ոչ քէշայ, և ոչ կարպետ, ոչ հին և ոչ նորն՝ ոչ ունէի, մին հատ գոշակ կայր 2 տեղ մեծ և փոքր ծակ, և այն ծակ տեղի վրայ էի նստում որ ձկօղքն չի տեսնուն որ ինձ՝ իմ արհեստիս կեօրայ ամօթ չի լինի։ Բայց սիրէր լուսահոգի Դանիէլ սրբազանն ինձ նուաստիս. ի՞նչ տեսակ թուղթ, թէ մեծ թէ փոքր մին հատ թէ 2 հատ թէ 10 հատ որժամ տանէի ծաղկեալ թուղթն մատուցանէի, շնորհէր ինձ մին հատ Պօլսոյ ոսկի, որ էր գոտգնս» (էջ 9բ)։

Դավիթ Ի Էնագեթցի կաթողիկոսը մեր Եկեղեցու պատմության մեջ միշտ բացասական գծերով է ընութագրվում, սակայն նա եղել է լուսամիտ անձ, ինչպես նաև Էջմիածնի աշակերտների ուսման և կենցաղային լավ պայմանների մասին մտածող հայրապետ, հակառակ դժնդակ օրերի։ Դավիթ կաթողիկոսի մասին, պատմության էջերում, ինչպես նաև արխիվներում կան բազմաթիվ պատմական փաստեր, որոնք խոսում են հոգուտ նրա դրական գծերի։

Դավիթ կաթողիկոսի որով Զաքարիա վարդապետը սկսում է Մաղկարարին հալածել, սակայն երբ կաթողիկոսը այդ մասին տեղեկանում է, բարկանում է վարդապետի վրա, իմանալով, որ Մաղկարարը բնդունակ աշակերտ է, և սաստելով Զաքարիա վարդապետին ասում է. «Տէր Յովհաննին թարխան եմ արել, տարին 12 թուման փող եմ տալիս. պատիւ և փիլոն եմ տալիս, մեծ մեծ ընծայ եմ խոստացել նորան, որ նա այդ տղային (խոսքը Սահակ Մաղկարարի մասին է—Վ. Վ.) բան ուսուցանէ, և կամենում եմ, որ 12 տղայ ևս լինեն, բան ուսանին. մէջտեղն մին տղայ կայ, դու էլ նորան ծեծում ես ու դուրս ես անում...» (էջ 4)։

Մաղկարարի «Բազմավէպ»-ում հիշատակություններ կան նաև Ցիցիանովի, ինչպես նաև Դավիթ-Դանիելյան դպրքերի մասին, որոնք հայտնի են պատմության։

Մաղկարարը նկարագրում է նաև Կուտուվիչի Երևանյան արշավանքը, ինչպես նաև Դանիել կաթողիկոսի մահը, որի հետ եղել է Երևանի բերդում. «Եւ մինչ էաք մեք ի բերդն ի տանն հաճի Նաւուդալին, նստէր Դանիէլ սրբազան հանգուցեալ կաթողիկոսն. և մինչ վախճանեցաւ, սկսան կարգ թաղմանն կատարել երեկոյեանն մութը ժամանակին սհաթի 3-ին։ Յանկարծ սկսան զօմպարայ թոփի գիւլլայ պարսպի մէջն մերձ դագաղին...»։ Ապա, նկարագրելով պարսից և ռուսաց ընդհարումը, ավելացնում է. «...ամփոփեցին հարաւային կողմն ի ներքոյ զանգակատան լուսաւորեալ հոգի Դանիէլ սրբազանին...» (էջ 10ր)։

Սահակ Մաղկարարը 1810 թվականի դեկտեմբերի 10-ին ձեռնադրվում է արեղա, իսկ երկու տարի հետո, 1812 թվականի հոկտեմբերի 12-ին, ստանում է վարդապետական աստիճան։

Հայր Ղևոնդ Ալիշանը նույնպես բարձր է գնահատել Մաղկարարի աշխատանքը որդան կարմիր հավաքելու և ներկ պատրաստելու գործում։ Նա իր «Այրարատ»-ում, գնահատելով Մաղկարարի նկարը, գրում է նրա մասին. «Ցիշխանութեան պարսից ի վերայ երկրիս մերոյ կուսակալք իսկ Երևանայ խանամով տային ժողովել զորդն ի սահմանս վարչութեան իւրեանց և առաքէին ի վայելս պաճուճասէր պարսից, ի փոխանակել զնոսա այժմեան ռուսաց պետութեան, նոյնպէս առնէին և կողմնակալք հայկական նահանգին, յորոց մի յառաջնոցն և ազգային՝ Բեհբուդեանն Բարսեղ՝ յորդորեաց ի գործ զայնու ժամու հռչակեալ Մաղկարար Սահակ Տէր-Գրիգորեան եպիսկոպոս Էջմիածնի, զաշակերտ Տեառն Յովհաննու ճարտար գրագրի, որոյ յամի 1833 երթեալ ի կողմանս Խոր Վիրապի ժողովեաց իրրև 50 կշիռ (կիլոգրամ), և առաքեալ առ կովկասեան փոխարքայն վարձս և պատիւ առաքեաց եպիսկոպոսին...»[6]։

Մաղկարարը իսկապես լավագույն մասնագետն է եղել իր ժամանակին որդան կարմիր հավաքելու, ներկ պատրաստելու ասպարեզում և մեծ ծառայություն է մատուցել ռուս կառավարությանը[7]։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակած նյութերից հայտնի է դառնում, որ Կովկասի կառավարչապետ Ռոզինի և ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոս երջանկահիշատակ Հովհաննես Կարրեցու միջև փոխանակվել են գրագրություններ Սահակ Մաղկարարի մասին։ Կաթողիկոսը Ռոզինին գրում է, որ «Թէպէն եպիսկոպոսն ըստ պաշտօնի իւրում յայսմ Աթոռոյս Սրբոյ կարի հարկաւոր է մեզ, առանց որոյ դժուարութիւն մեծ պատահի ի գործս մեր, բայց այսու ամենայնիւ գիտելով մեր, թէ հմտութիւն նորա յայսմ մասին տուն դմենագոյն օգուտ ընծայել տէրութեան...» (էջ 23)։

Սահակ եպիսկոպոսն իր մատուցած ծառայությունների համար ռուս կառավարությունից 1834 թվականին նվեր է ստանում ամետիստյա ականակուռ մատանի, իսկ 1839 թվականի հունիսից կայսրը նրան տարեկան 200 ռուբլի ցմահ թոշակ է նշանակում։

Հովհաննես Ը Կարրեցի կաթողիկոսը ևս գնահատելով Մաղկարարի ծառայությունները, նրան եպիսկոպոս է ձեռնադրում 1832 թվականի մայիսի 15-ին[8]։

Մաղկարար Սահակ եպիսկոպոսը անձամբ զբաղվել է որդան կարմիր ներկ ստանալու գործով և այդ ուղղությամբ կատարել է բազմաթիվ քիմիական փորձեր, որոնց մա-

---

6 Հ. Ղ. Ալիշան. «Այրարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 484։

7 Լ. Մելիքսեթ-Բեկ. «Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), № 2—3, 1946 թ., էջ 17։

8 Ուռմանյան. «Ազգապատում», հատ. Գ. Երուսաղեմ, 1927 թ., էջ 3636։

ԾԱՂԿԱՆՆԱՐ
(Մատենադարանի № 6246 ձեռագրից)

սին խոսել է 1830 թվականի հունիսին գրած իր նամակում, թե ինչպես պետք է սպանել միջատին և ստանալ ներկ։ Պարզվում է, որ նա փորձել է որդը սպանել սառը և տաք քացախով, քացախով և կրափոշիով, մաքուր կրաջրով, գինիով, ծծմբային գազով։ Բայց միայն կալաքարի (պոտաշի) ջրով ու գինիով նրան հաջողվել է բավարար արդյունքների հասնել։ Այնուհետև նա ստացել է տարբեր ներկեր։ Պոտաշով սպանված որդերից նա պատրաստել է կնքաներկեր և ջրաներկեր։ Ծաղկարարների համար նա ավելի լավ է համարում գինու միջոցով սպանված որդերից ստացած ներկերը, որ լաւագոյն գեղեցիկ և պայծառափայլ երևէր քան ղեղեալ յորդանէն մեռուցելոյ ի ջուր կալաքարիս»։

Ծաղկարարի գործով զբաղվողները ցավով են նկատել, որ նրա «Բազմավէպ»-ից պակասում են զգալի թվով թերթեր, որոնք հավանաբար պարունակում էին գործնական հրահանգներ որդան կարմրից ներկ ստանալու մասին։

Այս առթիվ Սահակ Ծաղկարարի ազգական էմին Տեր-Գրիգորյանը գրում է. «Ինչպես երևում է, այս բնագրից հանված են շատ երեսներ, մինչև անգամ կարծում են հանված է միջից մի ամբողջ տետրակ մոտ 14—16 թերթից, կամ մի քանի տետրակներ այդքան թերթերից։ Այդ ապացուցանվում է նրանով, որ 16-րդ թերթի վերջին երեսը վերջանում է 1815 թվականով, իսկ 17-րդը սկսում է անկապ և 1833 թվականով։ Երևում է նաև ձեռագրում եղած երկու տետրերի կարից և թղթերի գույներից. եթե իրոք հանված են այդպիսի տետրեր, պետք է կարծել, որ այդ արված է հորս մահից հետո էջմիածնում միաբանների ձեռքով, կամ երբ ուղարկեցի Վենետիկ Հայր Ալիշանին՝ այնտեղ։ Ես ավելի շատ առաջին կարծիքին եմ քան երկրորդը» (վերջին էջը)։

Ս. էջմիածնում Ծաղկարարից բացի որդան կարմիրով զբաղվել են նաև ուրիշները, նույնիսկ Եփրեմ կաթողիկոսը։

Ծաղկարարը մեծ կարևորություն է տվել արհեստներին։ «Ասացէք ինչ,— գրում է նա,— թէ ամենայն Եւրոպա և հզօր տէրութիւնք, որ պայծառ անուն ունին, ուստի է պայծառութիւնք նոցա. ո՞չ ապաքէն արհեստաւորքն են, որ զանազան հնարս գործ ածեն իւրաքանչիւր քաղաքի գործատորքն, իւրաքանչիւր տէրանց, ես ըստ իմ տկար կարեաց ոչ խնայեցի աղքատ քսակին իմոյ և ոչ խնայեմ բնաւ յաղագս զանազան բանիցն ծախուց փորձելոյ և զհնարն գտանելոյ, որ Սրբոյ Աթոռոյս և գահակալի սորին և Սրբազան Սինոդին անունն, եղջիւրն բարձր առնեմ, թէ ինձ ոչ լինի կամակից և օգնական, ո՞վ է այն, որ զուր տեղն ախմախանայ՝ իւր քսակին վնաս տայ» (էջ 18բ)։

Ծաղկարարը նյութեր փնտռելու համար ճանապարհորդել է Անդրկովկասի մի շարք քաղաքներ։ Նա 1822 թվականին գնացել է Եղիսաբեթուպոլիս (այժմ Կիրովաբադ) քաղաքը, այնտեղ գտել է մի քար, որը Առաքել պատմագրի կողմից անվանված է «խամահ», որ նույնն է լերդաքարի հետ։ Դրա հետ միասին նա գտել է սև գույնի քար, որը ինքն անվանել է «հանքային մելան», քանի որ նրանից սև գույնի շատ լավ թանաք է պատրաստելիս եղել։ Մի այլ տեղ, երբ նա գրանում է «դահնայ ֆռանկիս» կոչված հազվագյուտ և թանկագին քարը, փնտռում և գտնում

9 Գրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ. հիշված աշխատություն, էջ 21։— Տե՛ս նաև Ց. Ղազանչյանի հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», 1956 թ., № 3, էջ 136։

է մի գիրք, որտեղից իմանում է այդ քարի հետ վարվելու եղանակն ու նրա ստացումը։

Որդան կարմիրի հավաքման գործը կազմակերպելիս նա մտահոգվում էր գյուղացիների շահերի պահպանմամբ։ Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ. «...Ի հեռաստանէն եկեալ մշակքն՝ զուր անցուցանեն ժամանակն տրտնջալով և լաւ չէ, որ իւրեանց բանիցն և գործիցն յետ են մնում և շատ մեղք է նոցա բերելն, լաւ դայրաթով մարդն մէկ իստիլ չէ կարելի որ ժողովի. 2, 3 հոգով որ աշխատին, հաղիւ կարեն ժողովել մին իստիլ և այն շատ գժուարութեամբ, ըստ որում, որդն այն, մինչ ելանէ ի բունոյ ի ծագման արեւուն, մինչև 3 սհաթ մնան յերեսս գետնոյն, և ապա կորնչին, որ մին հատ դեղի համար չեն կարող գտանիլ, որ արևն տաքանայ, ոմանց մրչիւնն, ոմանց թռչունն տանին, ոմանք ոտնակոխ լինին ի պաճարեղինաց որ անդ տանին արօտ և այսպէս փչանան և կորնչին։ Ասացի, թէ անձրև գայ ընաւ չերևին, քանի որ գետինն թաց է, որոց փորձն բազում անգամ առեալ եմ։

Թէ լսեն ինձ վասն մշակացն նորին, որ ժողովք ժողովրդոց մեծ բազմութեամբ ժողովում են (ասացի) զուր տեղն. չէ օգուտ նորին տէրութեանն, այլ այս է օգուտն, զոր ես վասն նորա տնօրինեցի, և տնօրինեմ։ Այն գիւղն, ուր գտանի որդն, նորա գիւղացւոյն այն ամսոյն ազատութիւն տան թագաւորական հարկէն, և հրամայեն նոցա տունն, որ 10 հոգի աւելի լինեն, նոքա տան 5 կամ 4 իստիլ, այն որ 7 կամ 8 հոգիք լինեն, նոքա տան 4 իստիլ, այսպէս ցամ առնելով, որ ժողովեն, տես քանի քանի օգուտ լինի տէրութեանն և ժողովրդոցն, առաւել նոցա, որք ի հեռաստանէ գան, և ոչ ժողովեն բնաւ, այլ ըստ հարկի պահանջման ասեն նոքա, թէ մեք այսքան, այսքան մշակք տուաք այս ինչ ժամանակի, որ շատ ծանր է և զուր նոցա դալն ի հեռուստէն։

Սոյն դիտմամբ օգուտ համարելով, գրեալ եմ նորին պայծառափայլութեանն և նորին դերազանցութեանն ես, փոխանակ պատասխանի շնորհակալութեան, ի նոցանէ ոչ ընկալայ մինչ ցարդ» (էջ 18բ)։

1836 թվականին Սահակ եպիսկոպոսը փորձ է անում էջմիածնում հիմնելու թղթի գործարան։ Ինչպես ինքն է նկարագրում իր «Բազմավէպ»-ում, թղթի գործարան հիմնելու միտքը նրա մեջ առաջացնում են էջմիածնի տպարանի կազմատնից դուրս գցվող թղթի ավելցուկները, որոնցով տաքացնում էին բաղնիքի ջուրը։ Ահա նրա նկարագրությունը թուղթ ստանալու, նկար տպել տալու և իր նախանձախնդրությունը այդ բոլորի նկատմամբ. «...Յամի Տեառն ի քանիսն ապրիլի, միշտ մտախոհ լինէի վասն կոտորակի թղթոցն, մանաւանդ, որք ի բերանոյ մամլոյ կազմարարին թափէին իբրև անպիտան, և առ ոտս կոխոտեալ անցանէին և ոչ ինչ համարէին, հողմատար լինէր, առաջին տպարանին, որ նորսն էր դեռևս տպարանն այնմ ժամանակին, մինչ կամեցայ բերել զնմանէ. լսեցի, թէ համամշին ժողովեալ է զբազմակոտորակ թուղթսն առ ի այրել բաղնիքումն, որ նուազ չերմասցի ջուրն։ Գնացի բաղնիքպանին մուտք արարի, և նա ասաց՝ կէսն այրեցի օգուտ չեղն, կէսն էլ տարի տուն բարձի մէջ դնելոյ, այնմ միջոցի որ թափէին, չէր զարթնալ միտք իմ. յերբ պակասեցաւ. սկսայ մտախոհ լինիլ վասն եղրահանութեանն, թէ յոր եղանակաւ կարեմ կազմել, որ պիտանի բան լինի, առի և բերի սակաւ ինչ զնմանէ։

Յաւուր միում աշակերտութեանս ժամանակին պատմեալ էր լուսահոգի Տէր Յոհան վարպետն, որ ինքն 12-ամեայ հասակի իւրում յաւուրս բազմաշահ և նորահրաշ Տեառն Սիմէօնի Սրբազան Կաթողիկոսին յԵրևանցւոյ, որոյ յաւուրսն ծաղկեցաւ Սուրբ Աթոռ մայրս մեր Սուրբ Էջմիածին. վասն թղթահանութեան և տպարանին, որ իբրև զճրագ լոյս տայ զաշխատանս նորա եղեալ ի վերայ աշտանակի, որոյ հողին Տէր լուսաւորեսցէ յարքայութիւնն իւրում դասելով ընդ երանելի հայրապետսն» (էջ 20բ)։

Ծաղկարարը նկարագրում է նաև իր թուղթ ստանալու առաջին փորձը. «Զկնի այսը, ի լուսանալ առաւօտուն, զկոտորակն թղթոց եդի ի մէջ ջրոյ թրջոց, և հանեալ եդի ի մէջ հաւանկի և սանդիտորամբ այնքան ծեծեցի, որ եղև իբրև զմածուցիկ իմն, և հանեալ եդի մաքուր աման, և լցի նորա վերայ ջուր, խառնեալ եղև կաթնանման, ուշիկ ուշիկ հանեալ եդի ի վերայ կտոր մի մահուդի, ի վերայ տախտակի եդեալ, տարածեցի ձեռքս, դարձեալ մահուդ և հարթ հաւասար տախտակ և քար ծանր եդի ի վերայ նորա մինչև քամեցաւ լաւապէս ջուրն և հանեալ չորացուցի, կոկեցի, գրեցի, և տեսի, որ ընդունի զգիրն և ոչ ծծեաց, ուրախացայ, դարձեալ ուրախացայ և արարի 3 հատ մեծն կէս թապադայի չափ, մինչ աւարտեցի, խնդիր արարի տպարանի վերատեսուչի «Ա» խալապսակ Նիսեայ անուանեալ Յովհաննէս վարդապետին, առ ի տպել զպատկերն Սուրբ Էջմիածնի, որ եդ առ գործարանն և տպեաց 3 հատ պատկեր Սուրբ Էջմիածնի ըստ փափաքանացս։ Եւ ուրախացեալ փառս ետու Աստուծոյ մերոյ, որ առատապէս տայցէ Հոգին Սուրբ Աստուծոյ, որ գիտողն է ամենայն գաղտնեաց և տայ պարգևս առատօրէն խնդրողին։

Ասացի, թէ ի կոտորակէ թղթոցն, որք ելանէին ի բերանոյ մամլոցն կազմարարի, յո-

րինեցի, տպեցի, և խնդիր մի վասն այսր, և վասն զանազան գործոց ի վերայ սոյն Քղքոյ գրեցի առ Նորին Սուրբ Օծութիւն յաղագս ծանօթութիւն տալոյ» (էջ 20բ)։

Մենք տվեցինք համառոտ տեղեկություններ Սահակ եպիսկոպոս Ծաղկարարի մասին։ Նա եղել է գործունյա, ցանկացել է Էջմիածնում կատարել ուրիշ գործեր ևս, սակայն որոշ հանգամանքներ արգելք են հանդիսացել։

Ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը իր կյանքի վերջին շրջանում, հաշմանդամ, փոխադրվում է իր հոր տունը՝ Երևան, որտեղ և մահանում է 1858 թվականին։

Մեզ, Ս. Էջմիածնի միաբաններիս, այժմ, երբ ամեն հոգատարություն վայելում ենք մեր Վեհափառ Հայրապետից և ունենք նպաստավոր պայմաններ, մնում է, որ Ս. Էջմիածնի միաբանության դարավոր և գեղեցիկ գործն ու ավանդությունները շարունակենք արդյունավորությամբ և պատվով։

Պահե՛նք մեր սրտերում Մայր Աթոռի լավագույն և նվիրված միաբանների աթոռանվեր և եկեղեցաշեն սուրբ գործն ու ավանդությունները, զբաղվե՛նք գրով ու գրականությամբ ու շենացնե՛նք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մեր աղոթքներով ու աշխատանքով։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ երաժշտությունը, ինչպես և ընդհանրապես հայ կուլտուրան, բազմադարյան պատմություն ունեն։ Հայկական ժողովրդական մոնոդիկ երաժշտությունը երկար ժամանակի ընթացքում զարգանալով և պատմական տրադիցիաները հարստացնելով, այժմ ներկայացնում է իր բովանդակությամբ և արտահայտչական միջոցներով խիստ հարուստ ու բազմաձյուղ ազգային արվեստ։ Դեռևս միջնադարում, հայկական բուն ժողովրդական (գյուղական և քաղաքային) երաժշտության, դուսանների և աշուղների ժողովրդական պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի, հոգևոր երաժշտության և տաղային ստեղծագործության փարթամ ծաղկման պայմաններում, գոյություն է ունեցել ժամանակի համար բարձր զարգացման հասած երաժշտական տեսություն։ Բնական է, որ երաժշտագրության արվեստն ևս հայերին պետք է ծանոթ եղած լինի։ Տարբեր ժամանակներ հայ հրաժիշտ տեսաբանները մշակել և գործածել են նոտագրության մի քանի սիստեմներ, որոնք այս կամ այն չափով սրիգինալ լինելով, ազգային ինքնատիպություն ունեն։

Հայ պատմագրության մեջ նոտագրության վերաբերյալ ամենահին տեղեկությունները գտնում ենք Ե դարի հեղինակ Փավստոս Բյուզանդի «Պատմութիւն հայոց» աշխատության մեջ, որտեղ այդ դարի նշանավոր գործիչներից մեկի՝ Սահակ Պարթևի մասին ասված է. «Եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաւիցն»։ Ի՞նչ են ներկայացրել իրենցից երգողական տառերը, այժմ մեզ հայտնի չէ, քանի որ այդ նոտագրությամբ գրված հուշարձաններ կամ նրա մասին տեղեկություններ չեն պահպանվել։

Հին հայկական աղբյուրներում (քերականություններ) գտնում ենք մանրամասն տեղեկություններ նաև պրոսոդիայի հունական կլասիկ սիստեմի (Արիստոֆան Բյուզանդացի) մասին, բայց հետազոտությունը բերում է մեզ այն համոզման, որ հունական պրոսոդիայի սիստեմը միայն տեսական աշխատություններում է նկարագրված, գործնականում այն չի կիրառվել։ Այդ սիստեմը իր հիմնական հատկանիշներով չի համապատասխանել հայոց լեզվի օրինաչափություններին, ուստի չէր էլ կարող գործածվել։

Թ դարից պահպանված ձեռագրերում գտնում ենք ձեով և նոմենկլատուրայով հունականին որոշ չափով նման, բայց բովանդակությամբ բոլորովին այլ, էկֆոնետիկ նոտագրության մի օրիգինալ սիստեմ։ Այս սիստեմի նշանները գործածված են եկեղեցական գանազան գրքերում (օրինակ՝ Ավետարանում), այն տեքստերի համար, որոնք անհրաժեշտ են եղել կարդալ մի առանձին արտահայտչությամբ, գրեթե երգելով։ (Ռեչիտատիվային-պատմողական արվեստը, այսպես կոչված «Քիվ երգեցողությունը», «Քվեյլյաց երգը» հայերի մոտ ընդունված է եղել շատ ավելի հին ժամանակներից, այդ մասին կան Ե դարի պատմիչ Մովսես Խորենացու տեղեկությունները)։

Այս էկֆոնետիկ նոտագրությունը, որ ամենայն հավանականությամբ է—Ը դարերում ևս կիրառվել է, պահպանվել է նաև հետագայում և զարգացել, ճոխացել է։ Այդ սիստեմը մշակվելով, ավելի ու ավելի երաժշտական է դարձել, քանի որ բուն ռեչիտատիվն էլ զարգանալով մոտեցել է մեղեդիական արվեստին։ ԺԲ—ԺԳ դարերի շատ ձեռագրեր առատորեն պարունակում են նշանակված էկֆոնետիկ նշաններ։ Հայկական էկֆոնետիկ սիստեմը իր զգալի մասով պահպանվել է նաև այժմյան գրական լեզվում և կազմում է ժամանակակից կետադրության (տրոհության, առոգանության) նշանների սիստեմի մի կարևոր մասը։

Հայկական էկֆոնետիկ սիստեմում գործածվող իրենց մեղեդիական-ռեչիտատիվային իմաստը ձեռք են բերել, կապված ժամանակի հայ երաժշտական թվերգական արվեստի նորմաների, մասնավորապես, այն ժամանակվա երաժշտության լադա-ինտոնացիոն և ռիթմային օրինաչափությունների հետ։ Այդ սիստեմի սպառիչ նկարագրությունը և նրանով գրի առնված ռեչիտատիվային հատվածների վերծանության հետաքրքիր նմուշներ գտնում ենք հայ խոշորագույն երաժիշտ-գիտնական Կոմիտաս վարդապետի հոդվածում, որը տպագրված է „Zeitschrift der Internationalen Musikgesellschaft", 1899, № 1 (Leipzig) հոդվածում և կրում է Komitas Kevorkian, «Die armenische Kirchenmusik» խորագիրը[1]։

Բուն երաժշտական նոտագրության սիստեմներում նշանները կոչվել են խազ, որ նշանակում է գիծ։ Խազերի սիստեմները երկուսն են եղել և պատմականորեն հաջորդել են մեկը մյուսին. այդ նոտագրությունը տարբեր ինտենսիվությամբ կիրառվել է մինչև ԺԸ դարը ներառյալ։

Խազերի նոտագրությունը, մանավանդ առաջին ավելի հին սիստեմը իր տիպարով նևմային նոտագրություն է։ Այդ հին սիստեմով ձայնագրված են շարականները և եկեղեցական մի շարք այլ տեսակի ստեղծագործություններ։ Այս սիստեմի հիմնական նշանները 25 են և են[2]՝

Ծեշտ	՛
Բութ	՝
Փուշ	✓
Զարկ	✓
Սուղ	◦
Երկար	~
Խունճ	⌣
Պարույկ	⌐
Էկորճ	⌣
Բենկորճ	⌐
Մենկորճ	✓
Զակորճ	⌒
Թաշտ	⌣
Ոլորակ կամ ծունկ	⌒
Կրկնոլորակ կամ ծնկներ	⌒ ⌒
Ներքնախաղ	⌇
Վերնախաղ	⌇
Քարքաշ	⌇ (⌇)
Խոսրովային	⌒
Թուր կամ սուր	) /
Լերկ	⌒
Հուհայ	⌒
Փաթուք	⌒
Կիսափաթուք	✓
Թագավորա	⌒

Խազերի երկրորդ սիստեմը, ինչպես երևում է նոր հետազոտություններից, կիրառվել է ավելի ուշ, միայն ԺԲ դարից սկսած։ Այս սիստեմը իրենից ներկայացրել է շատ ավելի մանրամասնորեն մշակված և ճշգրիտ սիստեմ։ Այստեղ նշաններն ավելի շատ են, շատ կան նաև միևնույն նշանի տարբերակներ և տարբեր նշանների բազմազան համակցություններ։

---

[1] Հայերեն թարգմանությամբ այդ հոդվածը լույս է տեսել Կոմիտաս վարդապետի «Հոդվածներ և ուսումնասիրություններ» ժողովածուում (Երևան, 1941 թ., էջ 153)։

[2] Նշանների անունները դեռևս ճշգրտված չեն։ Հնարավոր խառնաշփոթությունից խուսափելու համար այստեղ բերվում են այն անունները, որոնք հայ երաժշտագիտության պրակտիկայում արմատացել են ԺԸ—ԺԹ դարերի ընթացքում։

Կոմիտաս վարդապետը իր մի հոդվածում[3] թվում է խազաբանության հետևյալ տարրերը.

Ա) Ձայնաստիճանի խազեր.
Բ) Ձայներանգի խազեր.
Գ) Ձարդախազեր.
Դ) Ձայնուժի խազեր.
Ե) Ամանակի խազեր.
Զ) Բանալի խազեր.
Է) Առոդանության խազեր.
Ը) Կետադրության խազեր.
Թ) Ոճական խազեր.
Ժ) Կապող և դատող խազեր.
ԺԱ) Կիսանիշ խազեր, և այլն։

Կոմիտաս վարդապետի խոսքն այստեղ խազերի ավելի զարգացած շրջանի մասին է, և ինչպես տեսնում ենք, այդ տարրերի մեջ կան այնքան նշաններ, որ երաժշտական ստեղծագործությունը, մելոդիան լիակատար կերպով կարելի էր գրի առնել։

Այս սիստեմով ձայնագրված են պատարագի երգերը, այսպես կոչված մանրուսման երգերը, տաղեր, մեղեդիներ և այլն։ Սրանց մեջ կան շատ այնպիսի ստեղծագործություններ, որոնք եկեղեցական կանոնական երաժշտությունից դուրս են, համերգային բնույթ են ունեցել և կատարվել են այս կամ այն հանդիսավոր օրերին։

Խազերի երաժշտական նոտագրության գործածության մեջ հատուկ ուշադրության արժանի երևույթներից մեկն էլ այն է, որ միջնադարում այդ նոտագրությունը կիրառվել է նաև զուտ աշխարհիկ երգեր ձայնագրելու համար։ Պահպանված կան տարբեր ժանրերի աշխարհիկ երգերի շատ նմուշներ։ Այդպիսի երգեր պարունակող ձեռագրերը բնականաբար վատ վիճակում են մեզ հասել, որովհետև ժամանակին դրանք շատ ավելի հաճախակի են դրվել գործածության մեջ և դրանց նկատմամբ չի տարվել այն հատուկ խնամքը, ինչ որ տարվել է եկեղեցական գրքերի նկատմամբ։

Ինչ վերաբերում է հոգևոր երգերի խազային ձայնագրություններին, ապա սրանք պահպանվել են ոչ միայն մեծ մասամբ լավ վիճակում, այլև բազմաթիվ օրինակներով։ Միայն Երևանի Պետական Մատենադարանում, որ աշխարհում հայկական ձեռագրերի ամենահարուստ պահեստներից մեկն է, կարելի է հաշվել 1000-ից ոչ պակաս ձեռագիր գրքեր՝ շարակնոցներ, տաղարաններ, մանրուսման գրքեր, ճաշոցներ, գանձարաններ և այլն, որոնց մեջ կան ձայնագրված բազմաթիվ երգեր։ Նման ձեռագրեր կան նաև Սովետական Միության այլ քաղաքների թանգարաններում, ինչպես և Արևմտյան Եվրոպայի տարբեր քաղաքներում։ Հայկական ձեռագրերի, դրանց թվում նաև երաժշտական ձեռագրերի հարուստ հավաքածու կա նաև Վենետիկում, Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության մատենադարանում։

Հայ երաժշտական խազերը գրվում են մեկ գույնով, երկերանգ գրություն չի կիրառվել։ Նշանները գրվում են դրական տողից վեր՝ եթե պարզ նշաններ են. բարդ նշանները և նրանց բազմանդամ համակցությունները գրվում են գրական տողի վրա, այդ նպատակով խոսքերի մեջ հատկապես թողնված միջոցներում։ Երաժշտական խազերի մեջ գործածվել են նաև հայկական այբուբենի մինչև 18 բաղաձայն տառեր, որոնք գրվում են գրական տողից ցած և վերաբերում են այս կամ այն երաժշտական նշանին։

ԺԲ—ԺԵ դարերը խազային նոտագրության լայն կիրառման շրջանն է։ Դրանից հետո մինչև ԺԷ դարը, երբ տեղի է ունեցել հայկական էկոնոմիկայի զգալի անկում և կուլտուրայի զարգացումը դանդաղել է, երաժշտության ասպարեզում էլ սկսվել է որոշ դեպրեսիա։ Խազային նոտագրությունն էլ դադարել է հետագա կատարելագործությունից և իր գործնական որոշ անհարմարությունների և անմատչելիության հետևանքով մոռացության է տրվել, հետագայում տեղի տալով հայկական նոր ձայնագրությանը։

ԺԹ դարի սկզբում, հիշտ 1813—1815 թվականների ընթացքում Կոստանդնուպոլսում հնարվել և գործածության մեջ է դրվել հայկական նոր նոտագրությունը։ Դրա հնարողը եղել է հայ շնորհալի երաժիշտ, կոմպոզիտոր Համբարձում Լիմոնջյանը։ Լիմոնջյանի սիստեմի նշանները վերցված են հին խազերից, բայց իր սկզբունքով այդ նոտագրությունը մոտ է ժամանակակից միջազգային տառային նոտագրությանը, քանի որ ամեն մի նշանը երաժշտական մի տոն է արտահայտում։ Լիմոնջյանի սիստեմը հիմնված է օկտավային հնչյունների վրա, սակայն աստիճանների բաժանումը համաձայնեցված է հայկական երաժշտության լադային օրինաչափությունների հետ և տարբերվում է եվրոպականից։ Մասնավորապես մի-ֆա և լյա-տի-բեմոլ կիսատոնները այնտեղ լայն են, գոյություն ունեն նաև մի-դիեզ-ֆա և լյա-դիեզ-սի հարաբերությունները։

Լիմոնջյանի սիստեմը գործածվել է թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհիկ երաժշտության ասպարեզում։

---

3 Գրված է որպես նամակ «Մաճառ» հանդեսի խմբագրապետին (Կոստանդնուպոլիս, 1910 թ., № 10, էջ 311), խմբագրության կողմից վերնագրված է «Եռաբանի խազերու նշանակությունը»։ Տե՛ս նաև «Հոդվածներ և ուսումնասիրություններ», էջ 166։

խազերի սիստեմի վերծանության խնդիրը վաղուց ի վեր հետաքրքրել ու զբաղեցրել է հայ և օտարազգի շատ տեսաբաններին։

Օտարազգի տեսաբանները չնայած մի քանի ճիշտ, բայց այն էլ տոկ ընդհանուր բնույթի դիտողություններ արել են, սակայն հիմնական տեսական հարցերը լուծել չեն կարողացել։ Կարևոր պատճառներից մեկն այն է, որ նրանք անհրաժեշտ չափով ծանոթ չեն եղել հայերեն լեզվին և մանավանդ՝ հայկական երաժշտությանը։ Հայկական խազագրությունը քննել են հայ երաժշտական կուլտուրայից կտրված, համարել են այս կամ այն օտար սիստեմի ընդօրինակություն, չեն կարողացել նկատել նրա օրիգինալությունը, կապը հայ երաժշտության առանձնահատկությունների հետ։ Այս բոլորի հետևանքով խազերին նվիրված արևմտաեվրոպական հեղինակների բազմաթիվ աշխատությունները այժմ լոկ պատմական արժեք ունեն և գործնականում օգտակար դրեթե ոչինչ չեն տալիս։

Հայ տեսաբաններից անցյալում խազերի ուսումնասիրության ասպարեզում առանձնապես արդյունավետ աշխատանք են արել պոլսահայ ականավոր երաժիշտ Եղիա Տընտեսյանը և հայկական երաժշտության խոշորագույն գիտակ, բազմավաստակ Կոմիտաս վարդապետը։

Խազերի հետազոտության ասպարեզում Կոմիտաս վարդապետի կատարած աշխատանքը նպատակ է ունեցել երևան բերել ժողովրդի ստեղծագործական հարստությունները, հնարավորին չափ լրիվ վերականգնել բազմադարյան ժողովրդական երաժշտական կուլտուրան, նրա պատմական զարգացման և լավագույն նմուշների վերամշակման միջոցով գեղարվեստական նոր երկեր ստեղծել։

Ինչպես հայտնի է, Կոմիտասը «գտել էր խազերի բանալին»։ Դա նշանակում է՝ նա լուծել էր դժվարին խնդրի էական մասը, բացահայտել էր խազագրության հիմնական սկզբունքը։ Սակայն մեծ երաժշտագետի կյանքի ողբերգական ընթացքը հնարավորություն չտվեց նրան իր գործն ավարտել, իսկ հատորներ կազմող նրա աշխատությունը, ավելի քան 20-ամյա հետազոտական աշխատանքի արդյունքները այժմ դրեթե անհույս կորած են։

Երևանի Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասյան արխիվում պահվում են մեծ վարպետի շատ ձեռագրեր, հատվածներ, որոնք վերաբերում են խազաբանությանը։ Չնայած այդ պատառիկները, ինչպես նաև Կոմիտաս վարդապետի տպագրված հոդվածները ոչ մի չափով չեն ներկայացնում նրա կապիտալ ուսումնասիրությունը, սակայն այսօր դրանք ևս գիտական զգալի արժեք ունեն և խազերի ուսումնասիրության հետագա աշխատանքին որոշ ուղղություն են տալիս։

Սովետական երաժշտագիտության մեջ մեծ ուշադրություն է դարձվում ժողովուրդների անցյալի կուլտուրայի լավագույն տրադիցիաները, նրանց հին երաժշտական գանձերը երևան հանելու և ստեղծագործորեն օգտագործելու խնդրին։ Հին-ռուսական ձայնագրական սիստեմների, վրացական հին ձայնագրության և հայկական խազերի խնդիրը նույնպես շարունակ գտնվում է երաժշտագետների տեսադաշտում[1]։

Հայկական խազային ձայնագրության նորագույն ուսումնասիրության արդյունքները հակիրճ ամփոփելու համար կարելի է ասել հետևյալը։

Հաջողվել է հայտնաբերել ձեռագրերի պատառիկներ, որոնք պարունակում են զանազան հայկական երգերի հնագույն ձայնագրություններ։ Եթե մինչև այժմ խազաբանության մեջ խազերի պահպանված հնագույն ձեռագիրը համարվում էր 1216 թվին գրված մի շարական, ապա այժմ հայտնաբերված են Թ, Ժ, ԺԱ և ԺԲ դարերում խազագրված մի ամբողջ շարք պատառիկներ։

Այդ պատառիկների շնորհիվ ներկայումս բոլորովին նոր և փաստերով հիմնավորված մեկնաբանություն է տրվում խազերի պատմությանը։ Այժմ հերքված է այն սխալ տեսակետը, որի համաձայն երաժշտական խազերը Հայաստանում իբր կիրառվել են ԺԲ դարից սկսած։ Նորահայտ ձեռագրերի ուսումնասիրությունը հաստատում է հայկական երաժշտական խազերի ծագումը Ը—Թ դարերում։

Բացի դրանից, բարեբախտ պատահականությամբ նույն պատառիկներում հայտնաբերվել են միևնույն երգի տարբեր ժամանակ կատարված ձայնագրություններ, որոնց համեմատական ուսումնասիրությունից պարզաբանվում է խազային ձայնագրության զարգացման ողջ ընթացքը։ Այսպես, ապացուցվում է, որ այդ ձայնագրությունը փոխ առնված չէ բյուզանդական կամ մի այլ նոտագրությունից, այլ ինքնատիպ է (չնա-

[1] Մասնավորապես Հայաստանի Գիտությունների ակադեմիայի սիստեմում այդ գործն հանձնարարված է եղել տողերիս հեղինակին, որը սկզբնաղբյուրի հետազոտության հիման վրա այժմ տպագրության է ներկայացրել իր աշխատանքի մի շրջանն ամփոփող գիրք, վերնագրված «Հայկական խազային նոտագրության ուսումնասիրության և վերծանության ուղիները»։

յած սկզբնական շրջանում նեմային զանազան գրություններ հետ ունեցած որոշ ընդհանուր գծերին)։ Ը—Թ դարերում ծագելով իր նախնական, դեռևս անկատար վիճակում, այդ ձայնագրությունը հետագայում ինքնուրույն երկարատև զարգացում է ապրել և ԺԲ դարում հասել է համեմատաբար բարձր կատարելության։

Պարզվել է նաև, որ երաժշտական խազերն իրենցից ներկայացրել են ոչ թե մեկ միասնական սիստեմ, այլ ձայնագրության պատմական զարգացման ընթացքում, ինչպես վերն ասացինք, հաջորդել են միմյանց հետ ժառանգաբար կապված, բայց էական գծերով բավականաչափ ինքնուրույն երկու առանձին սիստեմներ։

Եվ, վերջապես, խազային ձայնագրության զարգացումը տեղի է ունեցել հայկական միջնադարի կուլտուրայի և արվեստի զարգացմանը զուգահեռ, ձայնագրությունը կիրառվել է ոչ միայն հոգևոր երաժշտության ասպարեզում, ինչպես ընդունված էր համարել, այլ նաև բուն աշխարհիկ երաժշտության մեջ։ Խազերով ձայնագրված մեզ են հասել նույնիսկ միջնադարյան ժողովրդական երգեր։

Խազերի պատմության վերաբերյալ այս նոր փաստերի հայտնաբերումը մի կողմից օգնում է ավելի խոր և լրիվ հասկացողություն կազմելու հայ միջնադարի կուլտուրայի զարգացման մասին, մյուս կողմից՝ հնարավորություն է ստեղծում ճիշտ կողմնորոշվելու ձայնագրության էության ուսումնասիրության հարցերում։

Այսպես օրինակ, այժմ կարելի է վստահ լինել, որ խազային ձայնագրության տեսական հիմքերը պետք է փնտռել ոչ թե բյուզանդական կամ մի այլ երաժշտության կանոններում, ինչպես արել են հնում շատերը, այլ հենց հայկական երաժշտության մեջ։ Հայտնի է դառնում, որ պատմականորեն միմյանց հաջորդած տարբեր սիստեմներով գրված ձեռագրերը պետք է զատել և սիստեմներն ուսումնասիրել առանձին-առանձին և այլն։

Նույն նորահայտ ձեռագրերը հնարավորություն են տվել ճշտելու խազերի գծագրությունները ու տարբեր նշանների քանակը, և խազերի տախտակը մաքրելու բազմաթիվ ավելորդ նշաններից, որոնք, ինչպես այժմ պարզվում է, վերջին մի քանի դարերի ընթացքում կատարված նորամուծություններ կամ աղավաղումներ են։ Այս ևս իր հերթին նպաստում է խազերի հետագա ուսումնասիրությանը։

Ինչ վերաբերում է հին հայկական ձայնագրության բուն էության ուսումնասիրությանը, ապա այդ ուղղությամբ ևս հաջողվել է որոշ նախնական արդյունքների հասնել։

Շահեկան արդյունք է տալիս հենց իրենց՝ խազային գրվածքների մեջ հայտնաբերվող օրինաչափությունների ուսումնասիրությունը։ Հաջողվում է մանրամասնորեն վերականգնել խազերով ձայնագրված ամեն մի մեղեդիի տրոհումը երաժշտական «պարբերությունների»-ի, «նախադասությունների»-ի և այլ ավելի մանր բաղկացուցիչ մասերի։ Դրա շնորհիվ մենք հնարավորություն ենք գալիս մի շարք նշանների բնույթի մասին։ Ներքին օրինաչափությունների ուսումնասիրությամբ պարզվում է նաև երաժշտության ռիթմի և մետրի դրանցման սկզբունքը։

Ոչ պակաս կարևոր է միևնույն երգերի հին, խազային ձայնագրության և ԺԲ դարում նոր հայկական նշաններով կատարված ձայնագրության համեմատական ուսումնասիրությունը. այսպիսի ուսումնասիրություն հնում նույնպես ձեռնարկվել է, բայց առանձին արդյունք չի տվել։ Մինչդեռ այժմ, խազային սիստեմների պատմության և հին ձայնագրություններում հայտնաբերվող օրինաչափությունների ուսումնասիրության արդյունքների շնորհիվ, խազերի ուսումնասիրման այդ եղանակը ևս որոշակի գործնական նշանակություն է ստանում։ Այսպես օրինակ, համեմատական ուսումնասիրության շնորհիվ հայտնաբերված են, մասամբ կամ լրիվ կերպով, որոշ նշանների բնույթը և մի քանի այլ նշանների կամ նշանախմբերի բուն նշանակությունը։

Խազերի ներկա ուսումնասիրության մասին խոսելով պետք է ասել, որ հայկական հին ձայնագրության վերծանությունը դեռևս կպահանջի երկարատև և հետևողական աշխատանք։ Սակայն հեռավոր անցյալում գրի առնված բազմաթիվ երգերը նորից հնչեցնելը, որքան դժվարին, այնքան էլ շնորհակալ խնդիր է։ Սովետահայ երաժշտագիտությունը պետք է ամեն ջանք գործի դնի, որպեսզի մեր միջնադարյան երաժշտության ուսումնասիրության այդ շնորհակալ խնդիրը իր վերջնական լուծումն ստանա։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճնագետ)

ՆՈՐ ԳԵՏԿԱ ՎԱՆՔ ԿԱՄ ԳՈՇԱՎԱՆՔ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Նոր Գետկա վանքը կամ Գոշավանքը, երբեմնի հռչակավոր այդ մենաստանը, գտնվում է Սովետական Հայաստանի Իջևանի շրջանի Գոշ գյուղում՝ ձորալանջի մի փոքրիկ հարթակի վրա։ Գյուղը տարածվում է Տանձուտաձոր ընդարձակ ձորի ձախ ձորալանջին, կտրտված մի քանի ձորակներով։

Երեք կողմից շրջապատված լինելով անտառապատ բարձր լեռներով, առջևում ունենալով Տանձուտա-ջուր կարկաչահոս գետակը, որը տեղացիք Քեղուտի գետ կամ Վենձ (մեծ) ջուր անուններով են կոչում, նա մի հիասքանչ տեսարան է ներկայացնում։

Արևելյան կողմից այդ ընդարձակ ձորը եզերվում է մի այլ լերկ լեռնաշղթայով, որը մի տեսակ պատվար-պատնեշ է հանդիսանում հիշյալ ձորի և Թարսաչայ գետի հովտի միջև։ Միակ անցքը, որն այդ ձորը կապում է Թարսաչայի հովտի հետ, այն խոր ու նեղ կիրճն է, որտեղից հոսում է Տանձուտա-ջուր գետակը։ Այդ կիրճը, որը գտնվում է գետակի վերջավորության մասում, գոյացել է նրա աջ ափին, բարձր լեռան անտառապատ, խիստ զառիթափ լանջերով, իսկ ձախ կողմից, ուղղաձիգ ձևով ձգված, անասելի բարձրությամբ ժայռերով։ Այդ բարձրաբերձ ժայռերի տակով անցնում է դեպի Գոշ գյուղը տանող ճանապարհը։ Ժայռապատի ստորին մասերում փորված են բազմաթիվ. պարզ խաչեր, իսկ ժայռապատի տակ թափված են գեղաքանդակ խաչքարերի մի քանի բեկորներ։

Ճանապարհը Դիլիջան կուրորտային քաղաքից 16 կիլոմետրաչափ ներքև, այնտեղ. ուր իրար են միանում Աղստև և Թարսաչայ գետերը, դուրս գալով Երևան-Թբիլիսի մայրուղուց, թեքվում է դեպի աջ և անմիջապես անցնելով Աղստև և Թարսաչայ գետերը, առաջ է ընթանում վերջինիս աջ ափով, Կրասնոսելսկ շրջանային կենտրոնը տանող խճուղով։ Այդ վերջինով երկու կիլոմետրաչափ գետն ի վեր ընթանալուց հետո, Ալաշուխկայա գյուղի մոտ, նորից է թեքվում աջ՝ անցատվելով Կրասնոսելսկ տանող խճուղուց և անմիջապես անցնելով Թարսաչայ գետը, Ալաշուխկայա գյուղի միջով մտնում է Տանձուտա-ջուր գետակի կիրճը և ոլորապտույտ բարձրանում Գոշ գյուղը։

Մի այլ ոտքի ճանապարհ դուրս գալով Դիլիջան քաղաքից, անմիջապես թեքվում է դեպի աջ և ուղղություն վերցնելով դեպի հյուսիս-արևելք, անցնում է անտառներով, մարգագետիններով, Պարզ-գյոլ լճի ափերով ու Տանձուտա ձորի եզրին, տարահարթից զառիթափ իջնում է գյուղը։

Այդ ճանապարհը շատ գեղեցիկ ու հետաքրքիր է հատկապես գարնան և ամռան ամիսներին, երբ անտառը կանաչապատ է, սաղարթախիտ, երբ մարգագետինները պա-

տած են այպյան փարթամ բուսականությամբ՝ անթիվ-անհամար երփներանգ, անուշաբույր ծաղիկներով, իսկ Պարզ-գյոլ լիճն իր վճիտ ջրերի մեջ արտացոլում է կապտագույն ջինջ երկինքը արծաթափայլ ամպիկներով և երկնալաց սոճիները։ Այդ բոլորը մի հիասքանչ ու զմայլելի տեսարան են ներկայացնում։ Այդ է պատճառը, որ դեպի Գոշավանք բոլոր այցելուները գնում են հատկապես այդ ճանապարհով։

Վանքի հուշարձանների հիմնական խումբը տեղավորված է գյուղի հյուսիսային եզրին, երկու կողմերից փոքր ձորակներով եզերվող փոքրիկ հարթակի վրա։ Վանքի կառուցումը կապված է նրա հիմնադիր Մխիթար Գոշ վարդապետի անվան հետ,

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Մխիթար Գոշը, «Հռչակաւորն այն և մեծիմաստն գիտությամբ՝ էր ի քաղաքէն Գանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն Գրոց Սրբոց։ և իբրև եհաս նա յարբունս հասակի, ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրօն»[1]։

Եվ որովհետև Մխիթարի դեմքը սակավամազ էր, նրան կոչեցին Գոշ (քոսա) մականունով։ Նա կոչվել է նաև Գանձակեցի և Գետկեցի։ Դեռ մանուկ հասակից մեծ ձգտում ունենալով դեպի ուսումը, նա չի բավականանում ստացած կրոնական կրթությամբ և աշակերտում է ժամանակի նշանավոր ուսումնական, հայտնի աստվածաբան Հովհաննես Տավուշեցի վարդապետին։ «Եւ պաշտեալ զքահանայութիւնն յոլով ամս՝ ցանկացաւ հմուտ լինել Գրոց Սրբոց, և առակաց խորոց՝ որ կան ի նոսա։ Եւ հանդիպեցաւ Յովանէս վարդապետի Տաւուշեցի անուանեալ, որ ի ժամանակին յայնմիկ երևելի էր նա գիտությամբ... Առ սմա կացեալ Մխիթար ամս յոլով, ուսման Գրոց պարապեալ[2]»։

Հովհաննես Տավուշեցու մոտ որոշ ժամանակ մնալուց հետո, Գոշը վարդապետական աստիճան է ստանում, ուղևորվում է դեպի արևմուտք՝ Կիլիկիա, Սև լեռան դպրոցը, ուսումը շարունակելու համար. «Կացեալ առ սմա Մխիթարայ, և առ այլ ոմանս, էառ նա զանուն վարդապետական, և այնու ոչ շատացաւ, այլ չոգաւ յԱրևմուտս կոյս յաշխարհն՝ որ կոչի Սև լեռն, առ վարդապետսն՝ որք էին անդ ուսուցիչք[3]»։

Հ. Մ. Ջամչյանը Գոշի Սև լեռան դպրոցը մեկնելու ժամանակը դնում է 1163 թվականը[4]։ Գոշը թաքցնելով իր վարդապետական աստիճանը, բավական ժամանակ մնում է Սև լեռան դպրոցում և մեկնում է Հայրենիք։

Վերադարձի ճանապարհին Կարին քաղաքում նա հանդիպում է Կայենո գավառի և Մահկանաբերդի տեր Քուրթ իշխանին, որը մինչև այդ մեծ գիրք ուներ վրաց արքունիքում և սրտնեղելով վրաց թագավորներից, առժամանակ բնակվում էր Կարինում։ Գոշը ծանոթանում է և բարեկամանում նրա հետ, սիրվելով նրա կողմից որպես հայր[5]։

Կարինից Գոշը վերադառնում է իր հայրենի քաղաքը Գանձակ, ուր շուտով նրա իմաստության համբավը տարածվում է ամենուր, որի հետևանքով շատերն են գալիս նրան աշակերտելու[6]։

Սակայն Գոշի վարդապետական-ուսուցչական գործունեությունը իր Հայրենի երկրում երկար չի տևում. անընդհատ ենթակա լինելով սելջուկների հալածանքներին, որոնց տիրապետության տակ էր գտնվում այդ ժամանակ Հայաստանը և հետևելով Աղվանից Ստեփանոս Բ կաթողիկոսի հորդորանքներին, նա թողնում է իր Հայրենիքը և գնում Խաչեն, Հաթերքի տեր Վախթանգ իշխանի ու նրա եղբայրների մոտ, որոնք մեծ սիրով ու հարգանքով են ընդունում նրան[7]։

Որոշ ժամանակ Խաչենում մնալուց հետո, Գոշը մեկնում է Դասնո անապատը, ուր մնում է մինչև 1185 թվականը։ 1184 թվականին վախճանվում է վրաց Գեորգի Գ թագավորը (1156—1184), որ իր կալվածներից գրկել ու արքունիքից արտաքսել էր Քուրթ իշխանին։ Գեորգիի մահվանից հետո, այդ նույն 1184 թվականին, գահ է բարձրանում Թամար թագուհին, որը վերադարձնում է նրան իր հայրենի կալվածները ու վերականգնում նրա ամիրայության տիտղոսը։ Դրա հետևանքով Քուրթ իշխանը 1185 թվականին Կարին քաղաքից վերադառնում է իր հայրենի Կայենո գավառը։

Գոշը, իմանալով Քուրթ իշխանի վերադարձը, թողնում է Դասնո անապատը և նույն թվականին գալիս է իր բարեկամի մոտ ու բնակություն հաստատում Գետկա վանքում, որը գտնվում էր այդ նույն Կայենո գավառում, Աղստև գետի աջ կողմում։ Իսկ վանքի առաջնորդ Սարկավագ վարդա-

1 «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909 թ., էջ 195։

2 Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, էջ 195—196։

3 Նույն տեղում, էջ 196։

4 Միքայել վարդապետ Ջամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, Վենետիկ, 1786 թ.։

5 Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, էջ 196—197։

6 Նույն տեղում, էջ 197։

7 Նույն տեղում։

պետը, որը Գոշի սաներից էր, մեծ սիրով է ընդունում իր ուսուցչին[8]։

Այդ ժամանակներում է, որ մեծ երկրաշարժ է տեղի ունենում, որի հետևանքով հիմնովին ավերվում են Գետկա վանքի և կից բնակավայրի շինությունները այնպես, որ նորից վերականգնել դրանք այլևս հնարավոր չէր (ավերման տարեթիվը ստույգ հայտնի չէ, մի ձեռագրի հիշատակարանից իմացվում է, որ 1187 թվականին դեռ կանգուն էր Գետկա վանքը)։

երկուց լեռանցն՝ որ կայ ի գլխոյ նորա, զոր անուանէին զտեղին Տանձուտայ ձոր. և էր ի նմա գիւղ... տեղի փայտաւէտ և ջրաւէտ. ասդ համարեցան, թէ պատշաճ իցէ զետեղել[9]։

Կատարված հնագիտական հետազոտությունները, դժբախտաբար, մինչև այժմ չեն հայտնաբերել Գետկա վանքի ճշգրիտ տեղը։

Ապա Գոշը ողջ միաբանության գլուխ անցած ձեռնամուխ են լինում նոր Գետկա վանքի հիմնադրմանը։ Նախ կառուցում են

ԳՈՇԱՎԱՆՔԸ ՀՈՌՈՍԻՍ-ԱՐԵՎԵԼՔԻՑ

Գոշը գիմում է Զաքարյան իշխաններին և խնդրում նոր տեղ վանքի համար։ Նրանք փնտռում են, գտնում են մի շատ վայելուչ վայր՝ երկու լեռների գոգավորության միջև, որ Տանձուտի ձոր էր կոչվում, որտեղ կար և գյուղ, հարմար են գտնում այդտեղ վանք կառուցելու համար. «Ապա չոգան միաբան առ մեծ իշխանն Իւանէ, երբայր զօրավարին վրաց Զաքարէի, որդիք քեռ բարեպաշտ իշխանին Քրթին, որ ընդ այն ժամանակս իշխէր բերդին Կայենտայ և գաւառին, և ցուցին նմա զինդիրս իւրեանց՝ զի տացէ նոցա տեղի, ուր փոխեսցեն զվանս իւրեանց, և նա հրամայեաց նոցա տեսանել, թէ որ տեղի պատշաճ իցէ. և նոքա շրջեալ գտին տեղի մի բարեվայելուչ և գոգաձև առ ստորոտս

մի գեղեցիկ, փայտակերտ եկեղեցի և օծելով կոչում են Ս. Գրիգոր Լուսավորչի անունով[10]։

Եկեղեցու օծման արարողությունը կատարվում է մեծ հանդիսավորությամբ, որին մասնակցում էր նաև Հայաստանի ամենանշանավոր վանքերից մեկի՝ Հաղարծինի վանքի առաջնորդ խալատուր վարդապետ Տարոնացին՝ ժամանակի ամենաուսյալ և զարգացած անձնավորություններից մեկը, մանավանդ երաժշտության բնագավառում։ Այդ խալատուր Տարոնացին էր, որ հայկական ձայնանիշերը մշակելով տարածեց ողջ երկրում։

8 Կիրակոս Գանձակեցի, էջ 197—198։

9 Նույն տեղում, էջ 198—199։

10 Նույն տեղում, էջ 199։

Այդ փայտակերտ եկեղեցին շուտով քանդվում է և նրա հետքերն անդամ չեն պահպանվել։ Դրանից հետո վանքից վերև, ձորակի մյուս կողմում, կառուցում են մի ուրիշ քարաշեն փոքր եկեղեցի՝ Հովհաննու Կարապետի անվան, որի ավերակները մինչև այժմ էլ պահպանվել են (այդ մասին ավելի մանրամասն նկարագրական բաժնում)։ «Շինեցին ի Նոր Գետիկ ևս փոքրագոյն եկեղեցի մի յանուն Սուրբ Կարապետին Յովհաննու ի գլուխ վանիցն»[11]։

Հովհաննու Կարապետի անվան եկեղեցու կառուցումից հետո, 1191 թվականին, ձեռնամուխ են լինում վանքի գլխավոր եկեղեցու կառուցմանը, որը տևում է հինգ տարի և ավարտվում Սոռազատկի օրը։ Ապա մեծ հանդիսավորությամբ օծում են եկեղեցին և կոչում Ս. Աստվածածնի անվան։ Օծման հանդեսին մասնակցում էր նաև Հաղբատի հռչակավոր վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը[12]։

Աստվածածին եկեղեցու կառուցումից հետո, Գոշը ձեռնամուխ է լինում այդ եկեղեցու գավթի շինությանը, որին մեծ շափով օժանդակում են Զաքարյան եղբայրները՝ Զաքարեն և Իվանեն։ Գավթի կառուցմանը ցույց տրվող նյութական օժանդակությունից զատ, Զաքարյան եղբայրները Նոր Գետկա վանքին են նվիրում նաև Արասաձոր գյուղը, Ջորոձոր գյուղը, վանքից վերև գտնվող պղնձահանքը, Բջնու Նահանգում գտնվող Աշավա գյուղը և հողեր, ինչպես նաև Տզրկածով և Ուռելանց գյուղերը։ Այդ բոլորի մասին մանրամասն պատմում է Գանձակեցին[13]։

Գավթից հետո Գոշը կառուցում է Ս. Առաքելոց և Ս. Հռիփսիմյանց մատուռները։ Քվ որովհետև ինքը սիրում էր անապատական կյանքը, ինչպես այդ մասին տեղեկացնում է Գանձակեցին, վանքից քիչ հեռու հաստատում է իր բնակությունը, միաժամանակ կառուցելով այնտեղ փայտակերտ փոքրիկ եկեղեցի՝ Ս. Հոգու անվան։ Ապա վանքից վերև, այ կողմում, կառուցում է քարուկիր շարվածքով մի այլ եկեղեցի, որպես իրեն գերեզմանատեղի՝ Ս. Համբարձման անունով[14]։

Դրանով ավարտվում են Գոշի կողմից Նոր Գետկա վանքում կատարվող շինարարական աշխատանքները, որոնք սակայն շարունակվում են վանքի հետագա առաջնորդների ժամանակ։ Գոշը հասնելով խորին ծերության, դեռ իր կենդանության ժամանակ, հրաժարվում է վանքի առաջնորդությունից, իր մոտ կանչելով ողջ միաբանությանը, օրհնում է նրանց և ապա նրանցից Մարտիրոս վարդապետին, իր սիրելի աշակերտներից մեկին, նշանակում է վանքի առաջնորդ։ Մխիթար Գոշը վախճանվում է 1213 թվականին և նրա մարմինը տանում թաղում են իր ձեռքով կառուցած եկեղեցի-տապանատունը[15]։

Նոր Գետկա վանքը Գոշի ղեկավարության ներքո, ոչ միայն հարստացավ հոյակապ կառուցվածքներով, որոնք հայ արվեստի ու ճարտարապետության նշանավոր կոթողներից են, այլ նաև հանդիսացավ բարձրագույն հոգևոր դպրոց, որպես Հայաստանի կրոնական և ուսումնական ամենակարևոր ու խոշոր կենտրոններից մեկը։ Նրա համբավը տարածված էր ամենուր, որի հետևանքով երկրի բոլոր կողմերից, «Բազումք էին որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին. քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, և գային առ նա յամենայն կողմանց։ Բազումք որ էին ի կարգի վարդապետաց ծածկէին զինքեանս և գային, ի կարգի աշակերտաց կալով՝ ուսանէին ի նմանէ, և առնուին վերստին հրաման»[16]։

Գոշի աշակերտներից շատերը կազմակերպեցին իրենց ինքնուրույն դպրոցները և մեծ համբավ ու հռչակ վայելեցին, ոչ միայն իրենց գիտությամբ, այլև իրենց բարոյականությամբ, մարդասիրությամբ, աշխատասիրությամբ։

Մխիթար Գոշի աշակերտների մեջ նշանավոր էին Թորոս Մելտենացին, Կիրակոս Գանձակեցին, հռչակավոր աստվածաբան Հովհաննես Տավուշեցին, որը հայտնի է Վանական Վարդապետ անունով և ուրիշներ։

Բացի կրոնա-բարոյական և ուսումնակրթական աշխատանքներից, զգալի տեղ է գրավում նաև Գոշի գրական գործունեությունը։ Նրա գրական աշխատություններից առավել հետաքրքիր ու նշանակալից է «Դատաստանագիրք»-ը[17]։

Առանձին ուշադրության արժանի են նաև Գոշի կազմած բազմաթիվ առակները, որոնք առանձին կողմերով ուսանելի են նույնիսկ մեր ժամանակների համար։ Մեծ թիվ են կազմում նրա կրոնա-բարոյական աշխատությունները, որոնց մասին հետևյալ կերպ է պատմում Գանձակեցի պատմիչը. «Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզմանի գիրս

11 Կիրակոս Գանձակեցի, էջ 200։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 204։

14 Նույն տեղում, էջ 204—205։

15 Նույն տեղում, էջ 207, 209։

16 Նույն տեղում, էջ 205։

17 Վանան Ծայրագույն վարդապետ Բասատմյանց. «Մխիթարայ Գոշի «Դատաստանագիրք» Հայոց», Վաղարշապատ, 1880 թ.։

մանխորն յօգուտ ուսումնասիրաց՝ համառօտ մարգարէութեանն Երեմիայի գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, թէ որպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք. և գիրք մի ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց նեայի առ դստերս նորա. և գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ և այլ թուղթս խրատականս[18]։

Իրենց սիրելի ուսուցչի ու առաջնորդի հիշատակը հավերժական դարձնելու համար

Դրանից հետո Մարտիրոսը ձեռնամուխ է լինում հինգ խորանանի, գմբեթավոր մի այլ գեղեցկաշեն եկեղեցու կառուցմանը, սակայն վրա հասնող Ջալալեդդինի արշավանքների հետևանքով եկեղեցու շինարարությունը որոշ ժամանակ կանգ է առնում։ Հետագայում ոմն Գրիգոր Կապալեցի, որի միջոցներով էր կառուցվում եկեղեցին, կըրկին շարունակում է նրա շինարարությունը և ավարտում հայոց ՈՂ (1241) թվականին։

Այնուհետև կառուցում է Ս. Գրիգորի անվան գեղեցկաշեն փոքր եկեղեցին, գավթի հարավային կողմում։

Մարտիրոս Վարդապետը շուրջ քառասուն



ԳՈՇԱՎԱՆՔԸ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ, ԱՌՋԵՎՈՒՄ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ։

վանքի միաբանությունը և ողջ համայնքը նոր Գետկա վանքը նրա անունով կոչում են նաև Գոշավանք։ Այդ անունը հետզհետե ավելի գործածական է դառնում քան նոր Գետկա վանք անունը։

Նոր Գետկա վանքը Գոշին հաջորդող Մարտիրոս վարդապետի առաջնորդության ժամանակ ավելի ընդարձակվում և քարգավանում է։ Մարտիրոս վարդապետը կառուցում է ժամատուն՝ փայտյա վերնահարկով, գրատունը՝ գործակից ունենալով հյուսն Մխիթարին։

տարի վարում է վանքի առաջնորդությունը և կամովին հրաժարվում է առաջնորդությունից։ Նրանից հետո վանքի առաջնորդներ են դառնում Մխիթար, Հովսեփ, Աբրահամ, Հովհաննես Արմանեցի և այլ վարդապետներ։

Նոր Գետկա վանքը Մարտիրոսի առաջնորդության ժամանակ հասնում է առավել բարձր զարգացման, դասվելով Հայաստանի գլխավոր վանքերի շարքը, ինչպես այդ մասին տեղեկացնում է ժամանակի պատմագիրը, որը նույնպես ուսանել է այդ վանքում. «Փառաւորեցաւ վանքն և հռչակեցաւ սուրբ վարդապետին՝ իմաստութեամբ Մարտիրոսի առաջնորդի. քանզի այր շինարար էր...։ Եւ բազում եղբարք ժողովեցան վանք

18 Կիրակոս Գանձակեցի. էջ 208—209։

հուչականուն տեղուչն, և բազմաց եղև տեղի սննդեան և ուսման. որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս։ ...և բազմացան քահանայք և պաշտօնեայք և մանկունք ուսումնականք... ...և գլխաւոր վանորայքն՝ Սանահինն, և Գետիկ...»[19]։

Մարտիրոսի՝ Գետկա վանքի առաջնորդութենից հրաժարվելուց քիչ հետո, Խաչատուր վարդապետը և իր եղբայր Թարսեղը վանքի դիմաց, Ձորակի մյուս ափին, հայոց ՉԳ (1254) թվականին կառուցում են Ս. Գևորգի անվան փոքրիկ, գմբեթավոր եկեղեցին։

Կիրակոս Գանձակեցու այդ վկայության մեջ «յութ հարիւր» թվականը, մեր կարծիքով, կա՛մ գրչի կա՛մ տպագրության վրիպում պետք է լինի, քանի որ եկեղեցու գմբեթի թմբուկի վրա պահպանվել է նրա կառուցման վերաբերյալ արձանագրությունը՝ ՉԳ թվականով (յոթ հարյուր երեք)։

Բացի այդ, նույն վկայությունից միաժամանակ հավանական է դառնում, որ Մարտիրոսին հաջորդող Մխիթարի վանքի առաջնորդության ժամանակը շատ կարճատև է եղել և, որ նրան պետք է հաջորդած լինի Խաչատուր վարդապետը՝ Ս. Գևորգ եկեղեցու կառուցողը։ Գանձակեցու հենց այն վկայությունը, թե Մարտիրոսից հետո վանքի առաջնորդ եղան «Մխիթար ոմն, և այլ սա, և այլ նա» ինքնին հաստատում է, որ նախ Մխիթարի առաջնորդությունը շատ կարճատև ու անարդյունավետ է եղել և երկրորդ «և այլ սա, և այլ նա» դարձվածքի տակ պետք է հասկանալ վերը հիշատակված Խաչատուր վարդապետը։

Ս. Գևորգ եկեղեցու կառուցման վերաբերյալ եղած տեղեկությունով էլ սպառվում են նոր Գետկա վանքի մասին պատմության հիշատակությունները։ Վանքում կատարվող հետագա կառուցումների մասին մեզ տեղեկացնում են նրանց վրա փորագրված արձանագրությունները։ Դրանց համաձայն, Դասապետ վարդապետը և իր եղբայր Կարապետը հայոց ՉԽ (1291) թվականին կառուցում են զանգակատունը՝ Գարրիել և Միքայել հրեշտակապետների անունով։ Այդ նույն թվականին է կառուցվում նաև վարպետ Պողոսի մահարձանը։ Այդ վերջինով էլ ավարտվում են վանքում կատարվող կառուցումները։

Նոր Գետկա վանքի կամ, որ ավելի ճիշտ ու հարմար է այսուհետև ասել՝ Գոշավանքի մասին եղած միակ հիշատակարանները նրա մեծ թիվ կազմող վիմագրություններն են, որոնց մեծ մասը փորագիր են, մնացած մասը ներկագիր։ Դրանք գլխավորապես նվիրատվական բովանդակություն ունեն և մեծ մասամբ առանց տարեթվի, Ուստի դժվար է որոշել, թե դրանք որ ժամանակի են, որով հնարավոր լինի որոշ պատկերացում կազմել վանքի ընդհանուր դրության մասին։ Այդ տեսակետից մեզ համար հիմք կարող են ծառայել այն վիմագրությունները, որոնց ժամանակը որոշ է, այդպես.

Գավթի արևմտյան դռան ճակատաքարի վրա եղած արձանագրության համաձայն, Գայլաձագի որդի Հովհաննես Կարնեցին հայոց ՉԽԹ (1293) թվականին միաբանում է Ս. Աստվածածնին։

Ս. Աստվածածին եկեղեցու հարավային որմի ներսի երեսի վրա եղած ներկագիր մի արձանագրության մեջ ասվում է, որ Ումեկի թոռ, Ճարի որդի Թաղարդինը հայոց ՉՌ (1301) թվականին միաբանում է՝ իրենց դրամագին սեփականությունը կազմող Գետկա վանքի եկեղեցուն և նվիրում է իր սեփական Հահնի գյուղն ու տարեկան հարյուր կուժ գինի՝ խաս այգուց։ Արձանագրության մեջ հիշատակվում է, որ նվիրատվությունը կատարվում է Թաղարդինի հոգևոր հայր Դասապետ վարդապետի միջոցով, որը, անկասկած, զանգակատունը կառուցող Դասապետ վարդապետը պետք է լինի։

Գավթի արևմտյան պատի տակ եղած մի խաչարձան-մահարձանի տպագրությունն ունի հայոց ՉՌԸ (1309) թվականը։

Վերը մեջ բերված արձանագրություններից երևում է, որ մինչև ԺԴ դարի սկիզբները դեռ անվնաս ու շեն էր Գոշավանքը։ Վերջին գրավոր հիշատակությունը, որը կարող է վկայել վանքի գոյության մասին՝ Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատի տակ գտնվող մի գերեզմանաքարի տապանագրությունն է՝ ՉՂԴ (1345) թվականով. «Պարոնուրեան Արդուրին և Խորիշ Խաթունին ես Պետրոս վարդապետ կանգնեցի զխաչս բարեխաւս սուրբս՝ մեզ և ծնողաց մերոց. ի թուին ՉՂԴ»[20] (1345)։ Դրանից հետո ոչ մի հիշատակություն չկա այդ նշանավոր մենաստանի մասին։

Մնում է ենթադրել, որ Գոշավանքը նույնպես, ինչպես Հայաստանի բազմաթիվ այլ վանքերն ու բնակավայրերը, ավերվեց ու ամայացավ մոնղոլական արշավանքների և դրանց հաջորդող միջցեղային երկարատև պատերազմների հետևանքով։

Ինչպես երևում է ԺԹ դարի բանասիրական գրականության Գոշավանքին վերաբերող տեղեկություններից, նրա այդ լքված ու ամայի վիճակը շարունակվել է ընդմիշտ և նա

19 Կիրակոս Գանձակեցի. էջ 209, 210 և 295։

20 Այդ տապանագիրը տեղում չգտնելու պատճառով մեջ ենք բերում Ի. Հարությունյանից, «Ազգագրական հանդես», Ժ գիրք, Թիֆլիս, 1903 թ., էջ 32։

այլևս չի վերահաստատվել որպես մենաստան։ Չնայած վանքի բակում եղած գերեզմանաքարերից երկուսն ունեն ԺԷ դարի վերջին քառորդին պատկանող տապանագրություններ՝ «Այս է հանգիստ Մկրտիչ պարոն տէրին, թուին ՌՄԻԴ» (1675), «Այս է տապան Սարկաւագ քահանա[յ]ի. Թ. ՌՃԼԵ» (1696),— սակայն դրանք չեն կարող հիմք ծառայել ենթադրելու վանքի գոյության մասին։ Այնտեղ կարող էին թաղումներ տեղի ունենալ նաև մենաստանի լքված և ամայի ժամանակ, բացի դրանից, երկրի քաղաքական դրությունը այդ շրջանում խիստ անբարենպաստ էր՝ թուրք-պարսկական անընդհատ կրկնվող պատերազմների հետևանքով։

Դրանից հետո Գոշավանքի մասին առաջին տեղեկությունը հաղորդում է Սարգիս վարդապետ Ջալալյանը[21], ԺԹ դարի քառասնական թվականներին այցելելով Գոշավանք, շատ սեղմ ձևով տալիս է նրա կառուցման հանգամանքները, հիմք ընդունելով Կիրակոս Գանձակեցու վկայությունները և ընդօրինակում շուրջ 28 վիմագրություններ՝ նկատելի անճշտություններով։ Ցավոք սրտի Ջալալյանը ամենևին չի հիշատակում վանքի դրության մասին. բայց հենց դրանից էլ հետևում է, որ վանքը լքված էր ու ամայի վիճակում։

Գոշավանքի մասին հաջորդ տեղեկությունը հաղորդում է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը[22], որը 1862 թվականի օգոստոսի 14-ին մի խումբ աշխարհական ու հոգևորական ուխտավորների հետ միասին այցելելով Գոշավանք, զբաղվել է նրա համառոտ ուսումնասիրությամբ—կատարել է հուշարձանների նկարագրությունը և ընդօրինակել է մի քանի արձանագրություններ։ Նա ի միջի այլոց տեղեկացնում է, որ շուրջ հինգ տարի է, ինչ վանքի պարսպի ներսում բնակվում է էջմիածնի վանքի կալվածների (անասնամասեր և վարելահողեր) վերատեսուչ՝ երևանցի Վախտանգ Փարսադանյանը, որը միաժամանակ հսկում է և վանքին։ Սակայն Սմբատյան արքեպիսկոպոսը չի հիշատակում ո՛չ վանքի առաջնորդի ու միաբանության և ո՛չ էլ գյուղական քահանայի մասին, չնայած այն բանին, որ մնացած բոլոր դեպքերում նա առաջինը հիշատակում է վանքերի սպասավորների և գյուղական քահանաների մասին։ Դրանից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ Գոշավանքը գտնվում էր քայքայված ու ամայի վիճակում։

Սմբատյանից շուրջ երեսուն տարի հետո, 1892 թվականին, դպրոցների ամառային արձակուրդների ժամանակ, իր աշակերտների հետ միասին Գոշավանք է այցելում Իսահակ Հարությունյանը[23]։ Նա կազմել է յուրաքանչյուր հուշարձանի համառոտ նկարագիրը, ընդօրինակել է շուրջ 65 վիմագրություն և այդ բոլորը հոդվածի ձևով հրատարակել «Ազգագրական հանդէս»-ում։ Հոդվածի ներածական մասը նվիրված է Գոշի կյանքին ու գործունեությանը։

Ի. Հարությունյանից փոքր ժամանականց Գոշավանք է այցելում «Արցախ»՝ այնքան հետաքրքիր ու արժեքավոր աշխատության հեղինակ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը[24]։ Աշխատության Գոշավանքին վերաբերող գլխում հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում վանքի դրության մասին։ Այդ առթիվ նա գրում է. «Հապար ափսոս, հետզհետէ բոլորովին ոչնչանում են այս պատուական տաճարներն. կարօտ են նորոգութեան, բայց նորոգող չկայ. խղճալի դրութեան մէջ են, բայց նայող չկայ. բոլոր տաճարներս յանձնուած է մի անհասկացող քահանայի, որ խապառ անհոդ է» (էջ 356)։

Գոշավանքը ԺԹ դարի վերջերին ոչ միայն լքված ու ամայի էր, այլև նրա հոյակապ ճարտարապետական կառուցվածքները գրտնվում էին խիստ քայքայված ու անխնամ վիճակում։

Դրանից հետո ոչ մի տեղեկություն չունենք Գոշավանքի մասին. հավանական է, որ նա շարունակեց մնալ այդ նույն քայքայված ու անխնամ վիճակում մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, ենթակա մարդկային անողոք ձեռքի և բնության արհավիրքների ավերիչ ազդեցությանը։

Սովետական իշխանության տարիներին խոշոր աշխատանքներ են կատարվել Գոշավանքի գիտականորեն սիստեմատիկ ուսումնասիրության, վերանորոգման ու բարեկարգման, ինչպես և նրա պահպանության հետագա ապահովման ուղղությամբ։

Սովետական իշխանության հենց առաջին տարիներին, չնայած երկրի տնտեսական ծանր դրությանը, կառավարությունը անհրաժեշտ միջոցներ էր հատկացնում փլման վտանգի ենթակա հուշարձանների պահ-

21 Սարգիս վարդապետ Ջալալյանց. «Ժամանակագրութիւն ի Մեծն Հայաստանս», մասն Ա, Տփխիս, 1848 թ., էջ 138—145։

22 Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց. «Տեղեկագիր Գեղարքունի ժողովարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ», Վաղարշապատ, 1895 թ., էջ 172—176։

23 Ի. Հարությունյան. «Գոշավանք կամ Նոր Գետիկ», «Ազգագրական հանդէս», Ժ գիրք, Թիֆլիս, 1903 թ., էջ 5—38։

24 Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց. «Արցախ», Բաքու, 1895 թ., էջ 342—356։

պանությունն ապահովելու համար։ Նախնական ուսումնասիրություններ պարզեցին, որ Գոշավանքը նույնպես պատկանում է այդ կարգի վտանգված հուշարձանների թվին. թափված էին բոլոր հուշարձանների տանիքի սալաքարերը, երեսապատ քարերի ու քիվերի ոչգալի մասը, խիստ կերպով քայքայված էր ղլխավոր տաճարի գմբեթը, այն հալոցքի շրերը և անձրևաշրերը ներս ծծվելով ծածկի ու պատերի մեջ ավելի էին արագացնում դրանց քայքայումը։ Հուշարձանների շուրջը և ոմանց ներսը լիքն էին աղբով, իսկ բակի ազատ մնացած մասն էլ օգտագործում էին որպես բանջարանոցի, ուր ոռոգող շրերը ծծվելով հուշարձանների հիմքերը, մեծ չափով վտանգում էին նրանց պահպանությունը։

Եվ ահա, առաջին շրջանում, որպես շտապ օգնության միջոցառում, ձեռնարկվեց վանքի կառուցվածքների պահպանության ապահովմանը։ Նախ աղբից մաքրվեցին վանքի շրջապատն ու շենքերը և արգելվեց այն որևէ ձևով օգտագործելը։ Բոլոր հուշարձանների տանիքները ժամանակավորապես ծածկվեցին կղմինդրով. վերականգնվեցին թափված երեսապատ քարերն ու քիվերը. ղխավոր տաճարի գմբեթը, որ առաջացած բազմաթիվ ճեղքվածքների հետևանքով սաստիկ խարխլվելով ենթակա էր շուտափույթ փլման, ժամանակավորապես ամրացվեց երկաթյա լայնաշերտ գոտիկանման օղերով։ Ապա, հետագա պահպանությունն ամենօրյա հսկողությունն ու խնամքը ապահովելու նպատակով, կարգվեց հատուկ հաստիքային պահակ։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Ճարտարապետության գործերի և շինարարության պետական կոմիտեն, իր հատուկ գիտա-ռեստավրացիոն արվեստանոցի միջոցով, 1958 թվականից ձեռնամուխ է եղել Գոշավանքի հուշարձանների հիմնական վերանորոգմանն ու վերականգնմանը։ 1958 թվականին ամբողջապես ավարտվել են բոլոր շենքերի նախկինում կղմինդրով ծածկը սալաքարերով փոխարինելու աշխատանքները, ամբողջապես վերականգնված են երկու Ս. Գրիգոր եկեղեցիների քանդված մասերը, թափված երեսապատման քարերն ու քիվերը։ Ս. Գրիգոր եկեղեցու քանդված գմբեթի փոխարեն կառուցված է վեղարաձև հատուկ ծածկ։ Ս. Գևորգ եկեղեցին, որ երկրաշարժերի հետևանքով խիստ քայքայված վիճակում էր և ենթակա էր շուտափույթ փլման, ամբողջապես հավաքվել ու վերաշարվել է։

Ընթացիկ տարում նախատեսվում է դխավոր տաճարի գմբեթը, որը, ինչպես ասվեց վերևում, նույնպես բազմաթիվ ճեղքեր էր տվել և ենթակա է շուտափույթ փլման ու ժամանակավորապես ամրացված է երկաթյա լայնաշերտ գոտիներով, ամբողջովին հավաքել և նորից վերաշարել, ինչպես և վերականգնել մյուս բոլոր հուշարձանների քանդված մասերը և տանիքները պատել սալաքարերով։ Վանքի ընդհանուր բարեկարգման ուղղությամբ նախատեսվում է ցանկապատել, ծառազարդել ու կանաչապատել այն։

Այդ բոլորով հանդերձ հիմնովին կավարտվեն Գոշավանքի վերանորոգման ու բարեկարգման աշխատանքները և երկար ժամանակով կապահովվի այդ կարևոր հուշարձանների խմբի պահպանությունը։

(Նաուունակելի)

Ա. ԵՐԵՄՅԱՆ

ԷՋԵՐ ՍԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ

Հայ մանրանկարչական արվեստի ԺԵ դարի պայծառ և լուսաշող դեմքերից մեկն է Աբրահամ վարդապետը, որ հայ գեղարվեստին ավանդ է թողել նկարչական գեղեցկություններ, որոնք մինչև օրս էլ դեռ չեն ուսումնասիրվել։

Վաստակավոր հոգևորականի նկարչական գործունեության պատմության էջերը մեզ տանում են պատմական Տարրերունի (Թերկրի) գավառը և Միջագետքի Ամիթ մայրաքաղաքը, որտեղ նա նկարազարդել է մի շարք ձեռագիր Ավետարաններ, որոնք արժեքավորում են գրչագրերի գեղարվեստական բովանդակությունը, միաժամանակ ընդգծում նկարչի ինքնուրույն և հմուտ վրձինի մասին։

Ո՞վ է, սակայն, այս հոգևորական արվեստագետը։

Նրա կյանքի և նկարչական գործունեության հիմնական էջերի մասին ձեռագիր Ավետարանների հիշատակարաններում, դրժբախտաբար, շատ քիչ տեղեկություններ կան։ Այսքանը միայն պարզ է, որ նա ապրել և ստեղծագործել է ԺԵ դարի առաջին շրջանում։ Իր կրթությունն ստացել է Թերկրիում, իսկ նրա նկարչական արվեստի զարգացման գործում առանձնապես մեծ ազդեցություն է թողել ժամանակի տաղանդավոր նկարիչներից Մանվելը, որ մշակել է նրա հոգու խորքում թաքնված նկարչական գեղեցիկ ձիրքը։

Նա, հավատարիմ մնալով իր ժամանակի ոգուն, նվիրվել է հոգևոր կոչման, վարդապետ է ձեռնադրվել և դիտակից իր հոգևոր կոչմանը, իր ամբողջ կյանքը նվիրել է Հայ Եկեղեցուն ու ժողովրդին, միաժամանակ մեծ սիրով ու եռանդով զբաղվել է մանրանկարչական արվեստով։ Նա խորապես ուսումնասիրել է հայ մանրանկարչության լավագույն ավանդներն ու նվաճումները և կերտել է իր ինքնատիպ արվեստը։

Որպես պատրաստված ու հմուտ արվեստագետ նա ամբողջ հոգով նվիրվել է նաև նոր սերնդի գեղարվեստական դաստիարակության վեհ գործին և նրանց հոգիներում քանդակել է նկարչական արվեստի սերը, միաժամանակ իր վրձինած ձեռագրերով նպաստել է ժողովրդի գեղարվեստական ճաշակի զարգացմանը։ Իր եռանդուն ու նվիրված պաշտոնավարությամբ, իր նկարչական բարձր մշակույթով էլ նա սիրվել և հարգվել է թե՛ ժողովրդից և թե՛ նոր սերնդից։

Մի հանգամանք անժխտելի է, որ նա եղել է արժանավոր, գիտակից և իր կոչման բարձրությանը վրա կանգնած հոգևորական, իսկ իբրև մանրանկարիչ փայլել է իր ինքնատիպ ոճով ու արվեստով։ Նրա վրձինի ներքո կերպարանավորվել են մի շարք ցայտուն ու պայծառ դեմքեր, գեղեցիկ խորաններ և նուրբ զարդանկարներ։ Այդ մանրանկարները վկայում են, որ նա հանդիսացել է իր ժամանակի տաղանդավոր նկարիչներից մեկը, որն ունեցել է դիտելու և խոր թափանցելու միտք, նկարչական հարուստ փորձ և ճաշակ։ Առհասարակ, նրա վրձինը համարձակ է և վստահ, երանգավորումները ներդաշնակ են և ոճը՝ գեղեցիկ։ Այդ ամենը մի առանձին գրավչություն են տալիս նրա նկարազարդած ձեռագրերին։ Թերևս ընդգծված երևույթներով էլ պիտի բացատրել, որ նրա նկարներից յուրաքանչյուրն ունի իր առանձին գեղեցկությունը, կան նկարներ, որոնք վրձինված են ոչ միայն ճաշակով, նրբությամբ և ներշնչումով, այլև նկարչական արվեստի տարբեր գեղեցկություններ

են։ Այդ մանրանկարներն էլ վկայում են, որ Աբրահամ վարդապետը իր դարաշրջանում բարձր է պահել հայ մանրանկարչության դրոշը և իր ստեղծագործություններով կարողացել է գրավել իր ժամանակի գեղարվեստասեր ժողովրդի սերն ու համակրանքը։

Այժմ գծենք նկարչի հայ ժողովրդին նվիրած և մեզ ծանոթ ձեռագրերի պատկերը։

Տաղանդավոր մանրանկարչից մեզ ավանդ մնացած մի նկարազարդ ձեռագիրն ունի 539 երկար տարիների պատմություն։ Դա 1420 թվականն է, երբ վաստակավոր գրիչ Մկրտիչ հոգևորականը «ի գաւառիս Տարբերունի» գրում է մի Ավետարան, որի հիշատակարանում կարդում ենք։ «...Եւ արդ, ես՝ յետինս ի կրօնաւորաց և անպիտանս ի բանասիրաց, անարժանս ի մանկունս եկեղեցւոյ և անիմաստս ի քարտուղարաց [Մկրտիչ] շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց Մեծաց ՊԿԹ (869+551=1420)... ի գաւառիս Տարբերունի, որ այժմ կոչի Բերկրի...»։

Այս ձեռագիր Ավետարանի էջերը 1420 թվականին, Բերկրիում, ծաղկում և նկարազարդում է տաղանդավոր մանրանկարիչ Աբրահամ վարդապետը։ Այդ հանգամանքը հաստատում են «Ավետարանս»-ի հիշատակարանի հետևյալ տողերը. «...Ցիշեցէք զԱբրահամ սրբահոգի կրօնաւորն, որ զարդարեաց և ծաղկեցոյց Սուրբ Աւետարանս, և երկու ֆլօրի եթող ի վարձէնս։

Ձեռագրի մանրանկարներն, իրենց ինքնուրույն ոճավորումով և գույների գեղեցիկ ներդաշնակությամբ վկայում են, որ նկարիչ Աբրահամ վարդապետը բնածին տաղանդ և զգայնություն է ունեցել գեղեցիկն ըմբռնելու և պատկերելու։

Մանրանկարիչ Աբրահամ վարդապետի վրձինած մի այլ ձեռագիրը գտնվում է բնիկ քյազազցի և այժմ թեհրանաբնակ Սարգիս Մարտիրոսյանի մոտ։ Դա կաշեկազմ մի Ավետարան է, որը գրվել է նույն 1420 թվականին Հովհաննես ատեղայի գրչով։ Հիշատակարանում կարդում ենք. «...Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի լաւ և յընտիր աւրինակէ ի թուականութեանս Հայկազեան տումարի ՊԿԹ (869+551=1420)... ի գաւառիս Տարբերունի... ձեռամբ Յովանէս ատեղայի անիմաստ և տխմար գրչի... որք հանդիպիք ի սմայ յիշեսցէք... և զիս՝ զանպիտան գրիչս...»։

Ձեռագրի գեղարվեստական տպավորությունը խորացնում են զարդանկարները և հիասքանչ խորանները, որոնց հմուտ վրձինով նկարել է վաստակավոր մանրանկարիչ Աբրահամ վարդապետը, ինչպես այդ ցույց են տալիս հիշատակարանի հետևյալ տողերը. «... այլ և աղաչեմ զձեզ զԱբրահամ վարդապետ՝ ծաղկող սորին և զենօղն իւր յիշեցէք»։

Տասնմեկ տարի հետո, 1431 թվականին, վաստակավոր մանրանկարչին տեսնում ենք Միջագետք գավառի Ամիթ մայրաքաղաքում։ Դա այն պատմաշրջանն էր, երբ Ամիթի և «ամենայն Միջագետաց» արքեպիսկոպոսի պատասխանատու և ծանր պաշտոնը վարում էր տաղանդավոր նկարիչ ու հռչակավոր բանաստեղծ Մկրտիչ Նաղաշը, որի շնորհիվ ժամանակի գրչական, մանրանկարչական և բանաստեղծական արվեստներն առանձին փայլ ու երանգ են ստանում և անում ուշագրավ նվաճումներ։ Ահա այդ պատմաշրջանում Ամիթ մայրաքաղաքի գրչական դպրոցի լավագույն դեմքերից Գրիգորը, 1431 թվականին, գրում է մի Ավետարան, որի հիշատակարանում արձանագրված են հետևյալ տողերը. «Արդ, գրեցաւ և աւարտեցաւ Սուրբ Աւետարանս ի գաւառս Միջագետաց, յԱմիթ մայրաքաղաքի... ի հայրապետութեան Տեառն Կոստանդի Վահկեցոյ, և ի վերադիտողութեան Ամիթ շահաստանի Տէր Մկրտիչ աստուածարան վարդապետի և արքեպիսկոպոսի ամենայն Միջագետաց և երեսփոխանի կաթողիկոսի ամենայն Հայաստանեայց և մինչ ի ծայրս արևելեան իշխեցողի, և ի թագաւորութեանն ամենայն Միջագետաց պարոնին, որ կոչի շահ Ալիմամ Պահատուր, ի թվ. Հայկազանս տումարի ՊՁ-երորդիս (880+551=1431)։

Գրիգոր գրչի գրած ձեռագիր Ավետարանի հիշատակարանն արժեքավոր է այն տեսակետից, որ 1431 թվականին Հայաստանում տեղի ունեցող քաղաքական աղետալի դեպքերի մասին ուշագրավ տեղեկություններ է տալիս։

Դա այն մռայլ դարաշրջանն է, երբ օտար արշավանքների ու ասպատակությունների հետևանքով կոտորվում են Ամիթ քաղաքի, գյուղերի ու ավանների խաղաղ բնակիչները։ Ժամանակի ժողովրդի անասելի ծանր դրության ներն ու տառապանքները խորապես հուզում են դեպքերին ականատես եղող վաստակավոր գրիչ Գրիգորի հոգեկան աշխարհը և նա խոր վշտով ու կսկիծով գրի է առնում ժամանակի ժողովրդի անասելի ծանր դրության պատկերը։ Ահա գրչի վկայությունը. «... ի գաւառսն և ի գեաւղսն, որ և զրազում աւանս անմարդաբնակ արար, մինչ զի չորքոտանիքն յամայի շրջէին և ամենայն հայրենիք կողոպուտ եղան յարքունիսն։ Եւ արդ, ոչ ոք կարէ ընդ գրով արկանել կամ լեզուաւ ճառել զաղէտս կսկծանաց և զողբս տարակուսանաց և զհառաչանս սրտից և զկոծս տարակուսանաց, զոր գործեացն ի միջի մերում... յամենայն ուրեք ողբ հառաչանաց և յամենայն տուն

կոծս տարակուսանաց, լալումն որբոց և աղաղակ այրեաց, կսկիծ ծերոց և մաղկատումն մանկամեռ մարց, յամենայն լեզէ վայ և յամենայն բերանոյ ապաշաւանք»։

Ահա այս քաղաքական անմխիթար շրջանում, 1431 թվականին, տաղանդավոր մանրանկարիչ Աբրահամ վարդապետն Ամիթ մայրաքաղաքում նկարազարդում է «Գրիգոր գրչի «ընտիր» օրինակի ընդօրինակած Ավետարանի էջերը, որոնց մեջ ցոլանում է նկարչի վրձինի հմտությունը և նրա արվեստի խորությունը։ Ահա հիշատակարանի արձանագրությունը. «Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զքաջ քարտուղարն զԳրիգոր գրագիր, որ գրեաց զսա յ[ը]նտիր աւրինակէ։ Այլ և զԱբրահամ վարդապետ որ զարդարեաց զսա ծաղկով և ամենայն տնաւրինականաւք և կազմեաց, և զայնոսիկ, որք աշխատեցան ի գործառութիւն սորա, որ աւարտեցաւ Սուրբ Աւետարանս, որոց ամենեցուն յամենայնի ողորմեսցի Տէրն ամենայնի, ամէն և եղիցի»։

Ձեռագրի նկարները մանրանկարչական արվեստի գեղեցիկ նմուշներ են, որոնցից ուշադրություն են գրավում գրչագիրն ստացող մահտեսի Ագիդի վաղամեռ թոռների՝ Հիսենի և Հովհաննեսի կերպարները, որոնք ձեռքերը բաց՝ կանգնել են իրենց ամբողջ հասակով։ 528 երկար տարիներ առաջ վրձինված այդ տիպարները խոսուն են և կենդանի, որոնց առանձին գրավչություն են տալիս հագուստները և գեղեցիկ դիխարկները։ Այդ տարազները պարզ գաղափար են տալիս ԺԵ դարի պատանեկան զգեստի մասին և ունեն ազգագրական ուրույն արժեք։

Հայ միջնադարյան նկարչության հայտնի գեմքերից մեկն է Աբրահամ վարդապետը, որի 1420 և 1431 թվականներին վրձինած ձեռագրերի մանրանկարներն ու դիմանկարները ցայտուն գաղափար են տալիս նրա ինքնատիպ արվեստի էության և գեղարվեստական ձևակերպումների մասին, մի վաստակավոր հոգևորական, որը ԺԵ դարում հանդիսացել է պատմական Ամիթ մայրաքաղաքի և Բերկրի գավառի նկարչական դպրոցների մի վարպետ մանրանկարիչը և փայլել է որպես հմուտ ծաղկող և տաղանդավոր դիմանկարիչ։ Ահա թե ինչու նրա լավագույն մանրանկարները հայ բազմադարյան նկարչական մշակույթի գանձարանում տեղ են գրավելու, իսկ գեղարվեստասեր սերունդները նկարչի անունն իրենց սրտերում վառ են պահելու։

Բ. ԾԱՂԿՈՂ ՄԵԼՔԻՍԵԹ ԵՐԵՑ

Վիեննայի Մխիթարյան միաբանության պատմական վանքի ձեռագրատանն առանձին խնամքով և գուրգուրանքով պահվում է մի ձեռագիր «Մանրուսմունք», որ իր բովանդակությամբ հայ երաժշտական արվեստի պատմության ուսումնասիրության համար մի արժեքավոր աղբյուր է։ Դա հատկապես երաժշտասերների համար խմբագրված «ցանկալի» մի երգարան է, որպեսզի նրանք երաժշտական եղանակները հարազատությամբ և հեշտությամբ երգեն։

Ձեռագիր «Մանրուսմունք»-ը 537 տարվա երաժշտական արվեստի մի թանկագին վավերագիր է։ Այդ տեսակետից էլ գեղարվեստական առանձին արժեք է ներկայացնում։

Թե ո՞վ է երաժշտական ձեռնարկի սկզբնական խմբագրող հեղինակը՝ հայտնի չէ, իսկ ընդօրինակության համար պարտական ենք վաստակավոր գրիչ Հովհաննես արվեստագետին, որ «ի գերահռչակ» Սանահին վանքում 1421 թվականին, «լալ և յընտիր աւրինակէ» ձեռագիրն ընդօրինակելիս մի հիմնական նպատակ է ունեցել— ժամանակի նոր սերնդի երաժշտասերներին ծանոթացնել «առոգանութեան խազերս-ի, «երգողական նշաններս-ի և բազմերանգ ձայնանիշների հետ։ Այդ հասկացողությամբ էլ նա «Մանրուսմունք»-ի էջերը զարդարել է ժամանակի հայտնի երգերով և եղանակներով, որպեսզի ձայնավոր երաժիշտ պատանիներն ու երիտասարդները ճիշտ և անթերի երգել սովորեն և լրացնեն իրենց գեղարվեստական կրթությունը։

Այս թանկագին ձեռագիր երգարանն ստանում է պատմական Սանահին վանքի միաբաններից Մելքիսեթ կուսակրոն քահանան, նկարչական ձիրքով օժտված մի արվեստագետ, որ ԺԵ դարաշրջանում հռչակվել է որպես ծաղկող և կազմող։

Ի՞նչ պատկեր են ներկայացնում արվեստագետ հոգևորականի կյանքի պատմության էջերը։ Նրա մասին, դժբախտաբար, շատ քիչ բան գիտենք։ Թե նա ո՞րտեղ է ծնվել, ո՞ր տաղանդավոր նկարչի մոտ է ստացել իր նկարչական կրթությունը և գեղարվեստական ի՞նչ գործունեություն է ունեցել, այս հարցերի մասին փաստական տեղեկություններ չկան։ Պարզ է միայն այն, որ նա Սանահնի գեղարվեստական դպրոցի վարպետ ծաղկողներից մեկն է։ Նույնպես ձեռագիր հիշատակարանի տվյալները վկայում են, որ նա զավակն է Խուրիսի և Մինա-Խաթունի, իսկ իր հարազատ եղբայրներն են՝ Սեթ, Աթաբեկ, Մելիք և Հովսեփ։ Երկար տարիներ նա աշխատել է Սանահին վանքում, ուր բազմաթույն նկարներով ծաղկել, զարդարել և կազմել է

արժեքավոր ձեռագիրը։ Ահա հիշատակարանի փաստական տողերը. «... Ցիշեցէք ի Քրիստոս զիս՝ զմեղապարտ գրիչս զՅոհաննէս... նաև զստացաւղ սորին զՄելքիսէթ ծաղկող և կազմող... և զրարեպաշտ ծնօղսն իւր զհայրն զԽուրիմ և զմայրն զՄինախաթուն, և զհարազատ եղբարքն իւր զՍէքն, զԱթաբէկն, զՄելքի և զՅովսէփ, հանդերձ ամենայն լրմամբ՝ յիշեցէք ի Քրիստոս... Ո՞վ դասք լուսերամից և քաղցրանուագ երաժշտապետք, որ օգտիք ի սմանէ և վայելէք՝ զմեղաւոր գծողս յիշեցէք»։

«Մանրուսմունքս-ի հիշատակարանի վկայությամբ ձեռագիրն ընդօրինակող Հովհաննես գրիչը և նկարազարդող Մելքիսեթն ապրել և ստեղծագործել են քաղաքական ծանր պայմաններում։ Դա ժե դարի առաջին հիսնամյակի ժամանակաշրջանն է։ Դեռ 1421 թվականին «ազգին նետողաց՝ խորազմն անուանեալ» Շահրուխի արյունարբու զորքերը չորրորդ անգամ ասպատակում են պատմական Հայաստանի հողի վրա և քանդում, ավերում, կողոպուտում են շեն քաղաքներն ու ավանները և խաղաղ բնակչությանն անասելի զրկանքների ու տանջանքների ենթարկում։

Ուշագրավ է, սակայն, մի հանգամանք, որ հայ ժողովրդի այդ դառն ու վշտաբեր ժամանակում կանգ չի առնում նրա մշակութային և գեղարվեստական կյանքը։ Այդ ծանր շրջանում Հովհաննես գրիչն ընդօրինակում է երգարանը, իսկ Մելքիսեթ նկարիչը ձեռագիրը ծաղկազարդում է և կազմում։ Այդ հանգամանքը հաստատում են երգարանի հիշատակարանի տողերը, ուր ակնարկներ կան նաև հայ ժողովրդի ապրած անասելի ծանր դրության մասին։ Ահա հիշատակարանի պատկերը. «... Կատարեցաւ ցանկալի երգարանս երաժշտական ձայնաւորացս ի թուականութեան հայկազեան տումարի յութից հարիւրոց և է-եակ տասանց (1421), յամի յորում եղև ելանել ասպատակաւ ի մերում ժամանակս չորրորդ անկամ, ազգին նետողաց՝ խորազմն անուանեալ ազանց Շահռուխ փաթշահին պարսից, սատակչին թուրքման ազգին. ի յայս և ի տոյն ժամանակս գրեցաւ տետրակս ի սուրբ և ի գերահռչակ ուխտս որ կոչի Սանահին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և հրաշափառ կաթողիկէիս, յառ ոտս Ղազար վարդապետի և հարազատ եղբօր իւրոյ Յովսէփ փիլիսոփայի[1], ձեռամբ ամենամեղ և փցուն գրչի Յոհանիսի, ի լաւ և լրնտիր աւրինակէ Առաքելցոյ...»։

Ահա ժե դարի վաստակավոր գրիչ Հովհաննեսը և վարպետ ծաղկող Մելքիսեթ երեց նկարիչն իրենց գեղարվեստական գործունեությամբ նույն դարաշրջանի հայ գրչական և մանրանկարչական արվեստների գանձարանը հարստացրել են, միաժամանակ նոր սերնդի սրտերում վառ են պահել հայ երաժշտության և նկարչության սերը։ Նրանց այդ ազնիվ և վեհ աշխատանքն արժանի է չերմ և խոր գնահատության։

[1] Միջնադարի վաստակավոր հայ երաժիշտներից մեկը։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՄԻ ՆԿԱՐՉԻ ԵՐՋԱՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՐ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻՆ*

Ճշգրիտ և հստակ ինչպես իր նկարչական արվեստը, Գրիգոր Շիլթյանը նկարագրում է Սովետական Միությունում վերջերս կատարած իր ճանապարհորդությունը, բնաշխարհի և նկարների վրա, որոնք ուրվագծվում են իր խոսքերի մեջ, տարածվում է մի ջերմ և ոսկեզօծ լույս, որից ամբողջ կաղրը թրթռում է։ «Հուզումներս այն բառն է, որը հաճախ հանդես է գալիս Շիլթյանի զրույցի մեջ։ Նա խոր զգացմունքներով շեշտում է այն ապրումները, որ ունեցել է քառասուն տարի բացակայությունից հետո Հայրենիքում, ինչպես նաև իր նախահայրերի երկրում գրկախառնումները. հուզմունքով է խոսում այն ամենի մասին, ինչ տեսել և լսել է նա։

Կոպենհագենից Մոսկվա ռեակտիվ օդանավով երկու ժամվա թռիչք և այդտեղից էլ Հայաստան։ Զրույցը ընթանում է հանպատրաստից, հոսուն և կուռ։ Ահա քաղցր և առասպելական երկիրը՝ Հայաստան, որը որպես մի կայծկլտող լուսավոր կետ, վերևից դիտողի համար հիշեցնում է մի քիչ Իսպանիան։ Մի ընդարձակ խստադեմ բարձրավանդակ դեղին ներկված և հանկարծակի ու իշխող, դեպի երկինք սլացող, Արարատ լեռը։ Հանդիսավոր և միաժամանակ անզուգական, հրաշալի տեսարան. և Շիլթյանը ներկայացնում է այդ, նման այն խորհրդավոր աշխարհներից մեկին, որն արվեստագետները պատկերացնում են իրենց ներքին աշխարհում, նախքան այդ հավերժացնելը բանաստեղծությամբ կամ գույներով։ Այնուհետև քաղաքներ, մարդիկ և նրանց մոտ եռանդ, սիրտը հուզող մարդկային ջերմություն։ Ահա և Երևանը՝ քառասուն տարի առաջ մի խեղճ գյուղ, այսօր հիանալի արդիական մի քաղաք, եվրոպական մի քաղաք, այդ բառի քաղաքակրթություն և մշակույթ նշանակող ամբողջ առումով։

ՄՏԱՎՈՐ ԿՅԱՆՔ

Ծառուղիներ, այգիներ, հնկայական բնակելի շենքեր տուֆից, որի պաշարներով Հայաստանը հարուստ է, զանգվածային կառույցներ՝ բազալտից։

Երևանը իր կառուցվածքով հիշեցնում է կենտրոնական Իտալիայի մի քանի քաղաքները, Ընդհանրապես հստակ, պարզ, բանական, բայց ոչ սառը ճարտարապետություն՝ նորշնչված հնկայական արվեստի գոհարներից, որի վկաներն են հռչակավոր եկեղեցիներն ու հիանալի տաճարները։

«Բայց այն, ինչ բոլորից շատ է հուզում, — ասում է Շիլթյանը,— դա բոլորի և յուրաքանչյուրի մեջ գտնվող զննելու և սովորելու եռանդն է, կենսարար մտային լարվածությունը։ Շատ կարճ այցելությանս ընթացքում, իմ ուշադրությունը գրավեց բնականաբար մտավոր գործունեությունը։ Երևանում բարձրանում է ազդեցիկ մի կառույց, ճարտարապետական արվեստի մի հիշատակարան՝ կառուցված Մարկ Գրիգորյանի կող-

---

* *Իտալական «Պանչ» սերուա թերթի 1959 թվականի փետրվարի 7—8 համարներից քաղվածաբար հանույցով հրատարակում ենք հուշերը իտալահայ հայտնի նկարիչ պր. Գրիգոր Շիլթյանի, որը, Վեհափառ Հայրապետի հրավերով, 1958 թվականի հոկտեմբերին ուխտավորաբար այցելել էր Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։*

մից, քաղաքի վրա իշխող բլուրներից մեկի վրա։ Դա նոր գրադարանի՝ «Մատենադարան»-ի շատ արդիական կենտրոնական շենքն է. այստեղ պետք է ամփոփվի արխիվը, որը պիտի համարակալի անգնահատելի արժեք ունեցող հայկական ձեռագրերը, դիտական արժեք ունեցող նախաքրիստոնեական երկերը, հունարենից և լատիներենից թարգմանությունները, որոնց բնագրերը կորել են. գիտության մի իսկական աղբյուր, որը դրված է ամբողջ աշխարհի ուսումնասիրողների տրամադրության տակ։ Շուտով այստեղ կտեսնի մի համաշնագիտարան հայերեն լեզվով։ Սրանք այնպիսի գործեր են, որոնցով կարող է հպարտանալ ամեն մի երկիր։

Ջանազան հիմնարկների շարքին պետք է թվել Գիտությունների բարգավաճ ակադեմիան, Պոլիտեխնիկ ինստիտուտը, Գեղարվեստի թանգարանը՝ գլխավորված հռչակավոր նկարիչ Սարյանի կողմից, որտեղ գտնվում է հիանալի մի Գուարդի։ Այստեղ, տարբեր ստեղծագործությունների թվում, ես զարմանքով նկատեցի իմ երկու նկարները։ Մի քանի տարիների ընթացքում միայն, թանգարանը ձեռք է բերել մեծ հաջողություններ արվեստի գործերի դասավանդման, արժեքների ձեռք բերման մեջ այնպես, որ նա նվաճել է Սովետական Միության մեջ երրորդ տեղը»։

ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՍԿԱԼԱՅՈՒՄ

Շիլթյանը շարունակում է և նրա հուշերը ավելի պայծառ են դառնում։ Ջերմ համակրությամբ ընդունվելով և հրավիրվելով զրուցելու արվեստագետների հետ նրանց «Տանը», ուստերեն լեզվով նրանց ներկայացնելուց հետո իր անհատական փորձ և արվեստի բնագավառում ձեռք բերած իր նվաճումները Իտալիայում, Ֆրանսիայում և ուրիշ երկրներում, Շիլթյանը իր հյուրընկալների հետ սկսել է մի աշխույժ զրույց։

«Ես համոզվեցի,— ասում է նա,—որ նրանք ակտիվ, գործունյա մարդիկ էին, պատրաստ ամեն ինչ լսելու և դիտակ, կատարելապես տեղյակ՝ արվեստի արդի բոլոր ուղղություններին։ Պնդել, որ Սովետական Միությունում արվեստի ձեր հնի տեղադրումն է, կլինի իսկապես ճշմարտություն։ Բանը նրանում է, որ արվեստի որոշ ձևեր, որոնք զարդանում են մեզ մոտ և հաճախ կարող են կատարվել տարբերակության կամ առևտրականների պահանջների հիման վրա, այնտեղ գոյության որևէ իրավունք չունեն։ Նկարիչները այնտեղ դիմագրավում են հասարակության ռեալ խնդիրները, որովհետև հենց նրանք ժողովրդի կյանքի խնդիրներն են և դրա համար էլ պարունակում են իսկական պոեզիայի հեռանկարներն ու արտահայտությունները։ Վերջապես, այսպես կոչված արդի նկարչությունը բացարձակապես արգելված չէ, բայց ոչ ոքի չի հետաքրքրում, ահա թե ինչ։ Քանի որ խոսվում է նկարիչների մասին, պետք է ավելացնել, որ նրանց տնտեսական ապահովությանը օժանդակում է պետությունը։ Այսպիսով, նրանք աղատ են զարգացնելու իրենց անհատական տաղանդը։ Նկարիչների համար կառուցված են քաղաքից դուրս գանազան շրջաններում վիլլաներ, ուր նրանք անցկացնում են իրենց հանգիստը և մոտիկից ուսումնասիրում բնաշխարհի գեղեցկությունը։ Այդ հանգստի տներում երբեմն-երբեմն հյուրընկալվում են օտարերկրացի արվեստագետներ, փոխադարձ այցելության հիման վրա։

Երաժշտությունն ու թատրոնը Շիլթյանի զրույցի հաջորդ գլուխներն են։

«Երևանում կա երկու հազար տեղերով գերազանցապես գեղեցիկ մի թատրոն։ Ես ունկընդրեցի մի համերգ, որը Սկալայի լավագույն համերգներին ոչնչով չէր զիջում, ոչ հայտագրում եղած կտորների կատարմամբ, ոչ էլ հասարակության ճաշակով և տեսքով։

Հանրածանոթ է սովետական ժողովուրդների սերը դեպի երաժշտությունը. այն բոլոր տներում, որտեղ ես հյուրընկալվեցի, քանդակագործության և նկարչության վերաբերյալ վիճաբանություններին հաջորդում էին երաժշտական ելույթներ։ Արվեստագետների երեխաները,— պետք է ասել, որ նրանք շատ երեխաներ ունեն,— հոյակապ կերպով կատարում են դաշնամուրի վրա Շոպենի, Բեթհովենի, Չայկովսկու, շատ սիրված հայ կոմպոզիտոր Խաչատրյանի ստեղծագործությունները։ Երբ պակասում էր մի կատարող, գրամաֆոնը գործի էր անցնում։ Ջայնապնակները Սովետական Միությունում լավագույն տեսակից են։

Դրամատիկական արվեստի և կինոյի նկատմամբ սերը ոչ նվազ բուռն է։ Այս բնագավառներում Իտալիան իր պատվո տեղն ունի. գեռևս վառ է էգվարդո Դե Ֆիլիպպինոյի՝ Ֆիլոմենա Մարտուրանո գեղեցիկ կոմեդիայի հաջողությունների հիշատակը։

Կինոյում Դե Սիկայի, Մանյանիի, Լալորրիջիտայի, Մասինայի, Լորենայի և շատ ուրիշների անունները ուղղակի ժողովրդական են»։

ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔԸ

«Աշխատանքի և վերածնունդի այս խանդավառությունը աչքաթող չի անում հին եկեղեցիների վերաշինությունը, լինի Հայաստանում, լինի Մոսկվայում։ Այսպիսով ոչնչանում է եկեղեցական հալածանքների փորձությունը,

Երևանից քսան կիլոմետրի վրա գտնվում է Էջմիածին սուրբ քաղաքը, երրորդ դարից մնացած Մայր Տաճարով, որը նշված է արվեստի բոլոր պատմություններում։ Էջմիածնում ևս վերաշինության կարևոր աշխատանքներ են տարվում։ Ես ինքս,— ավելացնում է Շիլթյանը բացահայտ հուզմունքով,— Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսից պատվեր եմ ստացել պատրաստելու Մայր Տաճարի Ավագ Սեղանի խորանի համար Հայաստանի Աստվածամոր նկարը։ Այս իմ ասածները փաստելու համար, պետք է ասեմ, որ ներկա գտնվեցի բացառիկ հանգիսավորությամբ կատարված եկեղեցական արարողություններին։ Իմ աշխատանքը պատրաստ կլինի ութ ամսում, որից հետո հույս ունեմ, որ պիտի կարողանամ Սովետական Միությունում անցկացնել ավելի երկար ժամանակ, ավելի մանրամասն ծանոթանալու համար ուրիշ բնագավառներում կատարված նվաճումներին»։

ՍԵՐԸ ԴԵՊԻ ԻՏԱԼԻԱ

Զրույցի եզրափակման մասում Շիլթյանը խոսում է Մոսկվա վերադարձի մասին, որտեղ նա ստացել է իր ուսումը։

«Շատ քիչ օրեր, ժամեր կարելի է ասել։ բայց Կրեմլի տեսքը թեկուզ այսքան արագ կերպով թողնում է միշտ շատ խոր տպավորություն։ Ամբողջ իմ ժամանակը օգտագործեցի թանգարանները, պատկերասրահները, որոնց թվում Պուշկինի անվան թանգարանը, Տրետյակովյան պատկերասրահը այցելելով։ Այսպիսի այցելությունները չեն կարող չխանդավառել մի իտալացու։ յուրաքանչյուր քայլափոխում, կարելի է ասել, հանդիպում ես ծանոթ տեսարաններին։ Այդտեղ կան Ալեքսանդր Իվանովի գործերը, որը երկար ապրել է Հռոմում, Շչեդրինի, որն ապրել է Սորրենտոյում և որը կարող է համարվել Պոսիլիպոյի շկոլայի նախակարապետներից մեկը, Բրյուլովի, Կրեպենսկու, որից կա մի նկար Նեապոլի մի սրճարան ներկայացնող։ Ինչ վերաբերում է ֆրանսիական նկարչությանը, նրանք ովքեր պնդում են, թե լավագույն իմպրեսիոնիստների գործերը գտնվում են ամերիկյան պատկերասրահներում, պետք է գան այստեղ տեսնելու։ Իմպրեսիոնիստներից մինչև կուբիստները, ամենագեղեցիկ Ռենուարներից մինչև Պիկասոն, բոլորն այստեղ են»։

Եվ այստեղ մեկ անգամ ևս «հուզմունք» բառը հնչում է Շիլթյանի զրույցի մեջ։

«Այն, ինչ շատ է հուզում,— ասում է նա,— դա այցելուների թիվն է։ Բոլոր օրերը, ամեն ժամ պատկերասրահները լիքն են այցելուներով, որոնց մեջ՝ և՛ զինվորներ, և՛ գյուղացիներ։ Բոլորի մեջ եռում է սովորելու տենչը, պահանջը դեպի կուլտուրան, արվեստը»։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀԱՅ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ազգագրագետների մի խումբ 1958 թվականի վերջերին ուսումնասիրություններ կատարեց Եռամշագինի շրջանի գյուղերում, կենտրոն ունենալով Բերդ գյուղը։

Եռամշագինի շրջանը ցարդ ազգագրական լուրջ և ամբողջական ուսումնասիրության չէր ենթարկվել։ Այս առաջին մեծ փորձն էր և պետք է ասել, որ արշավախումբը լավ արդյունքների հասավ։

Ազգագիրները ավելի շատ հետաքրքրվել են բնակավայրերի պատմությամբ, նրանց տեղագրությամբ, բնակիչների վարք ու բարքով (զբաղմունք, սոցիալական կյանք, ընտանեկան կյանք, հավատալիքներ, տարազներ և այլն), որոնց մասին շատ արժեքավոր նյութեր են ձեռք բերել։

Արշավախմբին գլխավորում էր պատմական գիտությունների թեկնածու Դերենիկ Վարդանյանը։ Արշավախմբի դրական նյութերը հավաքել են շուրջ 15 մասնակից ձեռագրերի մեջ։ Դրանք լուսաբանվում են շուրջ 300 լուսանկարներով և 40 գծագրերով։ Արշավախումբն իր տրամադրության տակ ունեցել է նաև բանավոր աղբյուրներ և վիմագրական տվյալներ։

Ըստ այդ աղբյուրների՝ Եռամշագինի շրջանի ութը գյուղեր հիմնվել են ԺԷ դարի վերջերին, Գանձակից և Նուխվերից գաղթած հայերի միջոցով։

Տեղական բնակչությունը լայն աջակցություն է ցույց տվել գիտական արշավախմբին։ Առանձին անհատներից գնված են տնայնագործական այլնայլ իրեր (ոչխար խուզելու մկրատ, մաքոր, իլիկ, գորգ գործելու թակ և այլն)։

Ցնոր են բերվել նաև հայ ժողովրդի կազմավորման վաղ շրջանին պատկանող մի շարք հնագիտական նյութեր, մատենագրական վավերագրեր։ Հետաքրքրական են է—Դ դարերին (մ. թ. ա.) պատկանող կճուճները, ուլունքները, մի կնոջական արձանիկ, մակույկաձև ազորիթը (երկանը) և այլն։ Դրանք բոլորն էլ հանձնվել են Երևանի Պետական թանգարանին։ Հավաքված նյութերը ենթարկվում են գիտական մշակման։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Հայաստանի կերպարվեստագետների հերթական վեցերորդ համագումարը, որը տևեց երեք օր, ապրիլի 5-ին ավարտեց իր աշխատանքները։ Համագումարի աշխատանքներին մասնակցեցին կերպարվեստագետների միության ստեղծագործական բաժիններում միավորված մոտ 240 գեղանկարիչներ, քանդակագործներ, գրաֆիկներ, թատերական նկարիչներ, արվեստագետներ, կիրառական արվեստի վարպետներ։ Համագումարում հաշվետու զեկուցումով հանդես եկավ միության նախագահ, Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը։

Համագումարին մասնակցեցին և ողջույնի ճառով հանդես եկան ՍՍՌՄ կերպարվեստագետների վարչության առաջին քարտուղար Ս. Վ. Գերասիմովը, ՍՍՌՄ կերպարվեստագետների միության քարտուղար Գ. Ս. Սուսյովը, Լիտվայի կերպարվեստագետների կողմից ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Ա. Ի. Ժմույդինավիչյուսը, Ադրբեջանական ՍՍՌ կերպարվեստագետների միության նախագահ Գ. Խալիկովը, Վրացական ՍՍՌ կերպարվեստագետների միության նախագահի տեղակալ Ջ. Գ. Լեժավան։

Հայաստանի կերպարվեստագետների միության վարչության նախագահ ընտրվեց Ռ. Պարսամյանը, տեղակալներ՝ Ս. Սաֆարյանը, Գ. Աղասյանը։ Նախագահությունում ընտրվեցին ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Մ. Սաքյանը, Արա Սարգսյանը, արվեստի վաստակավոր գործիչներ Մ. Աբեղյանը, Հ. Զարդարյանը, ինչպես նաև Ս. Մանասյանը և Գ. Արուտչյանը։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ.— Հնագույն ձեռագրերի աշխարհի խոշորագույն գրապահոցներից մեկն է Երևանի Մատենադարանը։ Վերջերս ավարտվեց նոր Մատենադարանի շենքի շինարարությունը։ Այժմ Մատենադարանը տեղափոխված է այդտեղ։ Նոր Մատենադարանի շենքը հայ ճարտարապետության նորագույն նվաճումներից մեկն է։ Նախագիծը մշակել է ականավոր ճարտարապետ Մ. Գրիգորյանը։ Շենքը յոթ հարկանի է, կառուցված է բազալտից, հայկական ազ-

գային հարտարապետության ոճով։ Ատորին երբեք հարկերում տեղավորվել է Մատենադարանի թանգարանն հավաքածուն, որի մեջ հաշվվում են մոտ 15 000 ձեռագրեր ու պատատիկներ, ինչպես նաև մոտ 200 000 արխիվային փաստաթղթեր, որոնք ընդգրկում են հայ և աշխարհի շատ ուրիշ ժողովուրդների հազարամյա պատմությունը։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ.— Ապրիլի 19-ին օգտագործման հանձնվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության ընդարձակառույց շենքը։ Շենքը կառուցված է Բարեկամության փողոցում, կարմիր տուֆ քարից։ Նախագծի հեղինակն է ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի անդամ ճարտարապետ Սամվել Սաֆարյանը։

Գ. ՀԵՆԴԵԼԻ ՄԱՀՎԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ ԵՐԵՎԱՆ.— Ապրիլի 17-ին, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի ընկերությունը և Հայաստանի սովետական կոմպոզիտորների միությունը Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում կազմակերպեցին Գ. Հենդելի մահվան 200-ամյակին նվիրված համերգ-երեկո։ Հայաստանի Կոմպոզիտորների միության նախագահ Էդ. Միրզոյանի բացման խոսքից հետո դերմանական հանճարեղ կոմպոզիտոր Գ. Հենդելի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Հարությունյանը։ Համերգային բաժնում ելույթ ունեցան Հայաստանի Պետական սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Օհան Դուրյան), Հայաստանի Պետական երգչախումբը (դիրիժոր՝ խորմեյստեր, արվեստի վաստակավոր գործիչ Նուպար Մեգրյան), համամիութենական մրցանակակրաշխության լաուրեատ երիտասարդ երգչուհի Արշավիր Կարապետյանը, Լեոն Այոյանը և ուրիշներ։ Կատարվեցին հատվածներ Հենդելի ստեղծագործություններից։

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՕպԵՐԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ ՄԵՆԱԿԱՏԱՐ ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԱՍՏՐՈԼՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Տաղանդավոր դերասան Դավիթ Հովհաննիսյանի գաստրոլները տրադիցիա են դարձել Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում։ Երկու տարվա ընթացքում Հովհաննիսյանը երրորդ անգամն է, որ նրան է ժամանում։ Երևանցիները սիրում և գնահատում են տաղանդավոր դերասանին։ Այս անգամ նա իր սիրելի հասարակության առաջ հանդես եկավ մի շարք նոր դերերով։ Բացի Վերդիի «Ռիգոլետտո», «Տրուբադուր», «Սիցիլիա» և Բիզեի «Կարմեն» օպերաներից, նա իր խաղացանկի մեջ մտցրել էր Վերդիի «Տրավիատա»-ն և Գունոյի «Ֆաուստ»-ը։

Հովհաննիսյանի կատարողական արվեստի բնորոշ գիծը նրա տաղանդի առանձնահատկությունն է, մասնավորապես դիպի մոնանվենտալություն՝ կերպարի խորացման մեջ։ Դավիթ Հովհաննիսյանը անսահմանափակ երաժշտական ու ձայնային տվյալներ ունի, ինչպես նաև արվեստի պրոֆեսիոնալ բարձր մակարդակ, որոնք նրա ստեղծագործական վիթխարի աճի գրավականն են։

ՄՀԵՐ ԱԲԵՂՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ.— Ապրիլի 12-ին Հայաստանի Պետական պատկերասրահում բացվեց Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Մհեր Աբեղյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր նրա ծննդյան հինգամյակի կապակցությամբ։ Բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի նկարիչների միության նախագահ Ռ. Պարսամյանը։ Այնուհետև ելույթ ունեցան և նկարչի ստեղծագործական ուղու վրա կանգ առան ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչներ Ս. Ստեփանյանը, Գ. Գյուրջյանը և ուրիշներ։

Ավելի քան 200 կտավից բաղկացած ցուցահանդեսը այցելուների վրա թողնում է խոր տպավորություն։ Արվեստի վաստակավոր գործիչ Մհեր Աբեղյանի ստեղծագործությունը բազմաժանր է։ Նա իր լավագույն ստեղծագործություններով նպաստում է հայ արվեստի բարգավաճմանը և վերելքին։

ՀԱՅԵՐԵՆԱԴԱՐՁ ԲԱՆԱՍՏԵՂԾ Ա. ԱԼԻԽՅԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՌՈՒՍԵՐԵՆ.— Մոսկվայում «Սովետսկի Պիսատել» հրատարակչությունը լույս է ընծայել երիտասարդ հայրենադարձ բանաստեղծ Ա. Ալիխյանի բանաստեղծությունների փոքրիկ ժողովածուն՝ «Վերադարձված երգը» խորագրով։ Ժողովածուի մեջ ամփոփված են բանաստեղծի ինչպես Սիբիրում՝ «Ծառությունը», այնպես էլ Երևանում և Մոսկվայում գրած «Հայրենիք» և «Կանաչ Սասան» բանաստեղծական շարքերը։ Թարգմանությունը կատարել է բանաստեղծուհի Վերա Զվյագինցևան։

ԿԱՆԱԴԱՅԻ ԴԻՐԻԺՈՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Ապրիլի 30—31-ին Երևանի Ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում Հայաստանի Պետական սիմֆոնիկ նվագախումբը տվեց երկու համերգ՝ կանադացի դիրիժոր Ժակ Բոուդրիի ղեկավարությամբ։

Համերգների ծրագրում տեղ էին գտել այնպիսի խոշոր և բարդ ստեղծագործություններ, ինչպիսիք են Հայդնի, Մոցարտի և Բրամսի ստեղծագործությունները։

Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակությունը ջերմորեն ընդունեց տաղանդավոր դիրիժորի ելույթները։

ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԸ ՈՉ ԵՎՍ Է.—Ապրիլի 8-ին, 74 տարեկան հասակում, մահացավ Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, նկարիչ Ռաֆայել Շիշմանյանը։

Երկար տարիներ ապրելով Փարիզում, հետո Հայրենիքից, Շիշմանյանը շարունակ տոգորված է եղել հայրենասիրական վառ զգացմունքներով։ 1947 թվականին իրականանում են բազմաժամանակ նկարչի իղձերը։ Նա վերադառնում է Հայրենիք, ուր իր տաղանդի սպաս է դնում Սովետական երկրի վերելքին։

Սովետական Հայաստանում Շիշմանյանի ստեղծագործությունը հիմնականում ընթացել է բանկարի ուղղությամբ։ Նա իր գործերում պատկերել է բացառապես նոր կառուցվող սոցիալիստական Երևանը։ Չնայած իր պատկառելի տարիքին, նա ակտիվ մասնակցում էր հասարակական աշխատանքներին։ Շիշմանյանի դրչին են պատկանում մի շարք տեսաբանական լուրջ աշխատություններ։

Բարձր գնահատելով Ռ. Շիշմանյանի ծառայությունները հայ կերպարվեստի բնագավառում, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետը 1956 թվականին նրան շնորհեց ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

ՀԱՐՏԱՐԱԳԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետության գործերի պետական կոմիտեի հուշարձանների պահպանության բաժինը կազմել է Հայաստանի ճարտարապետական և պատմական հուշարձանների մի հետաքրքիր քարտեզ, որի վրա ցույց է տրված, թե որտեղ են գտնվում այն ավելի քան չորս հազար դանազան հին հուշարձանները, որ հայտնաբերվել են ռեսպուբլիկայի տերիտորիայում։

Ներկայումս բաժնի աշխատողներ կազմում են այնպիսի քարտեզներ, որոնք ցույց են տալու Հայաստանը զարգացման տարբեր պատմական հասարակարգերում։

Դրանցից առաջինը ցույց կտա քարե դարի և պղնձե դարի ժամանակաշրջանները։ Այդ քարտեզի վրա նշվելու են հիմնականում Աշտարակի, Թալինի, Ախտալայի, Կոտայքի, Էջմիածնի, Կիրովականի, Հոկտեմբերյանի և Ալավերդու շրջաններում գտնված մոտավորապես հարյուր քաղաքատեղիներ, բնակավայրեր ու առանձին հուշարձաններ։

Հաջորդ քարտեզը ցույց կտա Հայաստանը բրոնզե դարում։ Այդ ժամանակաշրջանի մոտավորապես 400 հուշարձաններ սփռված են ամբողջ ռեսպուբլիկայի տերիտորիայում։

Կազմվում է նաև ուրարտական դարաշրջանի՝ մեր թվարկությունից առաջ Ը—Զ դարերի հուշարձանների քարտեզ, որի վրա նշվելու են այդ շրջանների քաղաքները, բնակավայրերն ու ամրոցները, մասնավորապես Կարմիր բլուրում, Արինբերդում, Արագած գյուղի (Էջմիածնի շրջան) մոտ կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվածները։

ՆԿԱՐԻՉ ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆԻ ՄԱՀԸ.— Ապրիլի 24-ին, 75 տարեկան հասակում, դադարեց բաբախել սովետական արվեստի խոշոր վարպետ՝ ժողովրդական նկարիչ, պրոֆ. Հակոբ Կոջոյանի սիրտը։ Ավելի քան կես դար անսահման նվիրվածությամբ ու հարատև եռանդով Կոջոյանը ծառայեց հայ արվեստին և հայ ժողովրդին։

Ապրիլի 27-ին տեղի ունեցավ հայկական կերպարվեստի ականավոր ներկայացուցչի պաշտոնական թաղումը։

Հակոբ Կոջոյանի աճյունը ամփոփվեց Երևանի պանթեոնում։

Նրա հիշատակը միշտ նվիրական ու անմոռաց կմնա սերունդների սրտերում։

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ